




« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նչ հոգիին ջնարգմաներ , չլուսաւորեր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ճ. ՄԻՇԼԷ



# ԱՆԱԾԻՏ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍԵԱՅ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն., Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն., Գ. Ե. Ղ. Ա. Բ. Ո. Ի. Ե. Ս. Ս. Ա. Կ. Ա. Ն.

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒՍԻ 1899

ԹԻԻ 3

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր ժողովրդին թերութեանց ամենէն տրտուրը եւ ամենէն վտանգաւորը, պատասխանատուութեան զգացման պակասն է: Ու երբեք այդ թերութիւնը այնքան բիրտ ամման մը հասած չէր որքան Հայաստանի Չարդերէն ի վեր: Խուճի մը Հայեր որոշապէս պատճառ եղան զէպքերուն փութացմանն ու աղէտքին պայթմանը, եւ ազգին վրայ հրէշային հսկայական պատուհաս մը խուժեց. օտարները, ի տես կամ նոյն իսկ միմիայն ի լուր մեր մարտիրոսութեանը, սարսափի եւ արգահատանքի աղաղակներ արձակեցին. տեսանք վեհ օրինակներ զոր տունն անոնցմէ ոմանք իրենց զթութիւնը դրապէս արտայայտելով. ոչ ոք մոռցած է ի միջի այլոց՝ դիւցազնական սիկին Մէռիէն, Տիարպէքիի հիւպատոսին կինը, որ երեք հարիւր հայ որբեր առջեւը ձգած, իր զուակներն ալ անոնց մէջ խառնած, իր անձին վտանգովը մինչեւ Իսթէնտէրուն տարաւ զանոնք՝ ազատելու համար վերահաս փորձանքէն. գիտենք ուրիշներ որոնք իրենց յուզմունքէն հիւանդացան, յիմարութեան մօտէն անցան. կիներ, գեռասի աղջիկներ իրենց երկրէն ելան մինչեւ Հայաստան դացին, վրտանգին ու ձմեռին մէջ, օգնութիւն տանելու. անհատական հիւանդի ջանքեր տեսնուեցան Եւրոպայի հանրային կարծիքը արթնցնելու. իսկ մերիւնները, անոնք որ ուղղակի պատասխանատուութիւնը ունէին, կը կարծէք որ գէպքերուն ազդեցութեանը տակ, զոնէ գիշեր մը քուններնին փախած ըլլայ: Միամիտ էք եթէ այդպէս կը կարծէք: Ոչ միայն քուններնին չը-

փախաւ, այլ ընդհանուր կսկիծին ու սուգին մէջ, այդ այլանդակ հայրենասէրները աւելի յոխորտ, աւելի անհոգ, աւելի խրոխտ ու զուարթ, այն՝ զուարթ երեւցան: Ատոնց համար արգէն ոչինչ կար կորսուած, ոչինչ կար ցաւելիք: Երբ Սուլթանը բովանդակ Հայաստանը արիւնի մէջ կը խեղդէր, Նազարէկ իր Հեչակին մէջ կը հրճուէր, կը խայտար, «Վերջապէս, կը գոչէր, հայ ժողովուրդը արթնցաւ, եւ Սուլթանը անա սահմուկած կը զողայ դիմացինս.» Պանքային ցոյցէն յետոյ, երբ 6000 հայ Չարգուեցան Պոլիս, երբ Պոլսոյ հայութեան դիրքը վերջնապէս խախտեցաւ ու քայքայեցաւ այդ քաղաքին մէջ ու ողբալի, փախտական տարտղնում մը սկսաւ զէպի օտարութիւն, Դրօշակը կը պանծար ու կը ցնծար՝ «Հի՛մա, կ'ըսէր, Սուլթանը զգաց Հայուն ուժը. . . »: Այս քստմնելի կատակը տեսեց երկայն ատեն: Ու վա՛յ այն ծիծաղելի հազուագիւտ անիմաստ Հայուն որ համարձակէր ցաւ զգալ ու տրտմիլ. անիկա «լալկան» մը, «ներքինի» մը, «պտաւ» մըն էր: Ու մանաւանդ վա՛յ աւելի հազուագիւտ ու նեղացուցիչ այն Հայուն որ համարձակէր քննադատել, սխալները ցուցնել, նոր ոճիրներ գործուելու հաւանականութեան առաջքն առնելու ջանալ. «դաւաճան» մըն էր ան: Երկու հարիւր հազար հողի մեռած. . . հարիւրաւոր վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, տուններ քանդուած, հայ տարրին թիւը նուազած ու դիրքը տկարացած, Հայուն նոյն իսկ քաղաքական յոյսերուն հիմը խախտած. . . ի՛նչ փոյթ. չնչին մանրամասնութիւններ էին ասոնք. կ'արժէ՞ր կանգ առնել այսքան փոքր զոհողութեան համար: Եւ

սուս կը խօսեիս, անդադար կրկնելով թէ ուրիշ ժողովուրդներ աւելին զո՛րած են իրենց փրկութեանը համար, մինչդեռ ոչ մէկ ժողովուրդ այսքան զոհուած ու մեասուած չէ, ու ոչ մէկ ժողովուրդ արգէն յանձն չէ առած եւ չի կրնար աւնել որ առանց հաստատ ծրագրի, առանց որոշ ուղղութեան, նոյն իսկ մեկ հոգի մը զոհ տայ: «Ի՞նչ կ'ըլլայ, կ'ըսէր Պանքային ցոյցէն քիչ յետոյ, բարիզաքնակ գործիչ մը, «ինչո՞ւ իրար անցնիլ որովհետեւ քանի մը հազար հոգի մեռեր է. լաւագոյն է որ ամբողջ ազգը ջնջուի, քան թէ արգի կացութեան մէջ մնայ»: Ըսողը մատը արիւնսած չէ երբեք դրացիին համար, եւ այս խօսքը կ'ըսէր Հայաստանէն շատ հեռու, Բարիզի սիրուն մայրիկն վրայ: Ուրիշ մը շատ աւելի ճիւղաղային բանածեւ մը գտաւ օր մը. լրագրի մը մէջ հարեանցի կերպով տեսած ըլլալով թէ անգլիացի չեմ գիտեր որ դիւանագէտը չեմ գիտեր որ միթիւնկին մէջ «պէտք է Հայոց խնդիրը կարգադրել» ըսեր է. «Օ՛, կը գոչէր, քանի որ այդպէս է, պէտք չէ անշարժ մնանք, պէտք է իսկոյն իիջ մը փայտ ետեւը կրակիս մեջ . . . : «Իիջ մը փայտ ետեւը» ըլլալ արարածին բառարանին մէջ կը նշանակէր Հայաստանի մէկ անկիւնը զէպք մը բռնկցնել եւ քանի մը հազար Հայու ջարդ յառաջ բերել . . . : Եւ այս եղանակը դեռ կը շարունակուի: Մնոնք որ իրենք գիրենք յեղափոխական կը կոչեն մեր մէջ, անդրդուելի ատելութիւնը ունին քննութեան, ուսումնասիրութեան. ուրիշ բան չես գտներ իրենց թերթերուն մէջ բայց եթէ քնարերգական բացազանչութիւններ (եւ ի՞նչ քնարերգութիւն . . .): ոչ մէկը դեռ ճշմարիտ բաղդատութիւն մը չըրաւ Պուլկարներուն, Յոյներուն կամ Կրէտէցիներուն կացութեանը եւ այն կացութեան գոր Հայերը ունին. ոչ մէկը լրջօրէն չջանաց քաղաքական աշխարհին մէջ անցած երեւոյթները ուշի ուշով զննել եւ անոնցմէ ընդհանուր յըստակ տեսութիւն մը պարզել ժողովրդին լուսաւորութեանը համար. արգէն մեր գործիչները արտակարգ գիտն ալ ըրին քաղաքականութիւնը արհամարհելու (քան մը գոր ոչ Պուլկարները, ոչ Յոյները ըրած են երբեք, ոչ ալ Կրէտէցիները ըրին): Իրենք կ'արհամարհեն եւ ըրողական դիւանագիտութիւնը, եւ բացէ ի բաց յայտարարեցին թէ Հայերը պէտք է գործեն հակառակ ամէն բանի եւ ամենուն, ընդդէմ ոչ միայն թուրքին, այլ բովանդակ Եւրոպային, ընդդէմ բովանդակ աշխարհիս . . . :

Եւ կը դատաւիտեն այն մէկ քանի խըղճամիտ անհատները որոնք, համատարած անգիտակցութեան մէջ, ուղեցին քննութեան լոյսը բերել: Ու չեն ամչնար աւազակի հայհոյանքներ հանել՝ անկեղծօրէն, անաչառօրէն մէջ բերուած փաստերու եւ խորհրդածութիւններու դէմ. . . Եւ կ'ուզեն շարունակել նոյն բանը, նոյն ձեւով — սրպէս թէ ոչինչ պատահած ըլլար . . .

Թերթի մը մէջ, որ իրեն գլխաւոր նպատակ ունի ազգին բարոյական զարգացմանը նպաստել, մենք չենք կրնար լուռ մնալ այսպիսի տխուր երեւոյթներու առջեւ: Որպէս զի ազգը իր բարոյական ու նիւթական կացութեան բարեփոխմանը գործը կարենայ լրջաբար կատարել, մեզի համար էական պարտք մը կը համարինք մատնանիչ ընել ասիկարութիւնները եւ անխղճամտութիւնները, տգիտութիւնները եւ խաբեքայութիւնները, որոնք ասպարիւն կերպով կը փճացնեն մեր ժողովրդին ուժերը, եւ «կը վտանգեն» մեր ազգային խնդրոյն իրական յաջողումը:

Մատնանիչ կ'ընենք այդ ամէնը, եւ կ'անցնինք մեր գործը շարունակելու, այն է տարր առ տարր քննել մեր խնդրոյն պատմութիւնը, անկողմնակալ ու անանձնական նայուածքով մը: Քաղաքական կացութիւնը, այն բեղմնաւոր ձեւովը զոր կ'անուէ հիմա, կը չեչաէ պէտքը այս քննութեան: Քանի որ կարեւոր զէպքեր հաւանական է որ պատահին, անհրաժեշտ է որ մենք մեզ վերէն վար չափենք ու կռնենք, տեսնենք ճշդիւ ինչ որ ըրինք եւ հետեւցնենք ինչ որ ընելու ենք: Այս թերթը, անկախ ո եւ է կուսակցութենէ, օտկան՝ խուճ մը գրագէտներու, ամենէն աւելի ազատութեամբ եւ ընդարձակութեամբ կրնայ կատարել այդ քննութիւնը, որովհետեւ իր ընելիքը կուսակցութենէ կուսակցութիւն նիզակակալու մը պիտի չըլլայ, այլ գիտական ոգով տարրալուծում մը զէպքերուն ու գործերուն, ո՛վ ալ ըլլան հեղինակները եւ շարժառիթները: Մեր քննութիւնը մենք պիտի չմասնաւորենք միայն վերջին տարիներու գործիչներուն վրայ, այլ պիտի սկսինք սկզբնաւորութեանէ, համբաւաւոր ճարտար յողումներ պատմութեանէ, որ աղբիւրն է բոլոր այս վերջին զէպքերուն: Եւ մենք ուրիշներուն վարդապետական ինքնահաւանութիւնը չունինք. առաջուց կ'ընդունինք որ կրնանք սխալած ըլլալ մեր դատողութեանց ու եզրակացութեանց մէջ. եւ եթէ անկեղծ ու

ձեռնհաս քննադատներ երեւնան որ ուզեն ճշգրել մեր սխալները , պատրաստ ենք մեր էջերուն մէջ իրենց լուսաբանութիւնները հրատարակել : Ու պիտի տեսնուի թէ , սկիզբէն ի վեր , անոնք որ հայրենասիրութիւնը իրենց մենայնորհ ըրած են , անոնք որ թմբուկով ու փողով ազգին փրկիչները հռչակած են իրենք զիրենք , վնասակար եղած են յաճախ , անգիտակցաբար կամ գիտակցաբար , մինչդեռ այն սակաւթիւ հանդարտ ու խոհական մտքերը որոնք , հանդիսաւոր պողտուքներուն մէջ , համարձակած են լուրջ քննութեան մը արդիւնքը ներկայացնել , « դաւաճան » ու « լալկան » համարուած են միշտ , առաջ ինչպէս հիմա :

\* \* \*

Երկու ամսէն , Ս. Բեդերսպուրկի մէջ , պիտի գումարուի վեհաժողով մը , ուր եւրոպական մեծ առկախ խնդիրները պիտի ծեծուին՝ համաձայնութեան մը հասնելու նպատակով : Ծիշդ քսան տարի առաջ , նոյն բանը տեղի կ'ունենար Պէրլինի մէջ , ուր բազմաթիւ խնդիրներ վիճուեցան ու լուծուեցան , եւ ուրիշներ ալ արձանագրուեցան ու չլուծուեցան (ինչպէս մեր խնդիրը) : Ապշեցուցիչ բան մըն է որ քսան տարիէ ի վեր , ոչ մէկ Հայ մը գաղափարն ունեցած չէ մանրամասնաբար քննել Պէրլինի վեհաժողովին միջոցին Հայոց ձեռնարկած գործունէութեան պատմութիւնը : Եւ սակայն , վիթխարի սխալներ գործուած են այդ շրջանին , եւ այդ սխալները երեւան հանելը պէտք էր առաջինն ըլլար մեր ջանքերուն : Մենք համոզուած ենք որ եթէ այդ քննութիւնը կատարուած ըլլար , վերջին շրջանին մէջ գործուած սխալներէն շատերը տեղի չէին ունենար : Այսօր որ սխալներուն կսկծալի հետեւանքին մէջն ենք , այլ եւս լուռ մնալը ոճիր մը պիտի ըլլար : Պէտք չէ՛ որ վաղը նորէն կրկնենք միեւնոյն սխալները :

\* \* \*

1877ին տեղի ունեցաւ ռուսօ-թրքական պատերազմը , եւ այդ մեծ զէպքին բազմաթիւ արդիւնքներէն մէկը եղաւ « Հայկական խնդիր » ըսուածին ծագումը : Ի՞նչ էր կայութիւնը այդ միջոցին : Հայերը , ամբողջ օսմանեան պետութեան մէջ ,

զօրաւոր զիրք մը ունէին : Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի մէջ , տնտեսապէս բարգաւաճ էին , հողային կարեւոր տարածում մը ձեռք ձգած էին , մէկ քանի կեդրոններու մէջ հոծ մեծամասնութիւն ունէին , եւ շնորհիւ աւանդական խորագէտ վարմունքի մը , ոչ միայն առեւտուրն ու արհեստները բռնած էին , այլ բարոյական մեծ ազդեցութիւն կը վայելէին տեղական թուրք կառավարութեան մօտ : Մեծ Հայաստանի մէջ , կեանքը նոյնչափ հեշտ չէր Հայոց համար . Բիւրտին , Չէրքէզին ու թուրք պաշտօնեային լուծը Հայուն նիւթական ու բարոյական զարգացումը կը դժուարացնէր հոն . բայց հոն ալ կացութիւնը գոհացուցիչ կողմեր ունէր եւ չափազանց լաւագոյն էր հիմակուանէն . ամբողջ մահմետական տարրը Հայուն դէմ ուղղակի ատելութիւն չունէր . Բիւրտին ու Չէրքէզին աւազակային յարձակումներուն ենթակայ էր , հայ գիւղացիին չափ , թուրք գիւղացին ալ : Բիւրտինն իսկ մեծամասնութեամբ , — բացի միմիայն յափշտակութեամբ ապրող կատաղի ցեղերէ , — Հայոց հետ հաշտ էին , եւ նոյն իսկ աւելի Հայուն բարեկամ քան Թուրքին . Բիւրտը (այս մանրամասնութիւնը յատկանշական է) իր հեռու տեղ զրկելիք նամակները Հայուն գրել կուտար : Եւ եթէ գիւղերու մէջ , տեղ տեղ , քիւրտ կամ չէրքէզ աւազակը , կամ թուրք պաշտօնեան , հայ կամ թուրք գիւղացին կը կեղեքէր , քաղաքներուն մէջ , հայ աղան մեծագոր էր եւ իր ազգին չահերը կրնար յարգել տալ՝ եթէ ուզէր : Պոլսոյ մէջ , Հայը , Թուրքէն յետոյ , առաջին տեղը կը գրաւէր : Սուլթան Ազիզի օրով , Հայը պետական ամենաբարձր պաշտօններու հասաւ , եւ վայելեց իբր ազգ , Պոլսոյ մէջ , գրեթէ բացարձակ ազատութիւն . Տատեանները , Պալեանները , Տիւղեանները , Բէօզէքները , Սերվիչէն , Օտեան , Աղաթօն , Պոլսոյ հզօր անձնաւորութիւններէն էին . Հայը կառոյց Պոլսոյ գեղեցկապոյն պալատները , Հայը սկսաւ եւրոպական քաղաքակրթութեան թուրք տարրին մէջ մուտքը դիւրացնել , իբր դասախօս , իբր հրապարակագիր , իբր արուեստագէտ , իբր պետական խորհրդական , իբր թատերապետ եւ իբր վաճառական . եւ իրեն թոյլ տրուեցաւ ունենալ իր սահմանադրական ուրոյն վարչութիւնը , իր թատրոնը (ուր , քնացող զբոսաքննութեան մը քթին , հայկազեան թագաւորութեան մը վերականգնումը կ'երգէին ժամանակին բոլոր պուէսները) , իր սանձարձակ լրագիրները , եւ ամէն միջոց՝ կրթական շարժու-

մը կազմակերպելու : Կարելիութիւն կար , այդպիսի պայմաններու մէջ , ազգային վերածնութեան գործը կամաց կամաց՝ ձեռքի տակէ՝ հասունցնելու : Եւ մասամբ , Հայերը կատարելին այդ գործը : Առաջին քայլը շատ լաւ առնուեցաւ : Խուճը մը եւրոպականացեալ Հայեր ուզեցին ազգին բարոյական զարգացումը զօրացնել . թատրոնը գեղարուեստական զգացումը մշակեց , լրագիրը , պիւքը , լսարանը գաղափարներու հոսանք մը բերին , դպրոցը կանոնաւորապէս պատրաստուած նոր սերունդ մը հասցնել ջանայ , եւ ամենքը մէկէն ընդարձակեցին ու բորբոքեցին ժողովրդին մէջ ազգային զգացումը , դարուն սկիզբէն ի վեր արդէն արթնցած : Այդ ամբողջ գործունէութիւնը , շատ աղնիւ ու փայլուն , անթերի չէր անշուշտ . յիշխը աւելի տեղ կը բռնէր հոն քան անհրաժեշտ հացը . դեռ նոր կարգով սկսող ժողովրդի մը՝ պարար քերթուածներ , ահազեմական ճառեր կամ մեծաթխոր դիւցազներգութիւններ կը հրամցնէին . Հայաստանի հին պատմութիւնը կ'երգէին ( եւ ազէկ կ'ընէին , ) բայց շատ քիչ ջանք կը ցուցնէին արդի Հայաստանը աշխարհադրապէս , քաղաքականապէս ուսումնասիրելու . հին դիւցազունները կը քերթէին , հերոսական զգացումներ կը ներշնչէին ( եւ ազէկ կ'ընէին ) , բայց ոչինչ կը փորձէին տակաւ առ տակաւ վարժեցնելու համար ամէն հայ անհատ՝ իր անձը յարձակման մը դէմ զէնքով պաշտպանելու : Դպրոցներէն ելան սերունդներ , խանդավառ ու թերուս . իրենց հայրերը աշխատասէր , հնարագէտ , ճարտարագործ ու խոհեմ մարդիկ էին , ասոնք յաւակնոտ գաղափարականներ եղան , գրքի կտորուանքներով շինուած . ասոնք Հռոմայեցեաց պատմութիւնը գիտէին եւ Հիւլիո կարդացած էին , բայց ժամանակին քաղաքականութեան վրայ տարտամ գաղափար մը ունէին : Եւ այդ ամենքը Սահմանադրութիւնը կը տօնէին այնպիսի ուսուցիկ աւելնով մը՝ որպէս թէ Հայոց հինգերորդ Հարստութեան ամըրը ըլլար : Եւ որովհետեւ Յունաստանը ազատած էր Եւրոպայի շնորհիւ , այդ ամենքը հանդարտօրէն կը սպասէին այն ժամուն ուր Եւրոպան պիտի գար , յանկարծակի , Հայուն ազուրը աչքերուն համար , Հայաստանն ալ ազատի : Եւ կ'երգէին յուսալից ու վստահ՝ « Թողայ հիմանց նոր Սյրարաա . . . »

Աւելորդ է ըսել թէ երբեք չեմ հկատեր այդ չըջանը իբր ոսկեղար մը , իբր նախանձելի եւ կատարեալ վիճակ մը : Թուրքը թոյլ էր

Հայուն հետ այդ միջոցին , որովհետեւ ինքզինքը դեռ շատ հզօր կը զգար եւ Հայն ալ նիւթապէս շատ տկար , եւ անոր երգերն ու ճառերը քմծիծաղով մը կը ներէր . եւ Հայը ունէր գաղափարական ազատութիւն մը միայն , Թուրքին գարշապարը միշտ անոր գլխուն վրայ էր . իր մատուցած ծառայութիւններուն համար սիրուած ու նոյն իսկ շփացուած ստրուկն էր Հայը որուն երեսին տրուած գգուանքը կրնար ուզուած վայրկենին ապտակի փոխուիլ . եւ արդէն Թուրքը , աւելի խորամանկ քան ռոմանդիկ Հայը , մէկ կողմէ այդ առերեւոյթ ազատութիւնը տուած ատեն , միւս կողմէ սկսած էր , մութին մէջ , խորհիլ այն միջոցներուն զօր պէտք էր ձեռք առնել արգիւելու համար որ Հայերը երգէն անդին շանցնին : Միայն՝ այդ չըջանին անուրանալի առաւելութիւնները կը նշանակեմ , ցուցնելու համար թէ ո՛ր աստիճան կարելիութիւն կար Թուրքին դանդաղ ներդրումութեան օգուտ քաղելու եւ թէ ո՛րչափ միջոցները քիչ օգտուած են : Այս տողերը թող դատապարտութիւն մը չհամարուին մեր այդ չըջանին գործիչներուն . ռոմանդիկ օրերու այդ կրակոտ մարդիկը ըրած են ամէն ինչ որ կրնային , եւ ոմանք իրենց ընել կրցածը շատ աղնիւ , շատ գեղեցիկ կերպով ըրած են . բայց պարտաւոր եմ հաստատել սա իրողութիւնը թէ չեն ըրած ամէն ինչ որ պէտք էր :

Եւ սակայն , բոլոր այդ քնարերգականներուն հոյլին մէջ որ Սրարատը կ'երգէին եւ Մեծ Հայաստանը ազատել կ'երազէին , Լոռիս Մելիքօֆ , որ Ռուսիոյ ամենէն հզօր եւ ամենէն սիրուած անձնաւորութիւնն էր այդ միջոցին , ըսած էր հետեւեալ բառերը , որոնք պատմական են , եւ որոնք պէտք էր ազգին գործիչներուն նշանաբանը ըլլային՝ «Վերը բան մի՛ յուսաք , ան մեզի պէտք է , վարը բան մը ըրէք , հոն մենք ալ թերեւս ձեզի կ'օգնենք» : Պէտք կա՛յ բացատրելու այդ «վերն» ու «վարը» : Արդար ըլլալու համար , հարկաւոր է յիշել հոս որ մաս մը Հայեր , — որոնց արտայայտիչը եղաւ Մերձնց իր վէպերով եւ անձնական գործունէութեամբ , — այդ «վեր»ի ու «վար»ի ինդիքը հասկցած էին , եւ փորձեցին պատրաստել «վարը» , Կիլիկիան , այն միակ կեդրոնը ուր Հայերուն համար հաւանականութիւն կար ուրոյն դոյութիւն մը ձեռք ձգելու : Ծրագիրներ չինուած էին , Կիլիկիան ընկերութիւնը հիմնուած էր , Կիլիկիոյ մէջ հողեր գնելու , Հայոց թիւը աճեցնելու միջոցները խորհուած էին . միակ լուրջ

փորձը զոր Հայերը այս ամբողջ դարուն մէջ ուրուագծած ըլլան : Փորձը ուրուագծի վիճակի մէջ մնաց : Եկաւ ոուսո-թրքական պատերազմը , եւ հայ ժողովրդին վարչութիւնը ձեռքբերին ունեցող անձերը գործեցին մեր պատմութեան ամենէն կարեւոր սխալներէն մէկը , եւ որ հիմնաքարը եղաւ բոլոր միւս սխալներուն :

Մինչեւ Ռուսին Սան-Սթէֆանո համալիր , բոլոր թրքահայերը , առանց բացառութեան , հակառուս էին . Ռուսաստանը այդ միջոցին կը նկատուէր կիսավայրենի եւ բռնաւոր երկիր մը . ոուս կառավարութիւնը «ազգակուլ» կ'անուանուէր . այդ կարծիքը տարածուած էր Բոլոնիոյ մէջ Ռուսին բռնած ընթացքին հետեւանքով , եւ այդ կարծիքը շեշտուած էր Խրիմի պատերազմին առնելով , երբ Ֆրանսա , Անգլիա եւ Իտալիա թուրքը պաշտպանեցին ընդդէմ Ռուսին , հուշակելով թէ «քաղաքակրթութիւնը կը պաշտպանեն ընդդէմ բարբարոսութեան» : Պոլսոյ Հայոց թատրոնին մէջ խորհրդանշանական տեսարաններ ներկայացուած են , ուր Նալբանդեանի ուրուականը անէծք կը կարդար Ռուսիոյ դէմ եւ երանի կուտար թրքահայոց որ օսմանեան լուսաւոր (1) հովանոյն սակ կապրին :

Այսպէս ըլլալով հանգերձ , Ներսէս վարժապետեան պարտաւարքը , այդ հզօր ու կուտակուած ոուսատեցութիւնը մէկ հարուածով խզեց , ու Սան-Սթէֆանո , ոուսական բանակը երթալու յանդգնութիւնը ունեցաւ , թուրքին ծանր լուծէն դանգատ յայտնեց իր ազգին կողմէ , Ռուսին պաշտպանութիւնը խնդրեց , եւ Սան-Սթէֆանոյի դաշնագրին մէջ 16րդ յօդուածը յաջողեցաւ դնել տալ :

Այդ յանդգնութիւնը վարժապետեանին վառքի տիտղոսն է . այդ դիմումով , վարժապետեան նոր թուական մը բացաւ հայ ժողովրդին . կրօնական գոյութիւն ունեցող ազգը քաղաքական կուտանի մը վրայ դրաւ . Հայուն շահերուն եւրոպական հզօր պաշտպան մը գտաւ , Ռուսը : Բայց այդ առաջին քայլը միակ ուղիղ քայլը եղաւ : Անկից յետոյ , ամէն ինչ որ վարժապետեան ըրաւ , եւ ամին ինչ որ իրեն հետ , եւ իրմէ ետքը , Հայերը ըրին , այդ քայլին ջրնջումը եղան , եւ սխալներ էին : «Սան-Սթէֆանոյի դաշնագրին մէջ 16րդ յօդուածը դնել տալու յաջողիլը , ըսած է Պերլինի վեհաժողովէն առաջ Նուպար փաշա Պ. Մինաս Զերազին , այնպիսի գործ մըն է որուն համար հայ ժողովուրդը ոսկի արծան մը պէտք է կանգնէ Ներսէսի յիշատակին » : Բայց Սան-Սթէֆանոյի դիմումէն

յետոյ , Ներսէսի ընթացքը քրէական սխալներու շարք մը եղած է , եւ նոյն Նուպար փաշան կ'ըսէր ինծի , Հայաստանի կոտորածներէն յետոյ « Այս բոլոր ջարդերուն գլխաւոր պատասխանատուն Ներսէս Պարտիարքն է » :

Թուրք կառավարութիւնը , Ներսէսին խիզախ վարմունքէն սաստիկ զայրացած ըլլալուն հակառակ , իր կատարութիւնը կուլ տուաւ եւ որոգայթ մը լարեց՝ մեծ ճարտարութեամբ Հասկըցաւ որ այդ միջոցին , Ներսէսը նեղելով , աւնոր ոուսասէր ձգտումները պիտի քաջալերէր , եւ ամբողջ հայ ժողովուրդը իր պետին հետ Ռուսին գիրկը պիտի նետէր : Կեղծեց , անուշ ու հայրական ձեւ մը առաւ , եւ պատրաստեց կատակերգութիւն մը , որ , աւա՛ղ , շատ փայլուն կերպով յաջողեցաւ : Այդ խաղին յաջումներ մէջ կարեւոր դեր մը ունեցան կառավարական պաշտօն ունեցող քանի մը Հայեր , ինչպէս Յովհաննէս Նուրեան , եւն . որոնք զիտակցաբար միջնորդի եւ մատնիչի դեր կատարեցին . ուրիշներ անզիտակցաբար ծուղակն ինկան եւ թուրքին գործը շինեցին՝ Հայուն փրկութեանը աշխատիլ կարծելով . ասոնցմէ էին վարժապետեան եւ իր խորհրդականները , Գրիգոր Օսեան , Սէրվիչէն , եւն : Այս յարգելի անձնաւորութեանց ազգասիրութեանը եւ անկեղծութեանը վրայ տարակոյս մը ծնցնել մտքէս չեմ անցըներ . բայց որքան ալ դառն ըլլայ սիրուած հէքեաթները քանդել , ատի պարտք մըն է որուն առջեւ չեմ կրնար խուսափիլ . այդ ազգասէրները չարաչար խաբուեցան եւ սխալ գործեցին :

Թուրք կառավարութիւնը , իրեն կոնակ ունենալով Անգլիան որ կ'ուզէր Ռուսիան հանել բարձր Հայաստանէն , Ներսէսը պաշարեց քաղցրը եւ չողջողուն խոտուումներով : Իր հայ էֆէնտիները համոզեցին Ներսէսը թէ թուրք կառավարութիւնը մտադիր է Հայոց չնորհել շատ աւելին քան ինչ որ Ռուսին ձեռքով պիտի ըստանային , եւ թէ անխոհեմութիւն էր դիրկը ինչալ «ազգակուլ Ռուսին» . միւս կողմէ , զգացուցին այն վտանգը որ կը սպառնար հայ ժողովրդին , եթէ Ներսէս յամառէր իր ոուսասիրութեան մէջ . պէտք էր վախնալ թուրքին զայրոյթէն , Հայերը ամբողջ կրնային կոտորուիլ : Ներսէս զգրդեցաւ , համոզուեցաւ : Այդ միջոցին , Պերլինի վեհաժողովը կը գումարուէր թուրք կառավարութիւնը ինքնաբերաբար թող տուաւ Ներսէսին որ պատգամաւորութիւն մը զրկէ հոն եւ իր պահանջը ներկայացնէ Եւրոպային : Նոյն իսկ արտօնեց որ պատգամաւոր-

ներուն եւ Պատրիարքարանին մէջ ծածկագրով թղթակցութիւն կատարուի . . . ա՛լ ասիկա կատարն էր հեգնութեան . Թուրքը , որ իր էֆէնտիններուն միջոցով պիտի իմանար Ներսէսին ամէն մէկ շարժումը , արտաքուստ՝ գործելու բացարձակ ազատութիւն տալու ձեւը կ'առնէր . եւ Ներսէս խարուեցաւ . իրեն հետ խարուեցան Օտեան , Սէրվիչէն եւ ուրիշ խորհրդականներ : Եւ այն ատեն է որ հանձարեղ անմտութեան գաղափար մը ունեցան . կարծեցին որ Թուրքը իր վերջնական տկարացումը զգալով , իրապէս կ'ուզէր առանձնաշնորհումներ տալ Հայոց , եւ մտածեցին թէ փոխանակ Ռուսին միայն անձնատուր ըլլալու եւ « կլուելու » վտանգին ենթարկուելու , լաւագոյն էր Թուրքին տկարութենէն օգտուիլ , Եւրոպայի վեց պետութեանց միանգամայն դիմել եւ ստանալ շատ աւելի կարեւոր բան մը քան ռուսական գրաւումը , — հայկական անկախութիւն մը . . . : Եւ կարծեցին որ Անգլիան , Ռուսիոյ տիրապետութեան առաջը առնելու համար , պիտի օգնէր Հայոց բաղձանքին իրականացմանը , եւ իր ազդեցութիւնը ի գործ պիտի դնէր Ռուսիոյ առջեւ իբր պատուար այդ հայկական եղա-քաւթոնը կազմելու համար : Շատ սակաւաթիւ քանի մը Հայեր , ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչներէն , լարուած դաւը զգացին , եւ փութացին զգուշացնել Ներսէսը : Ներսէս չանսաց , եւ նոյն իսկ վճռեց զանոնք : Երեսփոխանական ժողով չգումարեց , ազգին կարծիքը չհարցուց իր ձեռնարկելիք գործին վրայ որմէ կախեալ էր ազգին ճակատագիրը . կարծեց որ այդպէսով պիտի ձայնաւորէր ու վտանգուէր իր ծրագիրը . իր էֆէնտիններուն հետ գլուխ գլխի որոշեց ամէն բան եւ գործադրեց անկախաբար : Պատգամաւորութիւն մը ճամբայ հանեց զէպի Պերլին . այդ պատգամաւորութեան գլխաւոր անդամն էր Խրիմեան Հայրիկը , խանգավառ հայրենասէր մը որ քաղաքագէտ մը չէր սակայն , իրեն թարգման ունենալով Պ. Մինաս Չերազը , խանգավառ հայրենասէր մը՝ երիտասարդ ու անփորձ այդ ահարկու պաշտօնին համար : Ծիչդ այն միջոցին որ այդ պատգամաւորութիւնը ճամբայ կ'ելլէր , անդին արդէն աղետաւոր սխալը կը գործուէր . Սան-Սթէֆանոյի դիմումէն անմիջապէս յետոյ , Ներսէս ըսքանչելի գաղափարն ալ ունեցած էր Խորէն Նարպէյ եպիսկոպոսը պաշտօնապէս Ս. Բեզերսպուրկ զրկելու որպէսզի Չարին ներկայանայ եւ Հայոց համար Ռուսիոյ պաշտպանութիւնը խնդրէ աւելի ընդարձակ պայմաններով : Խրիմ-

եան դեռ Պերլին հասած չէր երբ Ներսէսի կողմէն հեռագիր մը կը մեկնէր Նարպէյին ետեւէն ծանուցանելու համար անոր թէ պաշտօնական մանսա մը չունի Չարին ներկայանալու , եւ միանգամայն , վախնալով թէ Նարպէյ , հակառակ այդ ազդարարութեան , չելլէ դարձեալ Չարին դիմէ՝ պաշտօնական ձեւ տալով իր դիմումին , Մասիս լրագրին մէջ բացայայտ ծանուցում մը կը հրատարակուէր թէ Նարպէյ եպիսկոպոսը Չարին ներկայանալու համար Հայոց պատրիարքին կողմէ պաշտօն չէ ստացած , եւ Մասիսի հրատարակութիւնը եւրոպական բոլոր թերթերը կ'արտատպէին : Թուրք կռուավարութեան զրգումն էր որ ի գործ կը զրուէր : Եւ անա առաջին ոճիրը հայ ազգին դէմ գործուած : Հայոց կողմէ ատիկա նախատինք մըն էր Ռուսիոյ դէմ : Ռուսիոյ բանակը երթալէ եւ ռուսական պաշտպանութիւնը խնդրելէ յետոյ , Ներսէս պաշտօնապէս ետ կ'առնէր իր դիմումը , կ'ուրանար իր նախկին ընթացքը : Պերլինի մէջ , պատգամաւորները աւելի առաջ գացին . Խրիմեան բացէ ի բաց յայտարարեց թէ Հայերը ուղղակի զժգոհութիւն մը չունին Թուրք կռուավարութենէն , թէ Թուրքն ալ Հայուն չափ կը չարչարուի Գիւրտին ու Չէրքէզին ձեռքէն , թէ Հայոց խնդրածը ուրիշ բան չէ բայց եթէ բարենորոգումներ , եւ թէ Հայերը չեն ուզեր « ազգակուլ » Ռուսին ճանկը իյնալ : Նոյն բանը գացին կրկնել Լոնտոն , Խրիմեանի յայտարարութիւնները հրատարակուած են այն ատենուան Պիլ-պուրետուն մէջ : Հետաքրքիր եզոզները կրնան թղթատել այդ Պիլպուրետը : Ատով հայ ազգը խորապէս կը վիրաւորէր ռուսական զօրութիւնը , այսինքն այն գորտքիւնը որ Հայոց պաշտպանութիւնը ըստանաւ եր որակաւ յօրուածով մը , եւ այն գորտքիւնը առանց որուն կախիկն անհնար է որ Հայոց բաղդը վճռուի : Եւ մեր պատգամաւորները կը յուսային որ իրենց այդ զոհողութեանը , այդ յանդըգնութեանը փոխարէն , Անգլիա , եւ Անգլիոյ հետ՝ ամբողջ արեւմտեան Եւրոպան , Հայոց պիտի շնորհէր թաղաւորութիւն մը , Ռուսին առջեւ պատնէշ կանգնելու համար : Եւ միամտաբար կը բացատրէին Անգլիացոց այն շահը զոր Անգլիա ունի Հայոց անկախութիւն շնորհելու . անգլիացի դիւանագէտները ժպտելով մեր պատգամաւորներուն ուսը կը չոյջէին , եւ մեր պատգամաւորներն ալ Պոլիս կը ծածկագրէին թէ « ամէն բան կարգին է » : Եւ ասիկա կը պատահէր այնպիսի շրջանի մը ուր

ուս կառավարութիւնը իրապէս համակրութիւն ունէր Հայոց համար . Ալեքսանդր Բ. կայսրը Հայոց վրայ կը գուրգուրար . Լորիս Մելիքով Հայը Ռուսիոյ մէջ մեծագոր էր . եւ Կորչաքով կը կրկնէր իր համբաւաւոր բանաձեւը՝ anatomie ou autonomie, այսինքն պէտք է թուրքիան կ'մ բաժնել կ'մ ինքնավարութեանց վերածել . Մինչեւ այդ վայրկեանը Ռուսիա ուղղակի քաջալերած էր թուրքիոյ Հայոց զարթման շարժումը . իր Հայերուն թոյլաւորած էր գրել բոլոր այն վէպերը, հրգերը եւ յօդուածները որոնք թուրքին լուծին դէմ կը գրգռէին թրքահայերը . եւ Լորիս Մելիքով իր « վարը բան մը ըրէք, թերեւս մենք ալ կ'օգնենք»ովը ուս կառավարութեան գիտաւորութիւնները ընդհարել տուած էր Հայոց : Եւ յայտնի իրողութիւն մըն էր որ թուրքին լուծէն փրկուած միւս քրիստոնեայ ազգութիւններուն ազատմանը մէջ Ռուսը ամենէն իրական մասնակցութիւնը բերած էր . անշուշտ իր հեռուոր նպատակակէտը ունենալով՝ բայց գործած եր, եւ արդիւնաւորապէս : Եւ այդ վայրկեանին իսկ որ մեր պատգամաւորները Ռուսին վրայ կը շարախօսէին, ուսական բանակը հայ հողին վրայ էր, Հայը թուրքին ու Քիւրտին դէմ վճռականապէս ապահովելու պատրաստ ու կարող : Սան Սթէֆանոյի 16րդ յօդուածը լուրջ հիման մը վրայ կը կրթնէր . Ռուսը կը պնդէր որ բանակը պիտի չվերցնէ հայկական նահանգներէն մինչեւ որ Հայոց կացութիւնը արմատապէս չբարւոքի : Այս բոլորին փոխարէն, մեր պատգամաւորները կը նախատէին Ռուսիան : Եւ անարկութիւն ալ կարելի չէ ընել թէ այդպէս ընելով թուրքին բարկութեան առաջքն առին եւ ջարդերու հաւանականութիւնը ջնջեցին . այդ միջոցին ուս բանակը Սան Սթէֆանօ կը գտնուէր եւ անգլիական նաւատորմին ալ Պոլսոյ առջեւ . թուրքը չէր կրնար ջարդելու համարձակիլ : Չեմ ըսեր որ Հայերը պէտք էր տարամերժաբար Ռուսիոյ փարէին . կրնային Ռուսիոյ դիմած ատենին, միանգամայն եւրոպական միւս պետութեանց պաշտպանութիւնն ալ խնդրել . բայց իրենց պարտքն էր ձեռքէ չհանել ուսական պաշտպանութեան արդէն ստացուած ու գրական խոստումը . մտածելու էին որ, կը կրկնեմ, ինչ ալ ըլլայ Ռուսիոյ արամազրութիւնը Հայոց մասին, առանց Ռուսիոյ կամքին ոչինչ կարելի է ընել Հայոց համար :

Եւ ի՞նչ էր այն ծրագիրը զոր կը ներկայա-

ցնէին պատգամաւորները : Որպէս թէ պարզ բարենորոգումներ կ'ուզէին, բայց աղաչաւոր փափառքով մը, եւ աչքի քթթումով մը կը հասկցնէին թէ փափաքածնին ուրիշ բան չէ բայց եթէ հայկական թագաւորութիւն մը, Վանէն մինչեւ Զէյթուն, Ռուսիոյ դէմ պատուար ըլլալու համար . . . . Եւ ի՞նչ ստացան : Ոչինչ : Վեհաժողովին մէջ եւ ոչ իսկ վիճաբանութեան առարկայ եղաւ Հայոց խնդիրը, որովհետեւ ոչ մէկ պետութեան ներկայացուցիչ զայն իր վրայ չառաւ պաշտպանել . եւ շատացան պարզ փոքրիկ անմեղ արձանադրութեամբ մը . 61րդ յօդուածը շարագրեցին, որ հեղուութիւն մըն է՝ բաղդատմամբ Սան Սթէֆանոյի 16րդ յօդուածին . 61րդ յօդուածը կ'ըսէ թէ Բ. Դուռը յանձն կ'առնէ բարենորոգումներ մտցնել (անյապա՛ղ) Հայերէ քնակուած գաւառներուն մէջ (Սան Սթէֆանոյի 16րդ յօդուածին Հայկական ևս հանգներ բացատրութիւնը կը ջնջուէր արդէն) եւ իր ձեռք առած միջոցները հետզհետէ իմացընել եւրոպական պետութեանց : Գիտենք թէ Բ. Դուռը ինչպէս գործադրեց իր խոստումը : Եւ ինչո՞ւ գործադրէր, քանի որ 61րդ յօդուածը չէր ըսեր թէ, այն պարագային ուր Բ. Դուռը պարտագանց մնար, Եւրոպան ի՞նչ պիտի ընէր : Բ. Դուռը, որ կը սոսկար տեանելով թէ Ռուսիան անձնապէս Հայոց գործը վրան առնել կ'ուզէ, անհոգ էր երբ այդ գործը կ'անցնէր եւրոպական վեց պետութեանց ձեռքը, որոնք պիտի չկրնային համաձայնիլ այդպիսի խնդիր մը լուծելու համար :

Այսչափով չ'աւարտիր սակայն Ներսէս պատրիարքին պատմութիւնը : Ուրիշ մաս մըն ալ կայ : Այն պահուն ուր պատգամաւորները Պերլին էին, Նուպար փաշա Բարիզ կը գտնուէր : Եզրպտոսի նախարարապետը իր համբաւին ու տաղանդին բարձրագոյն զարգացմանը հասած էր . բովանդակ Եւրոպա կը ճանչնար զինքը, Պիքընսֆիլտ զինքը անուանած էր «ճշմարիտ պետական մարդ» մը . ամբողջ Անգլիա զանի կը սիրէր ու կը գնահատէր : Նուպար փաշա իմանալով որ Հայերը Պերլինի Վեհաժողովին պատգամաւորութիւն մը կը զրկեն, կը փութայ ծրագիր մը պատրաստել հայկական գաւառներու բարեկարգման մասին : Այդ ծրագիրը (զոր թերեւս հրատարակենք մեր յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ) արդիւնք է գիտական ուսումնասիրութեան մը եւ կը ներկայացնէ բացարձակապէս իրականանալի պայմաններ . անոր մէջ ոչ մէկ կէտ կայ որ վիրաւորէ այս ինչ կամ այն

ինչ պետութիւնը, ոչ իսկ բառ մը որ թուրք կառավարութիւնը գրգռէ. յատակագիծ մըն է կանոնաւոր վարչութեան՝ հայկական նահանգներուն համար, եւրոպական միջազգային երաշխաւորութեան տակ, կազմակերպուած՝ եւրոպական ուղղիչ ուժերով: Նուպար փաշա կ'ուզէր կերպով մը կրկնել Հայաստանի մէջ ինչ որ փորձած եւ յաջողած էր Եգիպտոսի մէջ. — հաստատել եւրոպական արգարութիւն մը եւ վարչութիւն մը՝ հայկական գաւառներուն մէջ: Ոչ մէկ ազգայնական շեշտ ունի ծրագիրը, ոչ մէկ ակնարկութիւն անկախութեան. բայց Նուպար կ'առաջարկէր թրքահպատակ քրիստոնեայ կուսակալ մը եւրոպացիներէն վաւերացուած, եւ թերեւս կը մտածէր որ ամբողջ ազգը ուշիմութիւնը պիտի ունենար այդ պտշտօնը յանձնել իրեն որ միակ կարողն էր այդ գործին. եւ ինքը գիտէր որ երբ արգարութիւնը եւ հաւասարութիւնը լրջօրէն տիրել տար թուրքիոյ հայկական նահանգներուն մէջ, հայ տարրը պիտի աճէր, զօրանար եւ իր ինքնութիւնը ինքնին պիտի գտնէր: Անշուշտ Նուպարի ծրագիրը արգելքներու պիտի հանդիպէր. Ռուսիա, որ չ'ուզէր Տաճկաստանի բարեկարգումը՝ որպէս զի օր մը կարենայ զրաւել, պիտի խոչընդոտ յարուցանէր այդ ծրագրին գործադրումին. բայց այդ չըջանին, արեւմտեան Եւրոպան շատ զօրաւոր էր, եւ ինչպէս ուրիշ կէտերու մէջ, այդ կէտին վրայ ալ կարելի էր որ Ռուսին յաղթէր եւ այդ ծրագրին գործադրութիւնը իրականացնէր, մանաւանդ որ արեւմտեան Եւրոպան իրապէս կը փափաքէր որ Տաճկաստան բարեկարգուի: Ամէն պարագայի մէջ, Նուպար փաշային միջամտութիւնը թանկագին առիթ մըն էր, եւ եթէ Ներսէս յանդրգնութիւնն ունեցած ըլլար Նուպարը նշանակելու իբր Հայոց պատգամաւոր, տարակոյս չկայ թէ Նուպար աւելի աղէկ պիտի գիտնար Հայոց խնդրոյն համար գործնական արդիւնք մը ձեռք ձգել քան Խրիմեան Հայրիկը: Նուպար ներկայացուցած էր իր ծրագիրը Բարիզի դերմանական դեսպան Հոնէնլոնէ կոմսին, որ սքանչացում յայտնած էր, եւ անգլիական դեսպան Լորտ Լայընսին, որ գոչած էր՝ «Ասիկա բանալին է Արեւելեան խնդրոյն»: Այս ծրագիրը ընդունիլը տարբեր ուղղութիւն մըն էր Ռուսիոյ պաշտպանութեանը նկատարկութիւն. բայց նմանապէս գործնական ճամբայ մըն էր, եւ անմիջական արգիւնքներ խոստացող: Նուպար զրկեց իր ծրագիրը Ներսէս պատրիարքին եւ

խնդրեց որ իրեն պաշտօն տրուի երթալ Պերլին անձամբ ներկայացնել իր ծրագիրը ազգին կողմէ: Ներսէս մերժեց: Թուրք կառավարութիւնը չէր ուզեր բնականաբար որ Նուպար մը անցնի Հայաստանի գլուխը. եւ թուրք կառավարութեան ուզածը կատարուեցաւ: Ու Ներսէս իր մտերիմներուն բացատրելով այդ մերժումին պատճառը, կ'ըսէ եղեր թէ Նուպար միմիայն վարչական բտրենորդումներ պահանջած է, մինչդեռ ինքը յանուն ազգին անկախութիւնն փորձեց պահանջել . . . :

Ու պատգամաւորները դարձած են յաղթական, ցնծագին, աւետաւոր: Ամբողջ Հայութիւնը, թունդ ելած, կը սպասէր յոյսերուն իրագործմանը: Ռուսական բանակը հեռացած էր Հայաստանէն. եւ Հայը կը մնար թուրքին հետ դէմ առ դէմ: Եւ ոչինչ կը պատահէր: Ներսէս ազգային ժողով դումարեց՝ իր կատարած գործին վրայ հաշիւ տալու համար. կ'ուզէի ունենալ քովս օրինակ մը այդ անսոսանալի ժողովին ատենադրութիւններէն, որպէս զի Ներսէսի ատենաբանութիւնէն կտոր մը յիշէի. կարելի չէ երեւակայել աւելի տղայական, աւելի ուրուցիկ, աւելի ցաւագին կերպով ծիծաղելի բան մը. պարգեւարաշխութեան ճառ մըն է, մինչդեռ դամբանական մը պէտք էր: «Աւետի՛ս, կը գոչէ, նոր թուական մը բացուեցաւ Հայերուս, վե՛ց պետութեան պաշտպանութիւնը միանգամայն ապահովեցի Հայոց համար. եւ օսմանեան կառավարութիւնը անյապազ պիտի սկսի բարենորոգումները. Անգլիա զրամատէրներ պիտի զրկէ Հայաստան, առեւտուր եւ ճարտարագործութիւն պիտի ծաղկին. հայ վաճառականներ, հայ արհեստաւորներ, հայ զրամատէրներ, հայ զրագէտներ, ճամբայ կէ՛ք, Հայաստան գացէ՛ք, — աւետի՛ս:» Որպէս զի չըսուի պատմութեան մէջ թէ ամբողջ հայ ժողովուրդը ապուշ է, գտնուեցան երկու երեք անձեր, ժողովրդական կուսակցութենէն, որոնք այդ տխուր ժողովին մէջ սրատեսութիւնը եւ քաջութիւնը ունեցան այդ ճառին դէմ բողոքելու. այդ անձերը զգացուցին թէ Ներսէս ապօրինի ընթացք ունեցած էր իր ազգին ամենէն կենսական գործը քանի մը էֆէնտիններու հետ միամիտակը կատարելով, թէ պարզապէս գործիք եղած էր թուրք կառավարութեան նպատակներուն, թէ փախուցած էր թանկագին առիթ մը որուն պէս ազգերը քիչ անգամ կ'ունենան, եւ թէ բոլոր այդ դէպի Հայաստան հրաւերը ծաղրելի ստութիւն մըն էր: Այդ ան-

ձերը իրաւունք ունէին : Ներսէսի ճառին վրայ շարժւած մը չանցած , թուրք կառավարութիւնը իր բարենորոգումները կը սկսէր ձերբակալելով Եղիա Տնտեսանի պէս անձեր որոնց միակ յանցանքը ազգային երգարան հրատարակած ըլլալն էր : Բիչ յետոյ հայկական թատրոնը կը փակուէր , հայ լրագրութիւնը կը սեղմուէր , զպրոցները քննութեան կ'ենթարկուէին , եւ դաւաճներուն մէջ հալածանքը կը շեշտուէր : Թէ Համիտ ինչ իրզամտութեամբ կատարելագործութեան հասցուց այդ բարենորոգումները , եւ թէ Անգլիոս ո՛ր աստիճան անտարբեր աչքով դիտեց այդ ամբողջը , գիտենք , եւ դառնապէս գիտենք :

Ինչ եղաւ արդիւնքը Ներսէսի գործունէութեան : Ներսէս իր հակասական եւ անգիտակից վարմունքով պատճառ եղաւ Հայուն դէմ գրգռելու ամէն տեսակ ուժեր . Թուրքը , տեսնելով Ներսէսին Ռուսիոյ բանակը երթալը , եւ յետոյ Պերլինի վեհաժողովին մէջ հայ ազգին համար անկախութիւն խնդրելու յանդգնելը իմանալով , որոշեց վերջնական միջոցներու ձեռնարկել : Հայը ջախջախելու համար . Ռուսը , ծանրապէս վիրաւորուած Հայուն իր հանդէպ բռնութիւնը փոխեց , եւ փոխանակ Հայուն վրայ կրթնելով Տաճկաստանը քայքայելու , Հայ ու Թուրք իրար զարնելով երկուքն ալ տկարացրնելու գրութիւնը մտածեց : Եւ Անգլիա հեռուէն գիտեց այս գծոխային խաղը , պղատոնական համակրութիւն մը միայն ցուցնելով Հայերուն , զոր մերթնները ա՛յնչափ ազետալի կերպով սխալ ըմբռնեցին : Ներսէս եւ իր մտերիմները զգացին իրենց սխալը , բայց ուշ : Օտեան , Բարիզ ապաստանելէ յետոյ , ըսած է անձի մը՝ «Տարի մը աշխատեցանք սա ճ՛րդ յօղուածը դնել տալու համար . երանի՛ թէ հիմա երկու տարի աշխատէինք եւ կարենայինք ջընջել զայն . այդ յօղուածը վեասակար պիտի ըլլայ մեր ազգին» : Աէրվիչէն նոյնպէս խոստովանած է բարեկամի մը թէ իրենք սխալ գործեցին , եւ աչքը արցունքով լեցուն՝ երդուընցած է որ անկեղծ էին իրենք եւ խաբուած էին : Ներսէս ինք ալ զգաց իր սխալը , եւ տաժանելի կերպով . այդ մարդը տխուր վերջ մը ունեցաւ : Ռուսիոյ դեսպանը զինքը շատ պաղ ընդունեցաւ՝ երբ անգամ մըն ալ փորձեց անոր հետ տեսակցիլ : Իսկ Սուլթանը զինքը ճամբու գրաւ երբ զնաց գանի տեսնելու , ըսելով թէ զբաղած է կարգալու ան տեղեկագիրները զոր Հայոց Պատրիարքը տուած էր ռուսական դեսպանին . . .

Եւ երկու հարիւր հազար հոգի ջարդուեցան . . . Եւ Ռուսիա , անշարժ ու անտարբեր , դիտեց : Իր վրէժը կը լուծէր Անգլիայէն , եւ Հայերէն : Եւ Անգլիան չկրցաւ իր նաւերը մինչեւ Հայաստանի լեռները բարձրացնել . . .

Ջարդերէն անմիջապէս յետոյ , Խրիմեան հեծկրլտանքով լեցուն նամակ մը կը զրկէր Նուպար փաշային , ներում խնդրելով , կատարուած սխալը ողբալով . . .

Եւ այս ազգին մէջ եղան մարդիկ որ Նուպար փաշան «անտարբեր» մը նկատեցին . . . եւ Ներսէսին ընթացքը քննադատող մէկ երկու անհատները «դաւաճան» կոչուեցան . . .

\* \* \*

Ահաւասիկ առաջին պատասխանատուները : Յեղափոխականներուն գործած սխալները այդ սկզբնական սխալներուն աճումն ու չափազանցումն են :

Նիւթը ըլլալով այնչափ ընդարձակ որչափ փշալից , մէկ քանի գծով միայն պիտի նշանակեմ այն վտանգաւոր արտառոցութիւնները որով մեր երիտառարդութիւնը այդ թիւր սկզբնաւորութիւնը հասցուց ամենէն կորստաբեր եղրակացութեան :

Պէտք է խոստովանիլ որ Ներսէսի եւ իրեններուն հիմնածը , եթէ հայ ժողովուրդը ձգեց քաղաքական վտանգաւոր կացութեան մը մէջ եւ Թուրքին կողմէ հալածանքներու ծրագրի մը գործադրութիւնը փութացուց , այս վերջին աներեւակայելի աղէտքներուն ուղղակի պատճառ ըլլալու բնութիւնը չունէր սակայն : Ներսէս եւ իր գործակիցները մտքերնէն չէին անցուցած որ օր մը հայ տղաքը զէնքերով Բ . Դրան վրայ պիտի երթային կամ Օսմանեան Պանքան ուժանակով օղը հանելու գաղափարը պիտի ունենային : Բայց առաջին սխալը ծնունդ տուաւ երկրորդ սխալին : «Հայկական յեղափոխութիւն» ըսուածը անհիմ ու օղային նկարագիրն ունի անտանելի եւ ատելի ճ՛րդ յօղուածին . անոր զաւակն է :

Առաջին սխալողներուն մէկ կարեւոր յանցանքն ալ իրենց սխալը հրապարակաւ խոստովանած չըլլալն է : Ինչ որ Օտեան բարեկամի մը փոփրսաց , պէտք էր որ գրէր , որպէս զի ազգը ուշաթափէր : Ու իմ Չերազ բարեկամս մանաւանդ , որ Անգլիոյ ձեռքով Հայաստանի վերանորոգման գաղափարին ամենէն պերճախօս տարածողը եղած է իր Թե ինչ շահեցանի Պերլինի

Վեհաժողովին տետրակով եւ իր գործունէութեամբը, պէտք էր որ գրած ըլլար «Թէ Ի՞նչ կորսնցուցինք»ը: Պ. Չերազի ազգանուէր կեանքը արժանի է ամէն յարգանքի, բայց այս դիտողութիւնը, զոր իրեն ալ անձամբ ներկայացուցած եմ, չեմ կրնար հոս չնշանակել: Կ'ըմբռնեմ որ Պ. Չերազին համար դառն պիտի ըլլար 61րդ յօդուածին պատմութեանը գպչիլ, բայց ատով պիտի մատուցանէր ամենէն կենսական ծառայութիւնը իր ազգին: Այս վերջին տարիներս, դէպքերուն ազդեցութեան տակ, եւ մօտէն տեսնելով Անգլիոյ եսական ու նենդ քաղաքականութիւնը, Պ. Չերազ իր ֆրանսերէն թերթին մէջ լեզուն փոխեց, եւ նոյն իսկ իր թերթը առաջինը եղաւ արտասահմանի ազատ թերթերէն՝ Ռուսիոյ պաշտպանութեան կարեւորութիւնը զգացնող. բայց ուշ էր, եւ անբաւական, քանի որ այդ ուղղութեան փոփոխութիւնը կ'արտայայտուէր ֆրանսերէն լրագրի մը մէջ որ կ'ուղղուի օտարներու. պէտք էր հայ ժողովրդին ուղղակի խօսիլ եւ բացէ ի բաց ցուցնել անցեալին սխալը:

Ներսէսի գործին անմիջական հետեւանքով, հայ ազգը աչքը դէպի Անգլիա զարձուց, եւ Ռուսիոյ դէմ բացայայտօրէն հակակիր դիրք մը բռնեց: Բովանդակ ազգը սա անհեթեթ համոզումը կրցաւ գոյացնել թէ Անգլիա պիտի կըրնայ, հակառակ Ռուսիոյ, բարեկարգել երկիր մը որ Ռուսիոյ սահմանակից է ու լեռներու մէջ կորսուած: Բայց Անգլիա ոչինչ խոստացած էր Հայերուն, ոչ մէկ յստակ եւ ուղղակի զրոյում տուած էր անոնց: Նոյն իսկ, Հայերուն անկեղծօրէն համակրող Անգլիացի մը, ձէյմս Պրայս, Արարատի վերելքը կատարելէ յետոյ Պոլսէն անցնելով, Ազգային ժողովին ներկայ գտնուած եւ հետեւեալ խօսքերը արտասանած է, զոր նախկին երեսփոխան մը ինծի կրկնեց՝ «Հայերուն խորհուրդ կուտամ որ զարգանան, իրենց դպրոցները բարեկարգեն, վաճառականութիւննին առաջ տանին, ուրիշ բան չունին ընելիք. եւ ատի լաւագոյն բանն է որ կրնան ընել»): Հակառակ այս որոշ յայտարարութեան, Հայերը յամառեցան տեսնել Անգլիոյ դիտումներուն մէջ ինչ որ գոյութիւն չունէր եւ չէր կըրնար ունենալ: Պ. Պրուսայի եւ Պ. Սըվազլի, երկու հմուտ եւ ազգասէր փաստաբաններ, Լոնտոնի մէջ Հայաստան թերթը հրատարակել սկսան, յիշեցնելու համար Արեւմտեան Եւրոպային եւ մասնաւորապէս Անգլիոյ Հայաստանի մէջ բարեկարգութիւններ կատարելու խոս-

տումը: Պ. Չերազ եկաւ անոնց ետեւէն իր յ'Արմենիա հեմնեց: Անգլո-հայկական ընկերակցութիւն մը կազմուեցաւ, որուն անդամակցեցան մէկ քանի կարեւոր խորհրդարանականներ: Անգլիա կը շարունակէր պաշտօնապէս ոչինչ խոստանալ, ոչինչ ներշնչել Հայերուն. բայց չէր արգիլեր Հայոց անգլիամոլ շարժումը եւ տեսակ մը Անգլիացոց առաւել կամ նուազ Տիգրանի հայասիրութիւնը. նոյն իսկ տարտամ գոհունակութիւն մը ունէր այդ երեւոյթէն, որ իր ձեռքին մէջ տեսակ մը զէնք էր Ռուսիոյ դէմ եւ որ օր մը պիտի կրնար ծառայել իր ուրիշ գործերը կարգադրելու: Եւ Հայերը կ'երեւակայէին թէ այդ անգլո-հայկական միթիսկները եւ հրատարակութիւնները սկզբնաւորութիւնն էին հայկական անկախութեան ծրագրին իրագործման: Միւս կողմէ, Թուրքը կը շարունակէր իր հայասպան գործունէութիւնը. մահմետական տարրին մեծամասնութիւնը չեչտելու համար կառավարութիւնը չէր քէզ ու թուրք գաղութներ կը բերէր կը լեցնէր Հայաստանի մէջ. Բիւրսետուն ամէն ազատութիւն կը տըրուէր որպէս զի Հայերը հարստանորեն առաւել քան երբեք սանձարձակ. Համիտիէ հեծելագունները կը կազմակերպուէին, որով Բիւրսետերը, շահասիրուած, սրտանց կը յարէին օսմանեան գահուն, եւ Հայոց պիտուն վրայ կը պատրաստուէին իբրեւ պատուհասը՝ առաջին կայծին պայթելու համար. մամուլն ու դպրոցները հետզհետէ աւելի կը սեղմուէին. կեանքը կը սկսէր տաժանելի դառնալ Հայոց:

Խղզուկ մթնոլորտի մը մէջ կազմուած, Թուրքին ատելութեամբը սնած, անգլիական յոյսերով օրօրուն, նոր սերունդ մը յառաջ եկած էր. նախորդ սերունդը երազող, ճառախօս, խանդավառ էր. այս սերունդը տենդոտ էր, անհամբեր, կոռուսէր ու ժպիրճ. նախորդը Հիւկոյով սնած, կը կարծէր թէ աղւոր ֆռագնեւորով, մաքուր մարդասիրութեամբ, Եւրոպան պիտի փրկէր Հայաստանը. նոր սերունդը, ընկերվարական գրականութեան շփոթ ազդեցութեամբ մը տոգորուած, կարծեց թէ Հայը «ոտքի ելլելով», պիտի կրնար ինքնին լուծել իր գոյութեան հարցը: Եւ ծագեցաւ «հայկական յեղափոխութիւն»ը: Այդ երեւոյթին կազմաւորման մեծապէս նպաստած է Բաֆֆին. Բաֆֆին կրակոտ երեւակայութեամբ, խրոխտ հոգիով վիպասան մըն է, եւ իր տեղը շատ մեծ է մեր գրականութեան մէջ. բայց Բաֆֆի վնասակար եղած է՝ հայ երիտասարդութեան ուշադրութիւնը դար-

ճընելով մեծ Հայաստանին վրայ եւ ծրագիրը ներշնչելով ընդհանուր յեղափոխութեան մը որ գործնական հիմ չունէր . « Ո՞վ է այն խենդը որ Խենդը գրեր է » ըսած է օր մը Մերկնց , որ Բաֆֆին շատ նուազ կ'արժէ իբր վիպասան , բայց որ քաղաքագէտ միտք մըն էր : Խենդը , կայծերը հայ երեւակայութիւնը վառեցին , եւ կամքը ծնաւ իրագործելու ինչ որ Բաֆֆի երազած էր : Հայ յեղափոխականները բառ առ բառ գործադրել ուզած են Բաֆֆիին վէպերը : Բաֆֆի դժգոհ մըն էր , ըմբոստ մըն էր . սարկու-թեան մէջ սողացող ժողովրդի մը տեսարանը զինքը դառնացուցած էր , եւ հրաւէր կը կարգար որ ժողովուրդը ցնցուի եւ հարուածին փոխարէն հարուած տայ . բայց չէր հասկցած կացութիւնը . չէր հասկցած թէ անարկու թշնամիի մը զիմացը , տկարը ստիպուած է ինքզինքը խորամանկութեամբ պահպանել , թէ ատիկա կեանքին տարրական մէկ օրէնքն է . եւ չէր ճշդած , չէր սահմանաւորած խնդիրը , կարելիին մէջ զայն չէր տեղականացուցած . ինքնուրոյն հայութիւն մը վերականգնելու պիտակից ջանք մը չէր իր գործը , այլ ազատ հոգևով մարդու մը գրգռուիչ կոչը լուծի տակ հեծող մարդոց ուղղուած :

Բաֆֆի Վանի հայրենաստիքական շրջանակին մէջ , Վասպուրականի արծուոյն թեւերուն տակ կազմուած հոգի մըն էր : Ուրիշ մը , բուն վանցի , Մկրտիչ Փորթուզալեան , առաջին քայլը առաւ Բաֆֆիին ծրագիրը իրականացնելու համար : Վանի մէջ կազմեց յեղափոխական մարմին մը , եւ ապագայ ապստամբութեան մը յատկագիծը պատրաստեց : Յետոյ եկաւ Մարտիրոս հաստատուեցաւ եւ հիմնեց իր Արմենիան , որով Հայերը կը հրաւիրէր ոտքի ելլելու՝ Մեծ Հայաստանը ազատելու համար թուրքին լուծէն :

Ուրիշ ազդեցութիւն մը , անմիջական եւ հրգոր , ազդեցութիւնը եղաւ Պուլկարիոյ ազատման : Այդ դէպքը որ Հայոց աչքին առջեւ կատարուած էր , իրենց կարծել տուաւ թէ միեւնոյն բանը կարելի էր Հայաստանի մէջ : Վարժապետեանի հաշուէտուութեան ժողովին օրը , երեսփոխաններէն շատերը կը գոչէին , մանկունակ շեշտերով . « Մենք ալ կ'ուզենք , ուրիշ ազդութեանց չնորհուածը մեզի ալ տրուելու է » : Նոյն բանը ըսին առոնց յաջորդները . բայց ասոնք կ'աւելցնէին . « Ուզելը չի բաւեր , պէտք է արիւն թափել » : Եւ այս հրէշային գաղափարը ծնաւ մեր մէջ թէ պարզապէս արիւն կորսնցնելով կրնանք ազատութիւն ձեռք ձգել : Չէին

տեսներ (ինչպէս մինչեւ հիմա ալ կը յամառին չտեսնել) թէ Պուլկարիոյ , ինչպէս նաեւ Յունաստանի , Սերպիոյ մէջ , ինչպէս այսօր կրեւտէի մէջ , մահմետական լուծի տակ մնացած ազգութիւնը բացարձակ մեծամասնութիւն կը կազմէ իր հայրենիքին մէջ , եւ կարելի էր որ իր երկրին միակ տէրը ըլլար օր մը . ատկեց զատ , չէին դիտեր թէ Սերպիան ու Պուլկարները սլաւ են , Ռուսին համացեղ , թէ Յոյները օրթոտոքս են , Ռուսին դաւանակից , եւ թէ Ռուսը , բաց ի շահու պատճառներէն , զգացման պատճառներ ունէր անոնց փրկութիւնը յաջողցնելու . չէին դիտեր վերջապէս որ Պուլկարները ոտքի ելած էին՝ որոշ խոստումներ ունենալով Ռուսիոյ կողմէ որ նոյն իսկ սպաներ ու զէնք տուած էր անոնց ապստամբութիւնը զօրացնելու համար . եւ միւս կողմէ չէին տեսներ թէ Հայերը դադրած էին իրենց հայրենիքին մէջ մեծամասնութիւն ունենալէ , թէ տարածուած էին Պոլիսէն մինչեւ Պաղտատ եւ Վանէն մինչեւ Իսթանուլուսն ու բազմաթիւ ցեղերու մէջ խառնուած , եւ թէ Ռուսը , որուն երես դարձուցած եւ զոր զայրացուցած էին , ոչ միայն իրենց օժանդակ պիտի չըլլար այդ գործին՝ մէջ ուր միայն Ռուսին օժանդակութեամբ կարելի է յաջողիլ , այլ հակառակ էր իրենց եւ պիտի թողուր ոտքի ելած Հայը թուրքին հետ միամիտակ , ինչ որ Հայուն աներկբայելի ջախջախումը կը նշանակէր :

Բայց հայ գործիչները ժամանակ չէին կորսնցնէր ուսումնասիրութիւն , բաղդատութիւն , խորհրդածութիւն ընելով : « Ոտքի ելէք » կը գոչէին , եւ այսչափ : Ի՞նչպէս , ո՞ւր , ի՞նչ յոյսով , ինչի՞ վրայ կրթնելով , ինչի՞ յանգելու համար : — Ասոնք աւելորդ հարցումներ էին :

Եւ յանկարծ , աննշան ուսանող մը , որ սովորական քննութիւնները անցընելու անկարող եղած էր , գաղափարը ունեցաւ հայ յեղափոխական շարժման գլուխն անցնելու : Նազարբէկ կը կոչուէր այդ անձը , եւ կարգուած էր խրթնի կնկան մը հետ որ Հայերը կ'ատէր , ռուսերէն կը խօսէր , եւ թրքահայերը՝ ջարդուելու արժանի արարածներ կը նկատէր : Նազարբէկ Հնչակ թերթը հիմնեց , « պէտք է գործել » ընշանաբան գրաւ , եւ գործել սկսաւ . . .

Նազարբէկ նոր երանգ մըն ալ կը բերէր . որպէս թէ անխլխանական մըն էր ինքը , ( լուքէնի տեսակէն ) , եւ Հայոց խնդիրը կապեց ընդհանուր մարդկային ազատագրութեան խնդրոյն . ատիկա փաստ մը աւելի եղաւ Ռուսիոյ եւ

Թուրքիոյ ձեռքը՝ ընդդէմ Հայոց հակակրօնութիւն գրգռելու, ներկայացնելով զանոնք, ոչ թէ իբր հայրենասէրներ, այլ իբր ընկերութեան թշնամիներ: Լորիս Մելիքովի «վարը» ա՛լ բուրովին մոռցուած էր՝ վանցիներու եւ անիշխանականներու այս խուժանքին առջեւ. նազարէկի ծրագիրը հսկայական ընդարձակութիւն մը ունէր. նախ՝ Թրքահայերը պիտի փրկէր Տաճկին ձեռքէն, յետոյ Պարսկահայերը Պարսկին լուծէն, յետոյ Ռուսահայերը Ռուսին ճիրանէն. եւ յետոյ, ամբողջ մարդկութիւնը պիտի ճողոպրէր «կապիտալիստներուն» մագիլներէն . . .

Եւ խեղճ աւելնոտ երիտասարդութիւն մը, միամիտ ու անձնուէր, հրապուրուած ու ցնցուած՝ այդ գեղեցիկ բառերէն, հետեւեցաւ այդ դարհուրելի շոշորդին . . .

Կրնա՞մ հոս յաւազին սքանչացման արտայայտութիւն մը չնուիրել բոլոր այն հայաստանցի կամ պոլսեցի երիտասարդներուն, որոնք յանդիմութեան, կորովի, զոհաբերութեան անեղբեակայելի ապացոյցներ տուին, որոնք զընդանին, կախաղանին ու կոշկոճանքներուն արհաւիրքը արհամարհեցին: Ատոնք կը կարծէին որ իրենց զոհողութիւնները Հայրենիքին փրկութեանը պիտի ծառայեն, կը կարծէին որ Եւրոպա ընկալող իրենց պետերը, հարկաւոր հատութիւնը, խղճամտութիւնը եւ փորձառութիւնը ունէին, ու վստահ իրենց վարիչներուն վրայ, ապահով իրենց դատին յաջողմանը, կրակին մէջէն քալեցին անցան . . . Ժողովրդին ծոցէն ելած այդ զիւցազնական ուժը որ կը ցուցընէ թէ Հայր իր գոյութեան հարցը լուծելու համար հարկաւոր թաքուն կորովն ունէր, աւելի կը ծանրացնէ վարիչներուն ոճիրը, քանի որ գէշ գործածեցին այդ ուժը եւ փճացուցին զայն . . .

Վտանգը սկսաւ հատուննալ, արդիւնք անկապակից, հակասական, անհիմ, խախուտ գործունէութեան մը: — Գործիչները կը յայտարարէին թէ իրենց նպատակը Թրքահայոց անկախութիւնը ձեռք ձգել չէ, այլ հայկական նահանգներուն մէջ բարենորոգումներու հաստատումը յաջողցնել. բայց այդ պարագային մէջ պէտք էր ըմբռնել որ առանց Թուրք ժողովրդին հետ իրական համաձայնութեան մը, եւ առանց եւրոպական պետութեան մը օժանդակութեան որոշ խոստումին, անհնար էր բարենորոգումներ գործադրել տալ: Մեր գործիչները եւրոպական պետութիւնները արհամարհե-

ցին, եւ բովանդակ Թուրք ժողովուրդին աչքին Հայր թշնամի ներկայացուցին: 90ի ցոյցին, Բուսթարու, Պատրիարքը ստիպելով որ Սուլթանին աղերսագիր մը տանի հայ ժողովրդական սպառգամաւորութեան մը հետ, ճամբան սպաննեցին Թուրք զինուորական մը որ կ'ուզէր համոզել զիրենք ցրուելու (ականատեսէ մը պիտեմ այս իրողութիւնը). եւ նոյն օրը, ճանկիւրեան, Պատրիարքարանին մէջ, թուղրան ոտքին տակ առաւ ու կոտորեց: Ինչպէս կարելի էր բարենորոգում յուսալ ատկից յետոյ, երբ բնակակից երկու ժողովուրդներու մէջ խրամատը լայնափեռեկ կը բացուէր՝ նոյն իսկ մեր գործիչներուն անխմատ անխոհեմութեամբը: Ուրեմն բարենորոգման քողին տակ, մեր գործիչները հայկական անկախութեան մը հեռաւոր նպատակը կը ծածկէին: Բայց այդ պարագային մէջ ինչո՞ւ տարտղնել ծրագիր մը որ միմիակ որոշ կէտի մը վրայ միայն հաւանականութիւն կրնար ունենալ յաջողելու, ինչո՞ւ այդ թաքուն նպատակին գլխաւոր թատերաւայրը ընտրել Բարձր Հայաստանը ուր ամէն մարդ զիտէր որ ատի անհնար է, եւ ինչո՞ւ, տարակուսական յոյսի մը համար, վտանգել ամբողջ Հայութիւնը՝ ամէն տեղ, Վան ինչպէս Պոլիս, Մարաշ ինչպէս Էրզրում, Տրապիզոն ինչպէս Ուրֆա:

Բայց առաջին քայլերը առնուած էին, եւ սխալ սխալի յաջորդեցին: Սասունի մէջ զիմազրութիւն մը կազմակերպեցին, որ ջարդի մը յանգեցաւ: Քաղաքական այնպիսի կացութեան մը մէջ, ուր ոչ ոք կ'ուզէր եւ կրնար Հայաստանով զբաղել, Ռուսիոյ ճիշդ ոտքին տակը, Անգլիայէն եկած աի մը մարդով, հինգ հրացանով ու տղայական յոյսերով այդ ապստամբութիւնը, մահացու սխալ մըն էր:

Սասունի դէպքը օգտակար եղաւ Անգլիոյ տեսակ մը շահերուն. Անգլիա անազին վայնասուն փրցուց, Տաճկին դէմ զայրոյթի մրրիկ մը հանեց, «Պէտք է Թուրքը վճռուի Եւրոպայէն» ըսելու չափ առաջ դնաց, անուղղակի կերպով գրգռեց Հայերը եւ վերջին բոլոր դէպքերուն եւ աղէտքներուն շարժառիթ եղաւ, — եւ անդին Սուտանի գործը կարգադրեց, ու Եգիպտոսի գրաւումը ապահովեց . . .

Անգլիոյ կանչուընուքէն սրտոտած, Հայերը Պոլիս ցոյց մը կազմակերպեցին: Սասունի ջարդէն, եւ Անգլիոյ բռնած վարմունքէն յետոյ, կը խոստովանիմ որ այդ ցոյցը հասկանալի էր. եւ Պոլիս, գրեթէ ամէնքը համակարծիք էին

որ պէտք է ցոյց մը ընել : Բայց ցոյցը կատարուեցաւ ամենէն հակասական կերպով : Հայերը կ'երթային աղերսագիր մը առ Բ. Դրան, եւ բարենորոգումներ խնդրել Սուլթանէն : Պէտք էր անգէն երթային իբրեւ թուրք հպատակներ որոնք ճակատաբաց իրենց կառավարութենէն իրենց իրաւունքներուն յարգուիլը կը խնդրեն : Իսկ եթէ զէնքով երթալ կ'ուզէին, պէտք էր որ բացէ ի բաց ապստամբութիւն մը ըլլար ատիկա : Հայերը ազերսագիր մը տուին . . . զէնքով : Բ. Դրան առջեւ, զինուորականներու վրայ կրակ պարպեցին : Յառաջ եկաւ Պոլսոյ ջարդը : Ինծի ըսուած է թէ ցոյցին պոլսեցի կազմակերպիչները որոշած էին անգէն պատգամաւորութիւն մը զրկել Բ. Դուռը, բայց Նազարէկի կողմէն զրկուած անձերը պնդեցին որ պէտք էր զինեալ ըլլար ցոյցը, որպէս զի ընդհարում յառաջ գար եւ . . . արիւն թափէր : Ինծի ըսուած է նաեւ թէ Պոլսոյ գործիչները այդ միջոցին զրած են Նազարէկին եւ խընդրած են որ Լոնտոնի զիւանագիտական չըջանակներէն տեղեկանայ թէ պէտք է ցոյց մը ընել : Նազարէկ խնդրուած զիմումները կատարած է, պատասխան ընդունած է թէ պէտք չէ ցոյց ընել : Բայց այդ պատասխանը Պոլսի չէ հաղորդած : Նոյն պահուն, Պ. Չերազ ուսական դեսպանատան մէկ պաշտօնէին հետ տեսակցած է, եւ այդ անձը խորհուրդ տուած է որ Հայերը յանդգնութիւն մը չընեն, մինչեւ անգամ աւելցուցած է «բըր ատենը դայ, մենք ձեզի կ'իմացնենք» . եւ Պ. Չերազ հաղորդած է այս մանրամասնութիւնը Նազարէկին . բայց Նազարէկ Պոլսի հրաման զրկած է որ ցոյցը կատարեն, եւ զէնքով . . . Հոս մատնանիչ կ'ընեմ մէկ ցաւալի սխալը Պոլսոյ գործիչներուն, որով ամենքն ալ կոյր վստահութիւն մը ունեցան Նազարէկ ըսուած անձանօթ խէզի մը վրայ, եւ անոր հրամաններուն հպատակեցան, առանց երբեք մտքերնէն անցընելու մէկը զրկել եւ մտան ճանչնալ այդ արարածը : Ասիկա զիտել տուած եմ Արփիարեան բարեկամիս, որ իրաւունք տուած է ինծի : Բայց Արփիարեան արժանիքն ունեցաւ Նազարէկը ճանչնալէն յետոյ, զայն ազգին ճանչցնելու :

Եւ սկսան Հայաստանի անուրի կոտորածները . . .

Ամէն տեղ, Հայերը ջախջախուեցան, կորսընցուցին իրենց զիրքը, հողը, ուժը . եւ ապացուցին թէ անկախութեան մը արժանի չեն, ինքնուրոյն կեանքի մը նիւթական յարմարութիւնները չունին : Եւրոպան ոչ միայն չմիջա-

մտեց՝ Հայոց երազածը իրագործելու համար, ինչ որ Եւրոպան, իր անհամաձայնութիւններով եւ խնդրոյն ալ անլուծելիութեամբը, անկարող էր ընելու, այլ նոյն իսկ պէտք եղածը չըրաւ ջարդերը արգիլելու համար, ինչ որ կըրնար : Եւրոպան հրէշային եղաւ :

Այդ միջոցին բռնկեցաւ Չէյթունի ապստամբութիւնը, եւ երբեք հայ յեղափոխութեան վարիչներուն ընթացքը այնքան ապիրատ, այնքան բացարձակօրէն, աններելիօրէն ոճրագործ չեղաւ որքան այդ դէպքին : Չէյթունի մէջ պատահածը, ուրիշ տեղի դէպքերուն պէս, արիւն թափել տալու համար սարքուած խոռվութիւն մը չէր . ապստամբութիւն մըն էր . զէնքի վարժ լեոնցիներու ժողովուրդ մը, տեսնելով որ Տաճիկը իր վրայ կուգար, որոչեց, ինչպէս միշտ, շարգուիլ . եւ զէնքը ձեռքը դէմը ելաւ թշնամիին, ու վեց ամիս զիմադրեց : Տարակոյս չկայ որ հայ յեղափոխութեան մէջ ոչ մէկ դէպք այդ լրջութիւնը, այդ կարեւորութիւնը, այդ զրական ու բեղուն հանգամանքը ունէր որչափ այդ դէպքը . Մեկիքոֆին «վարն» էր որ կը կայծկլտար, ինքնաբերաբար, լեոնցիներու բնազդական ճիգովը . հոտ բան մը կար ընելու, հոտ պէտք էր բան մը ընել . եւ անա ըլլուելիք բանը սկսեր էր, յաջողելու վերայ էր . պէտք էր հոն թափել ամեն զօրութիւն, պէտք էր ամբողջ ազգը իր ամէն տեսակ ուժերը հոն կեդրոնացնէր : — Ի՞նչ ըրին մեր վարիչները : Նազարէկ շատացաւ պարծենալով իր թերթին մէջ թէ այդ ապստամբութիւնը ինքը կազմակերպած էր, ինչ որ բացարձակ ստախոսութիւն մըն էր, եւ Պոլսէն ու ամէն կողմէ իրեն զրկուած գումարներէն ոչինչ կրցաւ կամ ուղեց (երկու պարագային մէջ ալ յանցաւոր) Չէյթուն հասցնել : Իսկ Դրոշակեանները մատերնին անգամ չչարժեցին, որովհետեւ այդ գործը կը նկատէին իբր հնչակեան գործ մը, եւ ատիկա զիրենք չէր հետաքրքրեր : Այդ վեց ամսուան հոյակապ զիմադրութեան վրայ տասը-քսան տողով համեատ լուրեր միայն հրատարակեցին իրենց Դրոշակին մէջ : Եւ զբրամի, օգնութեան պակասէն ուժասպառ, անօթութենէն քամակակոր, Չէյթուն զիմեց Եւրոպային, զթութիւն հայցելով : Եւ Չէյթուն այնչափ յարգելի անուն մըն է, որ Եւրոպան լսեց անոր ձայնը եւ զայն ջարդէ ազատեց ու նոյն իսկ փոքրիկ առանձնաշնորհում մը տուաւ անոր, այն նոյն Եւրոպան որ ամբողջ Հայաստանի աւերումը լուռումունջ զիտած էր :

Պսակելու համար սխալներու չարագուշակ շինուածքը, Դրօշակեանները, որ նախանձէ կը մրկէին Հնչակեաններուն «յաջողութիւնները» տեսնելով եւ կ'ուզէին իրենք ալ ազմուկ հանող բան մը ընել, Պոլսոյ Պանքային ցոյցը կազմակերպեցին: Ատոնք կ'ուզէին «Եւրոպան վախցնել»: Կ'ուզէին եւրոպական շահերը վտանգել, որպէսզի բռնի Եւրոպան ստիպուէր Հայերուն փափաքը կատարել: Եւ վեց հազար հայ ալ պակսեցաւ աշխարհէս . . .

Անասան, ժպտուն, Հայոց կրած այդ անագին հարուածէն անմիջապէս յետոյ, մերկաները ձեռուընին կը չփէին: Մտքերնին շարունակել էր նոյն մէթօտը: Եւ այն ատեն, ծայրագոյն խելագարութեան հով մը անցաւ. իրենք իրենցմէ ելան. ա'լ զառանցանքին հասան: Տեսնող եղած է բարեգաբնակ Դրօշակեան մը որ իր արբանեակներուն կը հրամայէր՝ «Գացէք սա Հանողոյն ըսէք որ էնքեռքերս իրենք թող ընդունի անմիջապէս, ապա թէ ոչ պատուհան մը չեմ ձգեր Բարեգի մէջ, բոլոր ապակիները ցրելս ցրելս ընել կուտամ . . .» Եւ ուրիշ մը, Լոնտոն, լրջօրէն մտքէն անցուցեր է . . . Անգլիական Պանքան օդը հանել: Ա'լ Սուլթանը չէր միայն որ իրենց առջեւ ծնրադիր կը դողար: Ամբողջ Եւրոպան սարսափեցուցեր էին . . .

Պէտք չունիմ շարունակելու:  
 Ահաւասիկ «հայ յեղափոխութիւնը», իր պարզ իրականութեանը մէջ:

\* \* \*

Քննադատելու հաճոյքին համար չէ որ գծեցի այս երկայն ու տխուր պատկերը: Կ'ատեմ այդ հաճոյքը այնչափ որչափ քննադատութիւնը ինքն իսկ կը սիրեմ: Ընդհակառակն, ամենախորին ցաւով մըն է որ կը գրեմ այս բոլորը, եւ ամօթով: Օտարներու առջեւ այս դիտողութիւններուս եւ ոչ մէկը պիտի համարձակէի երեւան հանել: Փրանսերէն հրատարակութեանցս մէջ, հայկական շարժումը միշտ ջանացած եմ ներկայացրնել իբրեւ կեղեքուելէն ա'լ ճարահատ ժողովրդի մը յուսահատ ու մոլեգին թօթվտուքը: Բայց ինչ որ պէտք է վարպուրել օտարին աչքէն, աններելի է որ ծածկենք մենք մենք: Յաւով կը գրեմ ասոնք, ըսի, որովհետեւ անգիտակցութիւնը զոր կը տեսնեմ ազգիս մէջ, մղուած այս արտասովոր աստիճանին, զիս կը զարհուրեցնէ եւ կը արտմեցնէ:

Կ'ուզէի սխալած ըլլալ: Ամենայն սիրով պի-

տի հրատարակէի այս քննադատութեան հերքումը, եթէ փաստեր ներկայացուէին որ ջախջախէին իմ ըսածներս: Կը նախընտրէի ես սրխալած ըլլալ քան թէ ստիպուած ըլլալ ընդունելու թէ մեր բոլոր գործիչները սխալեցան:

Իրեւմ որ առաջինը չեմ, ոչ ալ միակը, այսպէս տեսնող: Դէպքերէն առաջ, դէպքերուն միջոցին, գտնուած են հոս ու հոն՝ խոհական անհաստներ, որոնք վտանգը նշմարած են, զգուշացուցած են, աղաչած են, բացատրած են, բողոքած են: Իմաստակ ունեց մը իրենց ձայնը խեղդած է: Երանի՛ թէ այդ ճիշդ ու հեռու տեսնող անձերը աւելի յամառ ու յանդուգն եղած ըլլային, իրենց կարծիքը աւելի բարձրաձայն, աւելի յարատեւ, աւելի տիրական կերպով յայտնած ըլլային. պէտք էր, սխալ ու կործանարար գործունէութեան դէմ, ազգապաշտպան ուղիղ գործունէութիւն մը կազմակերպել. թերեւս կարելի ըլլար չարիքին առաջըն ստնել կամ գոնէ մեղմացնել զայն:

Այս բոլորը պէտք էր ըսել հիմա, որոշապէս, ամբողջապէս, առանց վերապահութեան եւ առանց կրքի:

Վաղը թերեւս Ռուսիա ձեռք աննէ Հայոց ինդիրը: Պէտք չէ որ Ներսէսին սխալը կրկնուի Յաւիտենական Նուրեանը հոն է դեռ. եւ այս վայրկեանիս իսկ վարչութեան գլուխն անցնելու կը հետամտի: Թուրքը նորէն անոր, եւ անոր ընկերներուն, պիտի դիմէ: Ուշադրութիւն ընելու ենք:

Չենք գիտեր թէ Ռուսիա ի՞նչ պիտի ընէ. ապահով իսկ չենք թէ բան մը պիտի ընէ. խօսք մը կայ միայն: Եւ նոյն իսկ, եթէ Ռուսիա շարժի, չենք գիտեր թէ ինչ ձեռով պիտի գործէ. թերեւս խաղաղական միջոցներով ջանայ կարգ ու կանոն հաստատել հայկական գաւառներուն մէջ. թերեւս ալ ստիպուի բանակը մտցնել: Ինչ ալ ընէ Ռուսիա, ատի ճակատագրական իրողութիւն մըն է, որ պիտի կատարուի ինքնին, երբ վայրկեանը գայ, մենք ուզենք կամ չուզենք: Ատոր համար պէտք չկայ որ նորէն խտովութիւններ յարուցուին, եւ արիւն թափուի:

Սուտ է որ կրնանք, մեր այսօրուան ճղակըտոր եւ ուժասպառ վիճակին մէջ, ապստամբութիւն մը յաջողցնել եւ դիմանալ. ու չկայ մեզի պաշտպան պետութիւն մը որ մեզի այդպիսի բան մը թելադրած ըլլայ: Այդ պարագային մէջ, անիմաստ է այսօր Հայը կրե-

տեղիին բաղդատել եւ հրաւիրել որ Հայն ալ կրետեցիին պէս ընէ : Պէտք չէ ազգ մը մղել անկարելիին : Եղեռնական ընթացք մը պիտի ունեցած ըլլար ֆրանսական կառավարութիւնը , եթէ հետեւելով Տէոուլէտներու կանչուրտուքին , Ալզաս-Լոռէնը ետ առնելու համար պատերազմի ելլէր : Մեր պզտիկ Տէոուլէտները կրնան խորհրդածել այս օրինակին վրայ :

Մեր տառապանքը կայ , իրական , եւ որ տարբարուծող թոյնն է օսմանեան պետութիւն : Ռուսիա պիտի զիտնայ զայն նկատի առնել իր գործը կատարելու համար : Մաղթենք որ Անգլիա համաձայնի Ռուսիոյ հետ , եւ Հայաստանի գործը լուծում գտնէ առանց բաղխումի , երկու կողման միահաղոյն հաւանութեամբ : Այդ պարագային մէջ , հայկական խնդրոյն մէկ մասը թերեւս մեզի համար գոհացուցիչ էլք մը ունենայ : Խրիմեան , որ Զարին արքունիքին մէջ մեծ համակրութիւն կը վայելէ՝ կ'ըսեն , պարտաւոր է ըսել հիմա Զարին ինչ որ գրեց Նուպար փաշային . իրե՛ն անկէ դարմանել անցեալը . կրնայ ընել այդ բանը , եւ պարտի ընել : Ինքը բարձրագոյն ներկայացուցիչն է հայ ազգին , եւ իր ձայնը պէտք է որ լսելի ըլլայ Բեզբասուրի վեհաժողովին մէջ , ըսելու համար թէ եւրոպական խաղաղութիւնը չի կրնար տեւական կերպով հաստատուիլ՝ ցորչափ հարստահարուած ազգութիւններուն տառապանքը չբարձուի :

Գործունէութեան հակառակող մը չեմ : Ընդհակառակն : Բայց կը խորհիմ որ լաւագոյն է չգործել քան գէշ գործել : Իրաւունք չունինք ազգը ազատելու պատրուակով զայն ջնջել :

Մտածենք այն միջոցներուն որով կրնանք մեր ազգին բարոյական գոյութիւնը պահպանել : Օգնենք այն բնազդական կորովի ջանքերուն որով մեր ժողովուրդը , հակառակ իր ծանր վէրքերուն , կրած կորուստը դարմանել կը փութայ : Նորանոր յիստորտանքներով չվիրաւորենք օտարները , որոնցմէ կախուած է մեր ճակատագիրը :

Այս գործունէութիւնը վտանգ չունի , ամենէն կենսականն է մեզի համար , ու միակ կարելին :

Եւ ազգ մը չի կորսուիր , երբ գիտէ իր սրխալները ճանչնալ եւ ինքզինքը ուղղել :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

«ԱՆԱՀԻՏ» ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏՄԱՍՍՐԴՈՒԹԻՒՆԸ

(Նաւակ՝ Խմբագրութեան)

Կը հրատարակենք հետեւեալ գեղեցիկ նամակը գոր Պ. Ս. Շահազիզեանց զրկած է Անահիտի խմբագրութեան , ի պատասխան աշխատակցութեան հրաւերին զոր ուղղած էինք իրեն : Մեր ընթերցողները հիացմամբ պիտի կարգան , մեզի պէս , այս ազնիւ տողերը , եւ միանգամայն , մեզի հետ , ամենքն ալ պիտի բողոքեն Պ. Շահազիզեանցի առարկութեան դէմ որով , հին սերունդին պատկանիլը մէջ բերելով , կը հետեւցնէ թէ երիտասարդ գրողներու խումբի մը մէջ այլ եւս ինքը տեղ մը չի կրնար գրաւել . մենք կը հաւատանք որ կան հոգիներ որոնք չեն ծերանար , որոնք ընդհակառակն հիննալով աւելի կը գեղեցկանան . եւ այդ հոգիներէն է «Լեւոնի վիշտ»ին ու «Հրապարակախօս ձայն» ին հեղինակը , որ , անձնուէր ու բազմարդիւն կեանքէ մը յետոյ , հիմա իրաւունք ունի իր ազգին ուղղելու իր հանրածանօթ երգին սիրուն տողերը .

Անդաւաճան ջերմ սիրով  
Ես սիրեցի իմ հայրենիք  
Գրնա՛ եւ դու նոյն շաւղով :

Մեծարգոյ հայրենակից ,

Ձեր նամակը ստացել եմ Անահիտի ազգի հետ միասին , որի համար յայտնում եմ ձեզ իմ խորին շնորհակալութիւնը :

Անահիտի երեւան գալը այս ժամանակամիջոցին առանձին նշանակաւոր է մեր ազգային կեանքի վերաբերութեամբ : Այսօր , երբ Հայը վիրաւոր Սամարացու պէս ընկած է ճանապարհին եւ մինչեւ անգամ թագապսակ Ղեւտացին , մօտից անցնելով , ուշ չի դարձնում նրա վերայ . այսօր , երբ մեր ազգը ներկայացնում է մի res nullius եւ ամէն ոք ներելի է համարում սեպհականել այդ « անտէր ժառանգութիւնը »՝ Անահիտի պէս մի հրապարակախօս բերան կարող է այն ազգի իրաւունքներին թարգման եւ գործակալ հանդիսանալ Եւրոպայի առջեւ , որով եւ մեծ ծառայութիւն ունի մատուցանելու իւր հայրենակիցներին : (1)

(1) Պ. Շահազիզեանց «Անահիտ»ի ծրագրին մէջ տեսեր է զբտնուածէն աւելին : «Անահիտ» հայ հասարակութեան կ'ուղղուի միայն , ֆրանսերէն մաս պիտի չունենայ , հետեւաբար չի կրնար Հայոց պահանջները Եւրոպային ծանօթացնելու գործը կատարել :

Կարգալով ձեր հանդէսի ծրագիրը , որ ձըգտում է ամփոփել ընդհանուր տեսութիւն՝ վերաբերեալ գրականական, պատմական, դաստիարակչական , գեղարուեստական եւ քաղաքական խնդիրներին , ես մտածեցի , որ այդպիսի ծրագրի իրագործութիւնը , յայտնի բան է , այնպէս էլ հեշտ չէ , ինչպէս «Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս» : Հարկաւոր կը լինի որոնել մասնագէտ ոյժեր , կազմակերպող քանքարներ , անխորտակելի եռանդ , պայծառ միտք , լայն հայեացք , որոնցով ազգի ցրուած բեկորները կարելի կը լինի միացնել գիտութեան օղակով : Այդ պէսպէս յատկութիւնները , դուք , անտարակոյս կը գրտնէք մեր բանասէրների մէջ . աւելի դժուար կը լինի բանաստեղծական-գեղարուեստական մասը յարմարելու : Մի որ , արուեստների ծաւալումը , որպէս գիտութիւնների ծաղկահասը , պահանջում է սերնդէ սերունդ հոգեւոր եւ մտաւոր կրթութիւն , որ շատ պակաս է մեզ , որովհետեւ երէկ միայն ոտք ենք դրել կրթութեան շեմքի վերայ եւ այն « դոյզն ինչ եւ դուն ուրեք » . երկրորդ որ , դարուս տնտեսական-շահախնդրական հոսանքը իւր կապիտալիզմով ու պրոլետարիզմով քաշել տարել է իւր հետ բոլորիս , — մի հանգամանք , որից եւ առաջացել է իտէալների սպառումը մանրացած մարդկութեան մէջ : Անկասկած , իտէալների աշխարհը վերաստեղծելու համար , պէտք է արմատական յեղափոխութիւն մտցնել սոցիալական կեանքի եւ մանուկ սերնդի դաստիարակող սիստեմի մէջ , որ , դժբախտաբար , ներկայումս մի անհնարին բան է երեւում քաղաքակրթութեան աչքում : Ինչ եւ իցէ , ձեր հանդիսի գեղարուեստական մասը լրացնելու համար , դուք էլի պիտի դիմէք այն սերնդին , որի ներքին մարդը ի բնէ արարող զօրութիւն է , բանաստեղծական է , գործընդունակութեամբ գերազանցում է հին սերունդին : Ահա այս առիթով ես կամենում եմ մի քանի խօսք խօսել :

Դուք ինձանից խնդրում էք , որ ես « իմ ներշնչումներով գեղեցկացնեմ » ձեր նոր Հանդէսը : Պատասխանում եմ . ես իմ երեկոյացած օրերին ո՞րտեղից քաղեմ « այդ ներշնչումները » : Ես գիտեմ որ մանաւանդ այժմ պէտք է ոչ միայն

ընդ : Բայց եմ է « Անահիտ » այդ գործը կատարելու յատկացուած չէ , այն անմերը որ « Անահիտ » ճիւնցին , եւ որոնք արդէն իրենց կրցածը ըրին Պ. Շահագրգեանցի նշանակած ուղղութեամբ , անշուշտ անհատապէս պիտի շարունակեն այդ գործունէութիւնը : Քրանսերէն հրատարակութիւններով եւ հրապարակախօսութիւններով :

հրեղէն տողերով , այլ եւ հրեղէն գործերով մաքառիլ իրական կեանքի խաւարի դէմ , բայց , աւա՛ղ , այն ինչ որ ինձ պարգեւել էր բնութիւնը , թուում է որ կամաց կամաց ձեռիցս գնում է եւ հեռու չէ ժամանակը , երբ միանգամայն կը մնանկանամ : Բաց ի սրանից , հին սերունդի ուղեղը առհասարակ ճնշուել է իւր տեսած պէկոծութիւններից , այնպէս որ շատ մարդիկ չէք գտնել նրա մէջ , որոնք տակաւին պահել են մաքի թարմութիւն եւ կարող են աջակցել ձեր գեղեցիկ ձեռնարկութեան : Այն ինչ ձեզ հարկաւոր են կենսագործող սկզբունք , վերանորոգիչ նախաձեռնութիւն , եւ իմ կարծիքով , դրանց պիտի որոնել այն սերնդի մէջ , որ մի յոկ ուսիրով ընդունակ է հազարին գիմագրաւել եւ շանթարձակ ներշնչումներով մեր դիակները մէջ էլ կենդանի շունչ փչել : Այդ երիտասարդական հասակն է որ իւր թաթաղուն ու գեղուն հիւթերով այնքան առաջադէմ է հանդիսանում լուսաւոր ազգերի մէջ : Եթէ ես Յետու Նաւիի պէս կարողանայի հրամայել բնութեան , որ նրա օրէնքները շեղուին , որ երկնքի լուսաւորները տեղից չչարժուին , ապա կը ցանկանայի , որ երիտասարդական հասակն էլ կանգ առնէ , այլ եւս առաջ չգնայ , — մի հասակ որ ինքնաբոյս գոհարի նման դիպէ ցոլացնել իւր մէջ այն որ անփոփոխ ազնիւ է , անպայմանապէս գեղեցիկ : Այո՛ , այսպէս եմ ճանաչում առհասարակ երիտասարդութիւնը , որի մէջ անլուրի պիտի հնչէ սիրոյ եւ աշխատութեան երգը , որի սրտում աստուածեղէն կրակը , վառ եւ բորբոք լինելով , պիտի ոգեւորէ նրան սկայական ուսերով հասարակաց բեռը տանելու : Բայց ես չեմ ուզում կեղծաւորել երիտասարդութեան , չեմ ուզում այնպէս ոսկեզօծել նրան , որ իբր թէ նա բնաւ պակասութիւն չունի : Նրա մի մասը մեր խաւարային կարգերի շնորհիւ ինքն էլ խաւարուած է անարժան գործերով . նա անտես անելով զրականական ծանրակշիւ պահանջները եւ իտէալական ձգտումներին զաւաճանելով , անձնատուր է լինում ստրկամտութեան , հանապաղ կամակատար է հանդիսանում խանրմներին ու խաներին , միայն թէ կարողանայ հնձել այնտեղ ուր նա վարուցանք չի արել , քրտինք չի թափել : Այդ տեսակ երիտասարդների գործունէութիւնը այսպէս լինելով , նոքա ամենեւին չեն կամենում լսել ընդհանուր բարօրութեան մասին եւ , այդ պատճառով , պատրաստ են այն բարօրութիւնը մի բաժակ գինիով ծախել , որով եւ անդադար

Ղլատում են իւրեանց ոյժերը կափէ-շանտանների միմտըրաում: Բայց այս վատ սովորութիւնը նոքա փոխ են անում հասարակութեան յայտնի շրջաններից, որոնք ոչ մի հասկացողութիւն չունին մանկավարժութեան մասին, բաւական են համարում միայն իւրեանց մարմինը պարարտացնել եւ այդպէս բարի օրինակ լինել զիւրութեք երիտասարդներին: Ինչ եւ իցէ, սոքա, անտարակոյս, երիտասարդութեան բիծերն են, բայց արեգակն էլ բիծեր ունի. ո՞վ կարող է ասել որ արեգակը աշխարհի կենսատուն չէ: —

Ահա այսպէս՝ թելադրուած նոր սերնդի վերը յիշած յատուութիւններից, ես կամեցայ որ դուք, որպէս հոգեբանական կեանքին աւելի հմուտ մի մարդ, առանձին ուշ դարձնէք այդ սերնդի վերայ, քաջալերէք զրան դէպի գեղարուեստական ասպարէզ՝ Անանիսի միջոցով:

Որքան էլ հիասթափութեան մշուշներով պաշարուած լինէր մեր սիրտը ներկայումս, այնուամենայնիւ մենք հաւատում ենք, որ մեր աղբի վիճակը ապագայում կը լինի աւելի միթաբարկան: Անցածում ու ներկայում, արգարեւ, մենք միայն տեսնում ենք դառն փորձեր ու ձախորդութիւններ, բայց մենք չենք կորցնում մեր յոյսը, որ ապագան կը սայ մեզ պայծառ խեղաներ, ազգապահութեան խարխիս, քաղաքակրթութեան հաստատ հիմք:

Առ ի սրտէ ցանկանում եմ ոսկէծղի Անահտին, — այդ հեթանոս Հայերի զգաստութեան մօրը, որ մեզ էլ բոլորիս զգաստացնէ ազգային գաղափարներով՝ առանց կրօնի խտրութեան: Արգարեւ, ժամանակ է մեզ քաղաքականապէս առողջանալ, ժամանակ է բոլոր Հայերիս՝ ե՛ւ Լուսաւորչականին, ե՛ւ Հայ-հռովմէականին, ե՛ւ Աւետարանականին՝ ձուլուել մի եղբայրութեամբ մեր նուիրական ազգութիւնը պատասպարելու, որ դժոխային հալածանքների երեսից սահելով, այսօր կանգնած է դէմ յանդիման եւրոպական քաղաքակրթութեան առաջեւ եւ իրաւունք է պահանջում նոյն քաղաքակրթութեան պատուը վայելելու: Նայելով այդ երեք դաս ազգակիցների յայտնի եւ թագուցեալ երկպառակութիւնների վերայ, ես կամէի ասել նրանց այն ինչ որ Մովսէս մարդարէն ասաց գերի Հրէաներին Եգիպտոսում, երբ նոցանից մէկը ծեծում էր միւսին՝ «Ընդէ՞ր հարկանես զընկերդ», եւ կամ՝ նոր կտակարանից ասեմ. «Արք եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս»: —

Մովսէս Ա ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ  
10 Նոյ. 1898

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՏՂԱՔՆԵՐ

Մութ անձկութիւն մը կոկորդս կը սեղմէ ամէն անգամ որ կ'իմանամ թէ տղայ մը անձնատպան եղած է: Ծնողքներուն հրէշային վարմունքին մէջէն, այդ տանջուած հոգիները կ'երեւակայեմ, տխեղձ ծաղիկներու պէս որ ինքզինքնին կը փեթոտեն արեւին ու ջուրին կարօտէն չտանջուելու համար: Բայց այդ ծայրայեղօրէն դժբաղդ էակներէն աւելի իմ սիրաս շարժած են միշտ այն զգայնիկները որոնք հըպուսի մը ներքեւ կը թոռմին: Անցեալները իմացայ որ պղտիկ աղջիկ մը ինքզինքը կախած էր մօրմէն յանդիմանուելուն համար: Այդ չափազանց սուր զգայնութիւնը, յանդիմանութեան մը իսկ չտոկացող այդ ջղազրգուութիւնը եթէ զիս կը սարսուացնէ, բնաւ չի դարմացներ շակայն: Անիկա ինծի կը թուի սկիզբէն ի վեր տանջուած պղտիկներուն զեղումը. այդ խեղճ աղջիկը իր արիւնին մէջ ունէր իր դժբաղդ քոյրերուն տենղը, անոնց տոկացած սարսուռները, որ դարերու մէջէն իրեն հասած էին:

Այդ չուանը իցի՛ւ թէ տխեղձ ցաւագին այդ վզերուն վերջինը սեղմած ըլլար:

Այս մարտիրոսուհին միտքս կը բերէ յուզիչ յիշատակ մը դպրոցի կեանքէն: Այն ատեն թաղային վարժարան մը կ'երթայի, եւ իմ ընկերուհիներուս մէջ պղտիկ աղջիկ մը կար ութըտասը տարեկան, ճանչցուած՝ ոչ միայն դպրոցի աշակերտներէն այլ բոլոր թաղեցիներէն՝ իր «անառակ Զուարթ» անունովը: Վայրենի բնութեամբ, անզուսպ, անհնազանդ աղջիկ մըն էր: Անսովոր խանդ մը կարծես ամէն վայրկեան անոր արիւնը կ'եռացնէր. անհանդարտ եւ խրոխտ, դեռ կը յիշեմ զինքը իր սեւ կրակի պէս աչքերով, գանգուր ու խիտ մազերով եւ հեգնող շրթունքներով: Բնաւ չար չէր սակայն, կը բաւէր որ արգելք չըլլային ուզածը ընելու, մտքէն անցածը գործադրելու: Քանի մը անգամ վճռատուած վարժարանէն, ծնողքը վերջին անգամ մըն ալ խընդրած էին վարժուհիէն զայն ընդունիլ, միշտ կրկնելով «միտը ձեզի, ոսկորը մեզի»: Ա՛լ անկէ հտքը դպրոցի պաշտօնականներուն համար գործ մը սկսաւ դասարաններուն մեծ ձանձրոյթը մոռնալու կամ իրենց թմրած հոգին ցնցելու համար, եւ ամենքն ալ ոխերիմ այդ պղտիկ աղջկան, միացան միայն անոր ոսկորը դարձրնելու ծնողքին: Ամէն օր կը ծեծէին զինքը. մետաղէ եզերքնե-

րով քանակ մը անոր վախ մատներուն կը զարնէին . դեռ կը լսեմ այդ չոր, անողոք հարուածը, եւ աչքիս առջեւն է պզտիկին հպարտ գլուխը եւ ցաւով լեցուն նայուածքը : Տղաքը որ առաջ կը վախնային իրմէ, սկսան զայն ծաղրել . կ'ատէին զայն . մէկ քանի հոգի միայն բարեկամ էինք մնացած իրեն :

Հետզհետէ այդ խորոտ գլուխը սկսաւ հակիլ . զգալի կերպով Ձուարթ կը նիհարնար ու կը տօգոնէր : Վերջապէս ատեն մը հասաւ որ հագիւ կը շարժէր , չէր խօսեր գրեթէ եւ գլուխը դաստակին կրթնցուցած երկայն ատեն կը մնար նոյն դիրքին մէջ, աչքերը տեղ մը յառած : Ասիկա չէր բաւեր սակայն որ ա'լ զինքը հանգիստ ձգէին . զայն խելօքցնելու յաղթանակը տանելէ ետքը , ուղեցին որ իրենց տափակ, յիմար դասերը պատրաստէ , ու ձեծերը շարունակուեցան , հարուածները կրկնապատկուեցան այդ դժբաղդ գլխուն վրայ : Ինքը , առանց դիմադրելու , գրեթէ անշշուկ եւ անլաց , կը թողուր որ զինքը տանջէին : Բայց երբ , ուժասպառ , տեղ մը կը հրէին զինքը , այն ատեն աչքերը կը բացատրէին իր ցաւը , դէմքը քրտինքով կ'ողողուէր, եւ երկայն ատեն կը հեւար, ինք իր վրայ ծալուած , ու մոռցուած ամենէն : Օր մը երբ զինքը կը շարժարէին այսպէս , վարժապետ մը , որ կարեւոր դեր մը ունէր այդ դահիճներուն խումբին մէջ , վրայ հասաւ ու հայհոյանքներով մօտենալով Ձուարթին , երեսն ի վեր պոռաց .

— «Մեղա՛յ» ըսէ՛ . . .

Ձուարթ անոր նայեցաւ , անշշուկ :

— «Մեղա՛յ» ըսէ՛ , անշնորհք, «մեղա՛յ» ըսէ՛ . Տեսնելով որ չպիտի պատասխանէ , ուսէն բռնեց ու ցնցեց զայն իր ծոյլ բազուկներուն բոլոր ուժովը :

Աղջիկը կատաղի նայուածք մը պտըտցուց շուրջը . գլուխը կը դառնար, եւ ինքիմէ ելած՝ սկսաւ խնդալ ամբողջ մարմնովը հեծկլտալով . բարակ թեւերը կը շարժէր դիւահարի պէս , եւ սուր քրքիջը անաւոր բանի մը պէս կը թափառէր սրահին մէջ . ամենքս սարսափած կը նայէինք . այն ատեն , վարժապետը , տեսնելով որ, ոչ մէկ բան կարող պիտի չըլլար այդ խեղճ աղջիկը իր ոտքերուն ներքեւ ընկճելու , անոր թեւերը կապեց եւ սրահին մէջտեղը հրելով պոռաց .

— Ով որ սա լիբբին երեսը թքնէ , բարենիշ մը պիտի ստանայ . . .

Բարենիշ մը . ամենքը, լուռ, չշարժեցան :

— Բարենիշ մը, կ'իմանա՞ք, երկու բարենիշ ...

Շուարած իրարու կը նայէինք թէ ո՛վ պիտի ըլլար առաջին շարժումը ընողը : Բայց մրմունջ մը անգամ չլսուեցաւ : Ձուարթ սթափած կը թուէր ու ջինջ աչուրներովը շուրջը կը նայէր . անոնց տրտում պաղատանքը աւելի հրամայեց մեզի քան թէ բարենիշին խոստումը : Այն ատեն վարժապետը մօտեկցաւ եւ ինքն իսկ սկսաւ թքնել անոր երեսին , մէկ , երկու , երեք անգամ :

Ձուարթ վայրկեան մը զրգուեցաւ ու թեւերը ցնցեց, ի դուր, կապէն ազատելու համար : Ինչպէս մորթը վիրաւորուած ըլլալու էր այդ գարշելի խոնաւութենէն, ինչպէս իր խեղճ սիրտը այրած էր ատոնք ամենքը ապտակելու փափաքէն : Յետոյ մեռելի պէս դեղնեցաւ եւ ինք իր վրայ գետինը ինկաւ :

Վա՛տ, վա՛տ մարդիկներ . այն օրը հանդիսաւոր կերպով օրինակը կուտային իրենց խնամքին յանձնուած բոլոր այդ պզտիկներուն՝ աշխարհիս ամենէն անարդը , ամենէն ցածր ըլլալու :

Արդէն իրիկուան արձակուրդի ատենն էր , մէկ քանի հոգի միայն մնացած էինք . զգուշութեամբ մօտեցանք Ձուարթին եւ տեսանք որ նուազած էր : Գլուխը տարօրինակ կերպով կը ծանրանար մեր թեւերուն վրայ . զինքը կապող չուանը մորթին վրայ մանիշակագոյն գծեր շինած էր . մատները ուռած էին : Հազիւ կրցան զինքը կեանքի բերել եւ տունը դրկեցին : Երկու օր ետքը իմացանք որ մեռեր էր ուղեղի տենդէ մը :

Հիմա , ամէն անգամ որ կը լսեմ պզտիկի մը մեռնիլը , սիրտս սուգով կը լեցուի . ու կը խորհիմ զիրենք տանջող արարածներուն որոնք մահէն աւելի սոսկալի են , որոնց հարուածներէն նախընտրելի է հողին գգուանքը : Ա'լ բաւական համարէին իրենց զոհերը ու թողուին որ այդ պզտիկ հոգիները հանգիստ ընեն վայրկեան մը , շունչ առնեն եւ չցաւին իրենց անցուցած օրերուն համար : Թողուին որ այդ մեծ ձանձրոյթը հեռանար անոնց պզտիկ սրտերէն եւ կարենային ապրիլ, թռչուններուն, թիթեռնիկներուն պէս :

Խե՛ղճ վախ պոյութիւններ , պիտի ուզէի որ ձեր մեռնելէն ետքը , ձեր դառնացած սրտերը ծաղիկներ ըլլային , վայրենի համեստ ծաղիկներ, որպէս զի գոնէ այն ատեն կարենայիք ապրիլ, բնութեան տուած բոլոր ուժովը , արեւին տաքութիւնը խմելով , երջանիկ :

ՉԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



Ո Ւ Ր Ո Ւ Ա Գ Ի Ծ Ն Ե Ր

Մ Ե Ն Ա Ի Ո Ր Ը

Շողենաւը Մաղարանի հրուանդանը պիտի որորէր: Բոլոր ճամբորդները աճապարեցին կամրջակին վրայ ելլել որպէս զի տեսնան Մաղարանի մենաւորը, ծերունին որ տարիներէ ի վեր այդ ապառաժուտ առանձնութեան գագաթը կը բնակի:

Ծովը յանկարծ փոխուեր էր. սեւերանգ ալիքներ ահօս ահօս կ'ընէին զայն եւ կարծես զայրոյթով կը զոփային. տեղ տեղ փրփուրը պտուտքելով կը փեռեկէր ջուրը, եւ ամբողջ ծովը խոցալից կը թուէր: Շողենաւը ահագին շառաչմամբ կը ձմէր կը փշրէր ըմբոստ կոհակները:

Առջեւինս մերկ լեռը կը բարձրանար, որուն վրայէն ամէն թուփ խլեր տարեր էին փոթորիկն ու քամին: Քար, միայն քար կը տեսնէիր այդտեղ, գորշ ու խոշոր խարակներ որոնց ընդարձակ տխրութիւնը ահաբեր էր սրտի: Եւ ահա վերը, հեռուն, սպիտակամորուս ալեւոր մը կանգուն կեցած էր, ձեռքը խաչանիչ ցուպ մը: Քանի մը որորներ դէպ ի երկինք կը բարձրանային եւ կը ճախրէին գլխուն վրայ: Շողենաւը սուլեց եւ հեռացաւ:

Եւ ամենքն սկսան այդ մենաւորին վրայ խօսիլ, զարմանալ անոր համբերատար տքնութեանը վրայ: Կանայք սրտի ցաւ մը պատճառ կ'երագէին անոր աշխարհէս անջատմանը. այլք, սոսկալով հոգոյ այսչափ վեհութենէ որ ինքնարաւ կը գոհանար, կը ջանային ծաղրել զայն: Մարդկային բոլոր անմիտ չարութիւնը երեւան կ'ելլէր՝ որ չ'ընդունիր ինչ որ սովորական չէ: Էրիկմարդիկ քմծիծաղով մը նաւածնօտին կըրթնած՝ կը ծխէին ու կանանց թեթեւ կատակներ կ'արձակէին, մինչդեռ ծովը ողորմ ողորմ կը մենչէր, եւ քամին միահամուռ ողբ կը դարձընէր անհուն միայնութիւնը ջրոյ եւ ցամաքի: Եւ երկինքը կը աժգունէր:

Սակայն ես սրտիս խորէն եղբայրաբար ողջունեցի զանի որ քամահրեր էր զմեզ:

Եւ մտօքս ըսի — Ո՛վ մենաւոր, ի՛նչչափ կը նախանձիմ քեզ: Ի՛նչչափ երջանիկ ես որ կըրնաս դու քու ինքնութեամբդ շատանալ: Այդ խարակին վրայ կանգուն, տիեզերքը կ'ողողես խոհուն հոգեովդ եւ կը լեցընես ամբողջ աստղալից գիշերը: Քու լուսութեանդ ոչինչ կը հաւասարի. բազմաձայն ծովը, կահանաւոր հոգմը

այնչափ վեհ չեն որչափ դու որ մտիկ կ'ընես զանոնք: Աշխարհիս ճանճրութիւնը ա՛լ չի լուկեր զքեզ, վասն զի միայնութիւնը հանդարտեցուց եւ ընդարմացուց զքեզ: Եւ այդ անյուսութեան հորիզոնն անգամ չի կրնար զքեզ խոռովել. վասն զի կամաւոր անգործութեամբ ունայնութեան վարժեցար: Ոչ սրտի խայթը կը ճանչնաս եւ ոչ սնտոի փափաքը այլոց հաճելի ըլլալու: Դու հանդարտ եւ կարծես անմահ՝ առանձնութեան ազատութիւնը կը վայելես — մէկ հատիկ ազատութիւնը:

Ա Ջ Բ Ը

Փափաքեցայ նորէն տեսնել այդ սոււնը: Ամայի էր հիմայ: Ծառոնց ի վեր ոչ ոք բընակած էր այդտեղ:

Յիշատակը, կ'ըսէի ես, անշուշտ սանդուղներուն վրայ կը թափառի հիմայ ալ՝ հեղզ տարտում: Պատուհանները ամբափակ էին եւ քայքայուն բունիկներ կ'երեւային ամէն կողմ: Ժանգոտ բանալին դժուարութեամբ փականքը մտաւ:

Ներսը մութ էր, եւ զատարկ ղեփինը ոտուրներու տակ կը թնդար: Սենեակ մը բացի. ծխնին սուր ճոխնչ մը արձակեց. անտարակոյս հոտ ոչ ոք կրնար ըլլալ, բայց ինչո՞ւ հարկ եւ զաւ ինքզինքս ստիպել որ այդ անբնակ խուցը մտնեմ: Խիստ մութ էր, խիստ լուռ էր: Հընութեան հոտ մը կը բուրէր միայն:

Ես բոլորս կը նայէի՝ դեռ խաւարին անվարժ: Ու խորչէ մը սկսաւ ղեղին աչք մը վեր բարձրանալ թռիլ: Դեղին աչք մը՝ խոշոր բացուած: Այնչափ խոռովութեամբ ընկրկեցայ որ գլուխս պատին ընդհարեցաւ:

— Ո՛վ է ան, պոռացի կերկերածայն: Ծընկուրներս կը զոզողջէին:

Բայց սենեակը լուռ էր եւ մութ: Դեղին աչքը կամաց կամաց մինչեւ ձեղունը բարձրացաւ, աներեւոյթ եղաւ: Փութացի տնէն դուրս ելլել: Աքրորականչ մը ուշաբերեց զիս: Ի՛նչ սոսկում էր այդ, ի՛նչ սոսկում էր որ կուտար այդ սոււնը: Ո՛չ, չէի կրնար զայն այցելել: Ա՛խ, թո՛ղ տանք որ անցուկը անցուկ ըլլայ:

Վ Ա Ր Դ Ը

Ատեն անցաւ՝ կը բնակէի ծովամօտ տուն մը որ վարդալից պարտէզ մը ունէր: Այդ բոսոր պարտէզը լաւ կը յիշեմ:

Ի՛նչ խորհրդաւոր եւ նորանշան թովչութիւն

մը ունի վարդը իմ սրտիս վրայ : Ոչ թէ կը սիրեմ զայն , այդ գեղեցիկ ծաղիկը որ մարդկութեան վայելքն է , այլ խոր շփոթութեամբ , գորովալից հոռովութեամբ կը փղձկիմ երբ զայն ձեռքս կը բռնեմ : Ո՛հ , ի՛նչչափ փափուկ գազափարներ կը պաշարեն զիս , ի՛նչ անքննելի կակիծ կը շարժէ հոգիս երբ նորափթիթ վարդ մը քաղեմ թփին վրայէն : Շատ անգամ ջանացի այդ զգացմանց առիթը զննել , շատ անգամ ջանացի բացատրել զանոնք , սակայն անհնարին եղաւ , բանաստեղծութեան շնորհը կը ջլատէր եւ չէր կրնար միտքս մեկնաբանել :

Այդ պարտէզին մէջ ուր վերջալուսի պահուն մանաւանդ ծաղիկները ծիրանի բորբոքում մը կը ծաւալէին եւ քաղցրաշունչ բուրմամբ կը ծփային , ես կը կարծէի անծանօթ աշխարհ մը ման գալ՝ ա՛յնչափ սրտայոյզ էի : Անուշահոտութեան արբեցութեամբ բոլոր պղտորած՝ կը կարծէի այդ թփիկներուն տակ տարօրինակ եւ աներեւոյթ հոգեոց սօսափունք լսել : Կը կարծէի հոգևով խորհրդաւոր շնչմանց խիստ մօտը երթալ երբ կը կորանայի ծաղիկ մը վրայ ու կը հոտոտէի զայն :

Խաղաղ ծովն ալ առջիս կը ծածանէր կարմրադոյն ակօսներ որ վէտ ի վէտ կ'երկնային :

Կարմիր էր նաեւ երկինքը . եւ այդ արեւելեան կարմրադոյն սուզը զիս կը պաշարէր կ'ընդարմացներ :

Բանութեամբ կը քաղէի վարդ մը — եւ հանդարտ արտասուք մը կը սկսէր կաթիլ երեսս ի վար :

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



ՄԵԿՆՈՒՄ

Իրիկունն իջաւ , երկինքը մըքնեց .  
 Ծովուն վրայ սրժգոյն շուփեր քափեցաւ .  
 Բաղասն իր կարմիր յոյսերը վառեց .  
 Երջանիկ՝ յոյսովն ակնուշ գիշերուան :

Կես մութին մեջեկն , նուրբ զակզակ մ'անկեստ  
 ձրոռուողեց վրճիս քրքրոռումներով .  
 Նաւահակիսը քաղցր է գոգի մը պես ,  
 Բունիկն զով քելիկն ներքեւ՝ ապահով :

Բայց անպ կայ երկինքն , հով անցաւ օդեկ . —  
 Յանաքը հիւնս գաղջ է եւ խաղաղ .  
 Լոյսերը զըւարթ երազներ կ'երգեն .  
 — Անդիկն , ծո՛ւր ժանն ու խաւա՛րը պաղ :

Ու կը բաժնըռիկն մեկն հիւնս կ'երքանն .  
 Նաւն անս սուշեց . մնաս քարով , քաղա՛ք .  
 Մարեցաւ զակզակն , ու մեկն կ'ընքանակն  
 Տըխուր ծովին մեջ , մութին մեջ դարձակ :

ՏԵՐՎԻՇ



ԽԱՄՍԻՆ

Գահիրէի կապոյտ երկինքը մ'ընցաւ եւ արեւը իր ակնախտիդ ճառագայթներովը սուզը մտաւ :

Աւազին դեղին հատիկները սկսան զեռնէն վեր ելլել , ու խաւսին , սուկալի խաւսին սկսաւ փչել :

Տաք հովը ոլոր ոլոր կը բերէր փոշին՝ օդուն մէջ ցանելով , անցորդին աչքը կը կուրցնէր :

Հետզհետէ սաստկացաւ . սնապատէն կը փռչէր , եւ ոռնալով զայարելով դէպի քաղաք կուգար :

Տներուն փեղկերը կը զարնուէին , պատահաններուն ապակիները կը թնդային , եւ մեծ արագութեամբ աւազը աներուն առաջը կը դիզուէր :

Մարդիկ իրենց բնակարանները քաշուեցան , եւ՝ չորսդին փակ՝ ծալապատիկ նստած իրենց բաղմոցներուն վրայ , ախրութեամբ փոթորկին վերջը կը սպասէին :

Քանի՞ օր պիտի տուէր :

Գահիրէի զուարճատէր ժողովրդեան պատուհասն էր խաւսին , որ կ'արգիլէր դուրս ելլել , երգեցիկ սրճարանները երթալ :

Ի՛նչ ցաւով ու ճանճութեամբ իրարու կը նայէին . թերեւս երեք օր շարունակէր անիծեալ հովը :

Քամին միշտ կը փչէր , տարտամ ու միօրինակ սուլումներով . զեռնէն մուխի պէս բան մը կը բարձրանար . փոշին վեր կ'ելլէր , արեւուն մէջ զանակներու պէս կը թափիփէր :

Օդը թանձր էր . անտանելի ջղոտութիւն մը կը հոսէր ամէն կողմանէ . հեռուն , անսահման եւ անծանօթ անապատը հետզհետէ մուխին մէջ կ'անհետանար :

Անպլիական զօրանոցին մէջ սաստիկ մտահոգութիւն մը կը տիրէր :

Ճէյմս զօրապետը , նորեկ մը , առաւօտուն կանուխ իր սպիտակ ձիուն վրայ նստած , պը-

տոյտի երեր էր, եւ ահա իրիկուն կ'ըլլար, եւ ան երեւան չէր ելլեր:

Ճէյմս Մոտ, լորտի մը երկրորդ դաւակը, երբիտասարգէր, եւ բնութեան անոր տուած անհանդարտ աշխուժութեամբը՝ միտքը դրեր էր ինքն իրեն համար վիճակ մը ու հարստութիւն մը ստեղծել: Եգիպտոս հասած օրէն ի վեր հետաքրքրութեամբ ամէն կողմ կը թափառէր:

Փարաւոնի քաղաքին մէջ, ամէն ինչ կը փայփայէր զանի:

Օղբ, գիշերը, կանանց նայուածքները, կաքաւիչ թուխ աղջիկները խոտվեր էին անոր հիւսիսային բնոյթը:

Ճէյմս, փոթորկէն բռնուած, կը մտրակէր ձին. ազնիւ անասունը, օգուն մէջ ծածանելով եւ պոչը ուղիղ, ճպտին հարուածներէն կատգած, կը վազէր, արագ եւ միօրինակ վազքով մը:

Անգլիացին, կարծես գեանէն վեր ամբարձած, կը շարունակէր ճամբան, եւ երեւակայութիւնը մոլեգնած այդ երկայն արշաւանքէն, Գահիրէ հասած օրէն ի վեր բոլոր տեսածները կարգաւ աչքին առջեւ կը բերէր:

Արմաւենիներուն ծայրերը ահագին խարշափմամբ կը խփրտային. Նեղոսին պղտոր ջրերը, կարծես հողմահար ճօճացնելով, շարժուն ընդարձակ դաւառ մը կը ցուցնէին անոր առջեւ:

Յիշեց երգեցիկ սրճարան մը ուր գիշեր մը անցուցեր էր:

Սյգաեղ աղջիկ մը: Անապատի աղջիկ մը:

Սչուրները երկայն ու սեւ, կարծես նայուածքին բացատութենէն այրած, իրեն կը նայէր ան:

Բեմը կը տեսնար եւ սրահը՝ լի ժողովրդով եւ լոյսերով. հոտ թանձր օդ մը կը տիրէր. կաքաւչուհին մանր ոտքերը կը շարժէր, արիւնանիչ ձեռքերը կը ճօճէր օդին մէջ, կը սկսէր սիրային կաքաւր:

Մարմինը որ նուրբ, փոքրիկ էր, երաժշտութեան հնչմանց համեմատ կը տատանէր, եւ անձուկ ու ճապուկ մէջքը կտոր կտոր կ'ըլլար. հիմա աչքերը խորունկ խորունկ կը նայէին, ինչպէս քանի մը օր առաջ այն սրճարանին մէջ, կէս մը փակ:

Ճէյմս կը շարունակէր իր վաղքը դէպի տուն. պատկերը աւելի կը լայննար. ականջին նոյն իսկ այն ճայները կուգային զորոնք հոն լսած էր. աղջիկը երթալով կը գրգռուէր, ճակատէն քրտինքը կը վազէր, եւ ամբողջին ծափահարութիւնները զանի կը խրախուսէին. յետոյ, իրեն այնպէս թուեցաւ որ բազմութեան ծափահար-

րութիւնն էր, եւ անձոնի ճայներ ականջը խըլացուցին:

Հասած էր իր տունը:

Փոքրիկ եւ սպիտակ ամարանոց մը ունէր Նեղոսին մեռելական ջրերուն մօտը, որուն տընկախիտ եւ ծաղկալից պարտէզը մինչեւ գետափը կ'իջնար. երբ բանալին ձեռքը, դուռը կը բանար, թեթեւ ծիծաղ մը արձակեց:

— Ի՞նչ ծաղրելի է, կը մրմռար, խեղճուկ Ֆելլան աղջկան մը վրայ մտածել. եւ ջրտուութեամբ դուռը կը թօթվէր:

Բայց սեւ զանգուած մը մուտ խորքէ մը դէպ ի իրեն կողմը յառաջացաւ այնպէս համարձակօրէն որ ձին խրտչեցաւ:

Լալազին ճայնով արարերէն բան մը մրմնջեց:

Ճէյմս ճանչցեր էր զանի, եւ գրեթէ բարկութեամբ ետ հրեց:

Փաթիմէն էր, կաքաւչուհին, որ հօրը տունը վերադարձած ատեն՝ փոթորկէն բռնուելով հոտ սպաստանած էր:

Աղջիկը, ոսկի սպարանջաններով ծանրացած մէկ թեւը դէպ ի վեր երկնցուց, եւ սեւ մետաքսէ վերարկուն որ զանի մինչեւ վարը կը ծածկէր՝ մէկզի ըրաւ. այն ատեն, ոտքը երեւան ելաւ որուն վրայ մանր վէրք մը կը նըշմարուէր. անուշ հոտ մը կը փչէր մարմնէն. մուտ սեւ աչքերը անլախճան ակնարկութեամբ դէպ ի երիտասարդը դարձուցած, գրեթէ աղաչանքով կը նայէր անոր:

Փոքրիկ մատերը նորէն շարժեց, եւ նորէն ոտքը ցոյց տուաւ:

Ճէյմս, վերջ տալու համար այս տեսարանին, կռնակէն բռնեց աղջիկը եւ ներս հրեց:

Երեք օր Փաթիմէ հոն հիւրընկալուեցաւ:

Չորրորդ առաւօտուն կանուխ, առանց ծառաներուն ճայն սալու, երիտասարդ Անգլիացին զայն ճամբեց:

Ճէյմս ինքզինքը հանդարտած կը զգար իր առաջուան խոտվութիւններէն. գոնէ այնպէս կը կարծէր:

Օրերէ, ամիսներէ ետքը, ամառը, երբ սօթագին մթնոլորտով Գահիրէ կ'այրէր, գիշեր մը բանակին սպաները, միասին ժողվուած, հայրենիքին վրայ կը խօսէին, ամենքն ալ տխուր քողարկեալ ճայնով մը կը խօսէին իրենց յիշատակներուն վրայ:

Միթէ այդտեղ աստղազարդ կապոյտ երկընքին տակ պիտի մեռնէի՞ն:

Շամբանեայի շիշերը կը պարպէին կցիտուր խօսքերով:

Ո՛չ, ա՛լ կարելի չէր այդ կեանքը . տապա-  
խառն օդը իրենց վրայ վատ ազդեցութիւն մը  
կ'ընէր . պարտէզին ծաղիկները թուլցած զը-  
լուխնին կը խոնարհէին, եւ լուսնին աղօտ լոյ-  
սին տակ, Նեղոսը արծաթափայլ անվերջանալի  
ժապաւէնի մը պէս կ'երկննար . եւ հեռուն, դի-  
մացի եզրը, տափակ մարգագետին մը յանհունս  
կը տարածուէր :

Ճէյմս Մոտ չէր խօսեր, այլ իր խարտեաչ եւ  
թաւ պեխերը անզաղար կ'ոլորէր :

Յանկարծ ոտքի ելաւ . երկայն հասակը գետ-  
նին վրայ մեծ սեւ շուք մը կը ձգէր . ճակատը  
բաց վեր նայեցաւ դէպի լուսինը որ հանդարտ  
կը փայլէր երկնքին մէջտեղը, ու խելագարի  
քայլերով դէպի պարտէզին դուռը վազեց . ա-  
ւազը ոտքին տակ կը խփրտար . փոքրիկ դուռը  
բացաւ, եւ հոտ, միայնութեան մէջ, թեւերը  
երկնցուց :

Դիւրաթեք կին մը, վագրի նման, գիր-  
կը նետուեցաւ, եւ զանի համբուրելով կուլար  
ու կը տրանջար :

— Կը սիրե՛մ զքեզ, կը կրկնէր մեղմաձայն :  
Ամիսներէ ի վեր եկեր էր հաւատարմու-  
թեամբ, եւ անոր դուռը բախեր էր :

Շատ անգամ ծառաները մուրացկանի մը նը-  
ման հալածեք էին զանի կոշտաբար :

Բայց ան նորէն կուգար եւ ականջը կը գնէր  
փակ դրան կղպանքին, գոնէ անոր ձայնը լսե-  
լու յոյսով :

— Սիրելի՛ս, կը մըմնջէր, սիրելի՛ս, վզէն  
բռնած ու կախուած :

— Ալ մի՛ վռնտեր զիս, մի՛ վռնտեր զիս . . .  
Ճէյմս, արբեցած, եւ գրեթէ ինքիւրմէ դուրս  
ելած, անշարժ կը կենար լուսնին զողորջուն  
ճառագայթներուն տակ եւ դուրսը բաց մտիկ  
կ'ընէր :

— Լռէ՛, ըսաւ յանկարծ, լռէ՛, ու մի՛ վախ-  
նար :

Ո՛րչափ ատենէ ի վեր, երիտասարդը դէմ կը  
գնէր իր ախտածէտ կրիցը : Գիշերները, մահ-  
ճին մէջ, չարչարուելով անոր վրայ կը մտածէր :

Արդեօք սէ՛ր էր ատ . ու կը խնդար :

Բայց բոց մը մարմինը կ'այրէր, եւ տեսակ  
մը զգացում զոր կարելի չէր վերլուծել . ամ-  
բողջ զգայարանքները կ'արթննային, եւ կրա-  
կի մէջ կը թաւալէր :

Չէ՛, սէր չէր ատիկա :

Եւ զգուշութեամբ պէտք էր մարտնչիլ այդ  
զգացման դէմ :

Ֆելլան աղջիկ մը, անապատի աղջիկ մը,

վերջապէս ի՞նչ կարեւորութիւն ունէր ան :

Բայց քիչ ետքը, շունչ մը երեսին բոլորը կը  
թափառէր, զինքը նորէն անտանելի վիճակի մը  
մէջ կը նետէր . եւ պատուհանին առաջքը վա-  
զելով, կը ջանար ազատ օդ ծծել . խկոյն կը  
տեսնար շուք մը, գրեթէ աննշմարելի, անշարժ  
կեցած, եւ որ իրեն կը նայէր :

Փաթիմէն էր . ծառի մը կըթնած, սեւ եր-  
կայն աչքերը դէպի վեր կը սեւեռէր :

Անոր լալապին ձայնը ականջին կուգար : Կը  
հեռանար պատուհանէն, կը գոցէր զայն, եւ  
սենեակին մէկ անկիւնը կը փոռուէր :

Ֆելլան կնոջ վտիտ թեւերը կարծես ետեւէն  
կը վազէին . մանր քրտինք մը ճակատը կ'օծէր :

Բայց առաւօտուն կը ծիծաղէր, ինքզինքը կը  
սաստէր, արհամարհանօք կը խօսէր իր անձին :

Աւա՛ղ, գիշերները դարձեալ կը սկսէին իր  
հրեղէն երազները :

Եւ հիմա, ա՛լ յոգնած ինք իր դէմ մաքառե-  
լէն, թող կուտար որ աղջիկը զանի օձի պէս  
պատէ պաշարէ :

Ալ անո՛րը եղաւ : Ու կապուեցաւ անոր հետ,  
այդ հողին, այդ օդուն ու ջրին ալ :

Երբեմն, զովարար յիշատակի մը պէս միտքը  
կուգար Անգլիոյ կեանքը : Բայց ա՛լ կարելի չէր  
զատուիլ այդ տաք մթնոլորտէն, այդ բոց աչ-  
քերէն :

— Ես ալ խմեցի, կ'ըսէր ինքնին, Նեղոսի ջը-  
րէն, որ երակներուն մէջ կրակ կը վառէ :

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՍՎԱՃԵՍՆ

ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Նովելլի . — Ռոսեուպաֆ . — Լավիտի հառք . —  
Միցիսիվիչ

Օտար արուեստագէտները որ Փրանքօ-բրու-  
սիական պատերազմէն ի վեր դադրած էին Բարիզ  
գալէ, քանի մը տարիէ ի վեր նորէն սկսան ի-  
րենց համբաւը («Բարիզի նուիրագործութիւն են-  
թարկել»), ինչպէս կ'ըսեն : Անցեալ տարի Տու-  
զէն եկած էր ներկայացմանց շարք մը տալ . այս  
տարի ունեցանք Նովելլին : Նովելլին, ինչպէս  
Տուզէն, զերասանական նոր դպրոցի մը կը  
պատկանին, կամ աւելի ճիշդ է ըսել, ստեղ-  
ծողներն են այդ նոր դպրոցին : Իրական, տը-  
պաւորական դպրոցն է զոր զրականութենէն ա-

ուած թատրոնի վրայ փոխադրած են : Տարբեր իրենց մեծ ուսմանդիկ նախորդներէն , Սալվի- նիէն , Ռոսսիէն , լա Ռիսթոփէն , որոնք քնա- րերգական լայնութիւն մը կուտային իրենց խաղացուածքին , այս նոր արուեստագէտները ուղեցին կեանքը թարգմանել բեմին վրայ , ի- րական , պարզ կեանքը , իրեն յատուկ անսե- թեւեթ ու տրոփուն բանաստեղծութեամբ : Իտալացի ցեղին յատկանիշը եղող բնիկ գաղա- փարականութիւնը արգիլեց այս նոր տաղանդ- ները այն ծայրայեղ իրապաշտութեան մէջ ինչպէ , զոր ունին Փրանսացի գերասաններէն շատերը որ կը կրնին պարզապէս բեմին վրայ ինչ որ սալոնի մը մէջ պիտի ընէին . Տուզէ եւ Նովելլի իրականութիւնը կ'արտայայտեն այն- պիտի անձնական շեշտով մը , այնպիսի սաս- տիկ զգայնութեամբ մը , այնպիսի մեծ պերճա- խօսութեամբ մը , մանրամասնութեանց ընտրու- թեան եւ արժեքման այնպիսի գիտակցութեամբ մը , որ իրենց արուեստը , արդի պարզ կեանքը ցոլացնելով հանգերձ , տեսլական , համադրա- կան արուեստ մըն է նորէն : Ատոր համար է որ իրենց գերազանցութիւնը զգացուեցաւ Բա- բիլի մէջ , ուր դերասանները կա'մ չափազանց ստեղծամոլ ու արուեստակեալ են , կա'մ չա- փազանց դիտող եւ ընդօրինակող : Այդ Իտա- լացիները ասարօրինապէս անկեղծ են , յայտ- նապէս կը զգան խաղալու ատենին , կ'ապրին . մինչդեռ Փրանսացիք սուսուց կը պատրաս- տեն , կը հաշուեն , կը շարադրեն դերը , եւ ներ- կայացման ատեն՝ ծրագրուածը կը կատարեն :

Տուզէի եւ Նովելլիի արուեստը հոյակապօրէն կը յարմարի արդի կեանքի խաղերու , նոր ոգւով զրահանութեան : Երկուքն ալ անբազաւտելի են երբ Իպսէն , Տիւմա որդի կամ Ճիւքոմէզդի կը խաղան : Չեմ կարծեր որ այդ արուեստը պատշաճի Սոփոկլ կամ Շէքսպիր ներկայացընու- լու : Տուզէ իր խաղացանկին մէջ հին հեղինակ- ները չէ մացուցած : Նովելլի իր խաղացանկը չափազանց ընդարձակած է . կը խաղայ Շէքս- քիրի բոլոր կարեւոր խաղերը , Կոլտոնիի կա- տակերգութիւնները , Իպսէնի տոմասերը , եւ իտալացի կամ Փրանսացի նոր հեղինակներու գործեր : Տեսանք զինքը այդ ամէն երեւոյթ- ներուն մէջ . անտարակուսելի է որ միշտ , ամէն գերի մէջ , անկեղծ է , իսկատիպ է , եւ հետեւա- բար հիանալի . բայց կարելի չէ չխոստովանիլ որ արդի կեանքի պատկերացումներու մէջ շատ աւելի կատարեալ եւ յաջող է քան թէ պատ- մական ստեղծագործութեանց մէջ . Հաւ-

րթին մէջ , որմէ տեսարան մը միայն ներկա- յացուց , ի յայտ բերաւ Համէթ մը արտասովոր կերպով նոր , անձնական եւ շղուտ . բայց իր դէմքը , երկայն ու նիհար , ոսկրուտ , զուրկ այն բարձր շնորհէն ու վեհութենէն զոր կը փնտոնենք շէքսպիրեան մեծ տիպարներուն հա- մար , մեզի չկրցաւ տալ մեղամաղձիկ արքայոր- դոսն տպաւորութիւնը , ինչպէս նաեւ իր խա- ղացուածքը , քիչ մը չափազանց իրական եւ արդի կեանքի մանրամասնութիւններով լեցուն , սովորական ո եւ է մարգու գոհեիկ շարժումնե- րէն ոչ դերձ , չներշնչեց հիւանդ ու խոհալից ազնուական Համէթին տրտում ու ծանր գեղեց- կութիւնը . մտքերնիս եկաւ , ինքնին , մեր խեղճ մեծ Ադամեանին դիցական դէմքը եւ ազնուա- շնորհ խաղացուածքը այդ նոյն տեսարանին մէջ , եւ հպարտութիւն ու կսկիծ մեր սրտին մէջ իրարու խառնուեցան : Օրթոքոյին մէջ , Նովելլի աւելի այսօրուան Արար մը ներկայացուց քան Շէքսպիրին պատմական Մաւրիտանացին . եւ բաց ի վերջին արարէն ուր դերասանը զար- հուրելի վսեմութեան մը հասաւ , եւ նախանձի տեսարանէն ուր այդ մարդկային պարզ ու նախ- նական զգայման հոգեբանութիւնը գիտցաւ ար- տայայտել շատ հզօր բնականութեամբ մը , խա- ղին ամբողջութեանը մէջ Նովելլի երեւցաւ չափազանց մեղի մօտ , չափազանց սովորական , չափազանց իրական եւ արդի , մինչդեռ Շէքս- քիրին ստեղծագործութիւնը համազրութիւն մըն է մարդկային մեծ զգայման մը , արտաքին ո- րոշ գոյնի մը տակ արտայայտուած , բայց ներք- նապէս գեր ի վեր միջավայրներու եւ թուա- կաններու սահմանափակութենէն : Շէքսպիրեան դերերէն , Շայլոքն է միայն զոր Նովելլի ապ- բեցաւ անզուգական , վճռական , ապշեցուցիչ կա- տարելութեամբ . եւ Շայլոքը Նովելլիի տաղան- ղին յարմարագոյն դերերէն մէկն է իրօք . կա- բելի չէ երեւակայել Շէքսպիրի ստեղծած Հըր- եան , իր հսկայական զձձութեամբ , իր անյա- տակ ատելութեամբ , աւելի զօրեղ ու գունա- լից կերպով մարմնաւորուած : Իսկ արդի կեան- քէ խաղերու մէջ , թերեւս ծայրայեղութիւն չըլլայ ըսել թէ Նովելլի այս վայրկեանիս եւ- րոպայի մեծագոյն արուեստագէտն է : Ոչ ոք մեզի տուած էր այդ տառապանքի անկեղծու- թիւնը , այդ հասկացողութիւնը մարդուն ճա- կասագրական խեղճութեանը , այդ արտասովոր ճապկութիւնը՝ կեանքի ամէն գիմաղիծ , ամէն ծամածոութիւն , ամէն կծկում կամ ծիծաղ իւ- այնելու . Ճիւքոմէթի Քորրասոյին մէջ , Իպ-

սէնի Ուրուականներուն մէջ, Մարքո Բրակայի Աշխուռեային կամ Կոլտոնիի Բարեգործ խոժոռին մէջ, Նովելլի անհաւասարելի թարգմանն է մարդկային սովորական կեանքին. իր թաւ խորունկ ձայնը, սուր սեւ կրքոտ աչուրները, երկայն ջղուտ զէմքը, իր բարձր հասակը, ձկուն մարմինը, եւ իր յեղեղուկ դիւրաթեք դիմազնութիւնը, կարելի կը դարձնեն իրեն՝ ամէն կերպարանափոխութիւնները զգենուլ, ամէն ցաւերը արձագանգել, ամէն ծիծաղաշարժութիւնները պատկերացնել. Կեանքն է պարզապէս, առանց արուեստակութեան, կեանքը միայն, ու ամբողջ:

\* \* \*

Փրանսական գրականութիւնը նոր սուգ մըն ալ ունեցաւ: Կարծես հետեւելով սիրուած վարպետին, Մալաուէին, օրինակին, ղեկտեմբեր 26ի գիշերը, ժողով Ռոտենպաք մեռաւ յանկարծամահ: Ժողով Ռոտենպաք Պելճիքացի էր ցեղով: Պելճիքա ֆրանսական արդի գրականութեան սուած է իր ամենէն բարձր վարպետներէն մէկ քանին, Մեթեոլինքը, Վերհարընը, Հիւզիմանսը, ժողով էքուն, Բամիլլ Լըմանիէն, եւ Ռոտենպաքը: Այդ պելճիքացի գրողները նոր գոյն մը, նոր ուժ մը բերած են ֆրանսական արուեստին. զաւակներն ըլլալով մկանուտ ու հզօր եւ միանգամայն խորապէս միասիքական ժողովրդի մը, իրենց գործը, վայրագ, կամ զգայնոտ, կամ խորհրդաքօղ, կամ հոգեկրկիտ, իր ամէն ձեւերուն ու երեսներուն մէջ միշտ ուժեղ եւ թարմ, իսկատիպ զեղեցկութեան հոյզ մը հոսած է ֆրանսական զգայնութեան մէջ որ ինքնին անարիւն դառնալու վրայ էր. այդ մեծ անկեղծներուն ու մեծ ներշնչեալներուն ձեւերն մէջ, ֆրանսերէնն ալ վերանորոգուած, կնճռոտած, ճոխացած է, թէեւ երբեմն ալ խորթ ու վայրի գալարումներու հասած: Ռոտենպաք այդ պելճիքացի գրողներուն ամենէն նուրբն էր եւ ամենէն բարիզացածը: Բըսան տարիէ ի վեր ֆրանսացի հպատակ դարձած եւ Բարիզը իրեն հայրենիք ըրած էր. իր արժգոյն, բարակ ու քիչ մը ցուրտ զէմքը, բարիզեան ամէն հանդիսաւորութիւններու անհրաժեշտ մէկ խազը կը կազմէր: Ոչ այնչափ իսկատիպ որչափ Մեթեոլինքը կամ Վերհարընը, որոնք ազգած են ֆրանսացուց վրայ եւ անոնցմէ չեն ազդուած, միշտ պահելով հանդերձ ֆրաման ոգին՝ ծածանուտ միասիքականու-

թեան մը մէջ որ իրեն յատուկ էր, Ռոտենպաք խորին ներգործութիւնը կրած էր սակայն ֆրանսացի բանաստեղծ Պոպլէսին: Իր առաջին քերթուածները գրեթէ արձագանգ մըն են Պոպլէսի Չարին ծաղիկներուն, արձագանգ մը նըրբացած, աղօտ ու քնքուշ: Բայց հետզհետէ Ֆրամանը շեշտուեցաւ իր մէջ. եւ Ռոտենպաք պիտի մնայ ֆրանսական գրականութեան մէջ իրբեւ պելճիքական քաղաքի մը, Պոլեժի, կամ ինչպէս ինքը կ'ըսէր, Մեռած-Պոլիժին երգիչը: Արայայտեց մակոտ ու տրտում հոգին այդ լուսութեամբ փաթթուած, լայն, ցուրտ ու գորշ քաղաքին, ուր մեղամաղձոտ՝ նաւեր անշարժ կը մրափեն մեռած ջրանցքներուն երկայնքը, ուր, ձերմակ գլխանոցներով մարապեաները կը սահին խազաղ պեկիկներուն ստուերին մէջ, ուր սրովբէական մեղեգին կը ծածանի աղօթաւոր թաղածութիւն զանգակներուն: Աւելի երկար պիտի խօսինք Ռոտենպաքի վրայ, երբ ատեն ունենանք ֆրանսական արդի գրականութեամբ ընդարձակօրէն զբաղելու: Իր մահուան առիթով, այս մէկ քանի սողը պարտաւոր էինք նուիրել ստուերի եւ լուսեան բանաստեղծին որ իր գործովը յաւերժացուց զիւրական քաղաք մը, որ վազը պիտի քանդուի թերեւս երկրաշարժներու վանտալ ձեռքերուն մէջ, այն վրգովիչ երազողին որ սիրոյ երգերուն մէջ նոր տուն մը աւելցուց իր «Ճանքորդուքիս Բու աչֆերուդ մեջ» քերթուածովը, ուր իր երեւակայութիւնը կը սուզուէր կնոջ նայուածքին խորը, ինչպէս լճի մը ջուրին մէջ, ու անոր լոկի հեղուկութեանը միջին խորքերը կը խուզարկէր, երեւան բերելով մարգրիտներն ու նահանգները որ հոն կը քնանան:

Գաղափար մը տալու համար Ռոտենպաքի տաղանդին վրայ, կը թարգմանենք մէկ հատուածը իր Մեռուդի ֆերքուածին, վերջին բանաստեղծութիւնը զոր գրած եղաւ, եւ զոր Իշխարքուսիտներ հրատարակած էր.

« Ահա տարի մըն ալ որ կը փախչի ու կը մխրճի — Եւ որ կ'երթայ կը մարի կրակարանին մէջ՝ մոխրին հետ. — Սենեակը կ'ամփոփուի եւ կը մննայ. — Եւ ցուրբը, հայելին մէջ, կը մուրհի դէպ ի վար իջնի: »  
 « Փայտը յամբարար կը հատնի կրակարանին մէջ. — Սենեակը կը մտնայ, դեռ քիչ մըն ալ լուսաւորուած — Փայտէն որ այդէն գրեթէ անկենդան է. — Տաքութիւնը տարուան վերջին փայտին: »  
 « Ո՛վ փայտը մահամբձ, — սեփ սեւ եղած եւ ածխացած. — Անի ճիւղն էր կենդանի, — Ստուերի շարժում որ գգուանքներ կուտայ խոտին, — Տերեւներու հողմահար որ կը հովահարէ. — Եւ ահա կը մեռնի՝ անիկա: — Կը գալարուի եւ կը բոբբօրի — դեռ վայրկեան մըն ալ: — Զովը ծխնելոյզին մէջ — կը կողկողի, — Փողի մը նման — Որ ոգեւար տարուոյն մահագոյշը կը հնչէ, — Փայտին հետ որ կըսպառի: »

« Տարին ալ մեր կեանքին — Մէլ ճիւղը եղած էր . — Գարնան կանանցուծին , որուն յաջորդեց — Ամառուան ոսկի տերեւանքը . — Ո՛վ ճիւղ՝ հիմա մերկացած , — Որ դեռ քիչ մը կ'ապրի — Իր հրեղէն պատմութեանին մէջ — Որ քիչ ատենէն գորշ պատմութեան մը պիտի դառնայ , — Տարի՛ որ կը փախչի , եւ որ արդէն մտքէն կ'արուի . — Որ արդէն կը մոռցուի :  
 « Այսպէս կ'անցնին իրերը . — Ամէն բան կը շտապէ , կը սայլաքի — Անյատակ յաւիտեանին մէջ , — Տարին փայտին հետ , — Փայտը տարւոյն հետ . — Կը լսենք հովը որ կը կողկողի , — Եւ ամէն բան կը վերջանայ — Կտոր մը միւս դառնալով : »

Դեկտ. 12ին , Սոուպոնի մեծ ամփոթատարոնին մէջ , ծանօթ պատմաբան Պ. Էռնէսթ Լավիս ատենաբանութիւն մը արասանեց որ կարեւորութիւն ունեցող զէպք մըն է Բարիզի , եւ Ֆրանսայի , կեանքին մէջ : Պ. Լավիս ձայն կը բարձրացնէ պախարակեայի սեզմիչ եւ ճնշողական լիասակար գրութեան զէմ , որով Ֆրանսացի աղաք իրենց միտքը կը փճացնեն անօգուտ բաներ սորվելով քննութիւն անցնելու համար միայն , եւ միանգամայն բարոյական յոռի ուղղութեան մը ազդեցութիւնը կը կրեն , քննիչներու կողմնակցութեանը վրայ յոյս դնելով : Այս ոգով , պայքար մը ատենէ մը ի վեր սկսուած է արդէն մղուիլ Ֆրանսայի մէջ : Վերանորոգման ջանք մը կայ Ֆրանսայի ժողովրդին մէջ : Լավիսէն առաջ , Ժիւլ Լըմէթո խօսած էր զաստիարակութեան գրութեան փոփոխման պէտքին վրայ : Մօտակայ թիւով մը պիտի խօսինք այս ջանքերուն եւ այդ ամբողջ երեւոյթին մասին :

Այս տարի , լին ժողովուրդը տօնեց իր ազգային անմահ բանաստեղծ Ատամ Միլլիքի վիշի հարիւրամակը : Դեկտ. 27ի գիշերը , Բարիզի լին գաղթականութիւնը երեկոյթ մը կազմակերպած էր . Ժիւլ Լըմէթո , որ կը նախագահէր , գեղեցիկ ատենաբանութեամբ մը՝ շեշտեց թէ Լեհաստանն ու Ֆրանսան իրարու կապող կապերը անջինջ են միշտ , հիմա առաւել քան երբեք , քանի որ Ֆրանսան , ինքն ալ խոցուած , աւելի խորապէս կը զգայ դժբաղդ քրոջ մը տառապանքը , եւ բացատրեց հանճարն ու կեանքը Միլլիքի վիշին , որ ոչ միայն Լեհաստանի պանծալի երգիչն է , այլ մեծ որդեգիրներէն մին Ֆրանսայի , ուր անցուց իր կեանքին վերջին կէտը , իբրեւ ուսուցիչ Բոլէժ տը Ֆոանսի : — Մեր յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ , ընդարձակ ուսումնասիրութիւն մը պիտի նուիրենք Միլլիքի վիշի :  
 Ա. 2.

ՕՁԱԿՈՉԸ

Օճահրեւսն վրսիս՝ զարթի մեջ կսկզուն  
 Մրունընցաճայն կը փրչե տիւնգ ողբազին .  
 Ու կը գլորին ձերսիւ մ'օձեր կիսախուն  
 Խայտաբարդէս քարին վրայ մուր բակին :

Գայտակերպ սողակերպի դողողոցուն ,  
 Շեկ կը շակերեւ եւ ահաւոր կ'երեւին .  
 Բայց կը բովե զակոնիք ևուրք սոյր հրկոցուն ,  
 Ու քուն կ'ըլլան . կը խընդայ բուխ պետեղին :

Հոգիս սրտում տուն է , վրչեստր այ քարթեր  
 Որ կը շրչեն կասաղորթեանք բունաքեր .  
 Ո՛վ սուկում , ոյժ յունիս զակոնիք խրդդերու :

Դու կը բովես սրտիս հրեշներն ապրտաւք .  
 Կը բարբառիս զարեւակաւոր քաղցրութեանք .  
 Ա՛յ չեն լրկեր զիս , քուն կ'ըլլան քոյր , հըլու :

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵՍՆ



ԱՉԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Հայերն ի Բարիզ . — Վահրամ Սվաճեանն նուագահանդէս մը պիտի տայ Էռասի սրահին մէջ Յունուար 21ին : Կ'իմանանք որ բարիզեան բարձր ընկերութեան պատկանող մէկ քանի անձնաւորութիւններ խոստացած են ընտիր բազմութեամբ մը սրահը լեցնել . Ֆրանսայի հասարակութեան կողմէ մեր բարեկամին չըռալուելիք համակրութիւնը առաջուց պիտենք : Կը սիրենք յուսալ որ մեր Բարիզի ազգայինները այս տարի աւելի ջանադիր պիտի ըլլան չմոռնալու որ Սվաճեանն , Բարիզցիներու հիացում ներշնչող այդ արուեստագէտը , Հայ մըն է : Վերջին պահուն կ'իմանանք թէ Սվաճեանն հրաւիրուած է Բարիզի ամերիկեան դեսպանատան մէջ նուագել մօտերս :

— Տր. Պողոս Բօլօլեանն , որ Բարիզի Բժշկական Սկզբնախալին ներկայացուցած էր աշխատութիւն մը յիմարարութեան վրայ , յաջողած է արժանանալ , նոյն մրցմանը մասնակցող մէկ քանի Ֆրանսացի գիտնականներու հետ , Պայեառժէ մրցանակին : Բօլօլեանն , որ նոր աւարտած է իր բժշկական ուսումը եւ վերջերս հաստատուած է Բարիզ՝ Շանդ-էլիզէի թաղին մէջ , արդէն մէկ քանի ուսումնասիրութիւններ հրատարակած է Շառքոյի հիմնած հանդէսին , Archives de Neurologieին մէջ : Կը շնորհաւորենք մեր բարեկամին ու աշխատակցին յաջողութիւնը , որ անշուշտ մեկնակէտը պիտի ըլլայ ամբողջ շարքի մը :

— Պ. Ա. Բառիէն սկսաւ իր դասախօսութիւնը , զոր ծանուցած էինք մեր նախորդ թուով : Առաջին դասը յատկացուց Հայաստանի աշխարհագրութեան : Ներկայ էին տասնչորս Ֆրանսացիներ , եւ . . . երեք Հայ : Ցա-

ւով դիտեցինք որ Բարիզի հայ ուսանողութեանն, եւ նոյն իսկ ընդհանուր հայ երիտասարդութեանն, ոչ ոք զազափարն ունեցած էր այս զասին հետեւելու: — Այդ զասախօսութեանց մասին Պ. Բասմաջեան պիտի գրէ ծանուցուած յօդուածը՝ երբ Պ. Քառիէն հասնի, աշխարհազրական տեղեկութիւններէն յետոյ, Հայոց պատմութեան ուսումնասիրութեանը:

— Շարժումէն կ'իմանանք թէ Պ. Յարութիւն Փափազեան, Ստեփան Փափազեանի տղան, որ Բարիզի առամնարուժական վարժարանէն վկայական ստացած էր, Սոփիայի մէջ քննութիւն անցուցեր եւ Պուլկարիոյ մէջ իր արուեստը ի գործ դնելու արտօնութիւն ընդուներ է: Պ. Փափազեան Բարիզի հայ ուսանողութեան ամենէն լուրջ, աշխատասէր եւ եռանդուն անդամներէն մէկն էր, եւ իր արուեստին շրջանակէն դուրս՝ օգտակար ըլլալ կարենալու յոյսեր կուտար: Կը շնորհաւորենք իր յաջողութիւնը եւ կը մաղթենք որ կարենայ իրագործել ամէն ինչ որ կը խոստանայ:

— Վերջին դէպքերուն հետեւանքով հայրենիքէն հեռացող Հայերէ շատեր կը սկսին վերադառնալ, Կովկասէն, Ամերիկայէն եւ Պուլկարիայէն: Վերջերս Պաթումի ճամբով խումբ մը Հայեր, ձրի անցազիր եւ նաւու տոմսակ ստանալով քաղաքին առաջ ստիկանապետին միջոցաւ, Տրապիզոն ելեր են եւ գինուորներու առաջնորդութեամբ՝ դէպ ի հայրենիք ուղղուեր են: — Ատանայէն կը գրեն թէ բաւական թուով ամերիկաբնակ Հայեր հայրենիք դարձեր են: — Կովկաս ապաստանող Կարնեցիներէն ալ շատեր իրենց քաղաքը կը դառնան: Հակառակ վտանգներուն որ գեռ կը տեսն, Հայերու այս դարձը գեղեցիկ ու սրտաշարժ երեւոյթ մըն է: Բոլորովին համակարծիք ենք արտասահմանի մէկ քանի թերթերուն որոնք կը խրախուսեն այդ դարձը. պէտք է որ հայ տարրը չընտուազի իր հողին վրայ, եթէ կ'ուզուի որ գէթ մասամբ Հայոց համար ուրոյն տնօրինութիւն մը ըլլուի. բայց նոյն թերթերը զգալու են որ իրենք իրենց կը հակասեն՝ միւս կողմէ յեղափոխական գործունէութեան հրաւէր կարգալով. որպէս զի Հայերը կարենան դառնալ իրենց հայրենիքը, պէտք է որ իրենց ազգակիցները խրախուսութեանց շարժառիթ չըլլան եւ դարձը կարենայ կատարուիլ գոնէ կէս խաղաղութեամբ:

— Պարսկահայերը որոնք յարաբերաբար հանգիստ էին մինչեւ վերջին ստեղծներս, իրենց թրքահայ եղբայրներուն կացութեանը մէջ կը մտնեն տակաւ: Թրքական Հայաստանի մէջ տեղի ունեցած դէպքերը իրենց հակահարուածը ունեցան Պարսկական Հայաստանին մէջ: Ատոր նպաստած է Սուլթան Համիտին համիւլամական կոչը. ատոր նպաստած է նաեւ թրքօպարսկական սահմանադրութուն վրայ հայ հրոսակներու երթեւեկը: Այն հալածանքները որոնց կը սկսին ենթարկուիլ Սալմաստի Հայերը, ինչպէս նաեւ Վանի ջարդերը, որոնք մինչեւ հիմա կը շարունակուին, այդ կրկին պատճառներով

կը բայատուին: Թէ մահմետական կատաղութիւնը ի՞նչպիսի զազաններ դարձուցած է Պարսիկը, Թուրքը կամ Քիւրտը, այդ ոչ մէկուն համար զազանիք է. բայց երբ մարդ ապահով չէ որ միամիտակը զազանին պիտի կարենայ դիմադրել, պէտք չէ որ զայն գրգռէ եւ արթնցնէ: Պարսիկ խաներու ձեռքը դրամ չանելու միջոց մը դարձած է հայ գիւղերը մտնելն ու յեղափոխական փնտոնելու պատրուակով կաշառք փրցնելը . . .

— Որմիայի մէջ կը տիրէ այս վայրկեանիս անուշի ազգատութիւն մը. Հայերը, անթութեանն ոգեսպառ, եւ պարսիկ խաներուն կեղեքումէն ազատելու համար, կրօնափոխ ըլլալու միտումներ ունին:

— Նարեկայ վանքին մէջ նոր որբանոց մը բացուեր է, որ քիչ ատենէն Աղթամարի վանքը պիտի փոխադրուի: — Քերման միսիոնարները Տիգրանակերտի մէջ նոր որբանոց մը բացած եւ հարիւրի չափ որբ արդէն ընդունած են: Այդ միսիոնարները Եդեսիոյ մէջ ալ որբանոց մը բացած են:

— Պ. Ջանչեանցի խմբագրած «Եղբայրական օգնութիւն» գրքին վաճառման հասոյթէն մինչեւ հիմա 40,000 Փրանքէ աւելի զրկուած էր, Պուլկարի ուսական դեպանին ձեռքով, Հայաստանի կարօտեալներուն: Այժմ, գրքին խմբագրութիւնը որոշած է այսուհետեւ ստացուած գումարները յատկացնել Հայաստանի մէջ հայ-ուսական որբանոցներ հաստատելու, եւ հատ մը արդէն բացուած է Բալուխի մէջ:

— Տխուր լուրեր կը շարունակեն հասնիլ Վանէն ու Բաղէշէն. երկու քաղաքներուն ալ գիւղերէն շատերը արիւնի եւ բոցերու մէջ են նորէն: Ռուսական թերթի մը համեմատ, Բաղէշի խոռվութեանց սկզբնապատճառ եղած է մէկ երկու Հայերու կողմէ քիւրա շէյխի մը տղուն սպաննուիլը. Քիւրտերը, զայրացած, հայ գիւղերուն վրայ յարձակած եւ ջարդած են բազմաթիւ Հայեր: Թուրք կառավարութիւնը ոչինչ կը փորձէ հանդարտեցնելու համար զորքոտած տարրերը: Պուլտոյ ուսական դեպանը զիտողութիւն ըրած է Բ. Իրան այդ վտանգաւոր կացութեան վրայ որ կը տիրէ Վանի ու Բաղէշի մէջ:

— Այն անուշ-լեզու փաղաքանքը որով Վիլնէլիմ ինքզինքը բարեկամ եւ պաշտպան հոչակեց Սուլթանին բարոյական գերիշխանութեան տակ գտնուող 300,000,000 մահմետականներու, իր արդիւնքները տալ կը սկսի ամէն կողմ: Ոչ միայն Տաճկաստանի մահմետականներն են որ իրենց վայրագութեանը մէջ խրախուսուած կը զգան զիրենք, այլ նոյն իսկ Կովկասի մէջ, մահմետականները թմրած գուլիսին կը բարձրացնեն, եւ հին օրերը յիշելով, կը փորձեն իրենց բնակակից քրիստոնեաները շարչրկել: Ռուս կառավարութիւնը պիտի ստիպուի այդ երես ելած մահմետականներուն ականջէն քաշել:

— Կաթողիկոսը մտազիր է եղեր դատ բանալ Կովկասի կրթական վերատեսչին Պ. Եա-

նովսքիի դէմ, որ Կովկասի Հայոց ծխային վարժարաններու գոյքերուն՝ գրաւումը կատարելու դործողութեան մէջ կայսերական հրամանէն շատ անգին անցեր է: Թիֆլիսի Յովնանեան աղջկանց վարժարանին մեծ շէնքին ալ գրաւուելուն եւ հանրային կրթութեան պաշտօնատան դպրոցներուն յատկացուելուն դէմ վարժարանին հոգաբարձութիւնը արդէն դատ բացած է: — Բաքուի մարզասիրական ընկերութիւնը նմանապէս դատ բացեր է իր 250,000 ռուբլի արժէքով կալուածին գրաւմանը համար: Նախարարաց խորհրդին որոշմամբ, այս դատերը պիտի քննուին դատարանի առջեւ: — Աւելի լաւ է ոչ քան երբեք:

— Եղիշէ Վ. Դուրեան, հանրածանօթ բանասէրը, էջմիածին երթալով եպիսկոպոս ձեռնադրուեր է եւ արդէն դարձեր է Արմաշ, շարունակելու Դպրէվանքին տնօրէնի պաշտօնը: Դուրեանի հետ եպիսկոպոսացած են նաեւ Աշոտ, Շիրակունի եւ Իւթիւճեան վարդապետները, որոնց վերջինը կարգուած է Եւրոպայի Հայոց այցելու հովիւ:

— Տօնելու համար Կովկասի Ռուսիոյ կողմէ գրաւման հարիւրամակը որ երկու տարիէն կը լրանայ, Թիֆլիսի քաղաքապետութիւնը այժմէն ծրագիրներ կը պատրաստէ:

— Հոկտ. 24ին, կատարուեցաւ Մոսկուայի Լազարեան ձեռնարանին տարեկան հանդէսը: Վերատեսուէր յիշատակեց որ ձեռնարանին յիշնամակը լրանալուն առթիւ, հաստատութեան մասնագիտական դասարաններու խորհուրդը ձեռնարկեր է Թ. դարու հայերէն հին աւետարանի մը հրատարակութեան՝ հսկողութեամբ Բրոֆ. Սալաթեանի. այս ձեռնարկին համար, ձեռնարանին պատուոյ հոգաբարձու հրամանատար-իշխան Ս. Ս. Աբամելիք Լազարեանը 1800 ռուպլի նուիրեր է:

— Եռուկեցի դրամատէր Պ. Թաղէոս Բամիրեանց իր կենդանութեանը նուիրած է 10,000 ռուպլի Բերդաթաղի (Ատրպատական) Արամեան դպրոցին: այդ գումարին տոկոսով որդեգիրներ պիտի պահուին այդ դպրոցին մէջ: Պ. Բամիրեանց արդէն նոյն ձեւով նուէր մը ըրած է Թէհրանի դպրոցին համար:

— Հանգուցեալ ուսանայ Խիթարեանի կրտակին համեմատ, 21,000 ռուպլի յատկացուած է Ներսէսեան դպրոցի աշակերտներէն որդեգիրներ պահելու Ռուսաստանի բարձրագոյն դպրոցներու մէջ:

— Երեւանի թեմական վարժարանին վերատեսուէր Պ. Սիմէոն Եանազարեան իր սոճիկը (տարեկան 1500 ռուպլի) նուիրեր է մէկ մասը աղքատ աշակերտներու, միւս մասը էջմիածնի վանքին:

— Տիկին Բանանեան, Լազարեան ձեռնարանի հանգուցեալ վերատեսչին այրին, 4000 ռուպլի նուիրեր է, որուն տոկոսով ուսանող մը պիտի պահուի Մոսկուայի համալսարանին մէջ:

Ռուսահայ նուիրատուներու այս ձօխ շարքին առջեւ, տխուր չէ՞ մտածել որ թրքահայ հա-

րուսաները — որոնցմէ ո՛չ մէկը, այս վերջին աղէտքներուն յուզման տակ՝ ազգին մեծ նուէր մը ընելու գաղափարը ունեցաւ, — ուրիշ բան չունին բաղդատութեան դնելու բայց եթէ Քարակէօզեան կտակին՝ կամ աւելի ճիշդ է ըսել կատակին՝ պատմութիւնը...

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսա եւ Անգլիա: — Մաս մը Անգլիացիք կը ջանան ցրուել այն յոռի տպաւորութիւնը զոր յառաջ բերաւ Ֆրանսացի ժողովրդին վրայ Ֆաշտայի ինգրոյն առթիւ Անգլիոյ բիրտ ու վիրաւորիչ վարմունքով: Աղատականներն են մանաւանդ որ կ'ուզեն կտրածը փակցնել: Պահպանողականներուն կը մեղադրեն իրենց անխոհեմութիւնը՝ որով Ֆրանսան պաղեցուցին Անգլիայէն եւ զայն մղեցին Գերմանիոյ կողմը ձգտելու: Աղատական Պ. Ասքուիթ, Պիրմինկէմի մէջ, դեկտ. 16ին, արտասանեց շատ ազնիւ ոգով ներշնչուած ճառ մը, որմէ մաս մը կը հրատարակենք, մաղթելով որ այդ նշանակուած ուղղութիւնը պաշտօնական Անգլիայինը ըլլար իրօք:

«Սնդիրը Հնդկաստանի վրայ ըլլայ կամ Եգիպտոսի, կամ աշխարհիս որ եւ է կէտին վրայ, Մեծն Բրիտանիա իր գերակշռութեան հիմը կը նկատէ ոչ թէ բիրտ ուժը, ոչ թէ կազմակերպուած զօրագունդերու գերազանցութիւնը, այլ այն քաղաքակրթիչ գործը զոր կը կատարենք: Այն սեղերն ուր իբր օտարական եւ իբր աշխարհակալ կ'երթանք, աստիճանաբար ժողովուրդները կ'առաջնորդենք քաղաքական եւ ընկերական բարձրագոյն խնայի մը, եւ այդ գործին մէջ, ոչ մէկ հակառակող տարր չենք ձանձար որ անհաշտելի ըլլայ: Միացեալ Նահանգները, այս գործին մէջ, մեզի միացան համաձայնութեամբ մը որ աւելի արժէք ունի քան բոլոր մագաղաթները, անգիր համաձայնութեամբ զոր աշխարհիս վրայ ոչ մէկը զօրութիւնն ունեցաւ ջնջելու: Բայց կան երկու պետութիւններ որոնց հետ մեծապէս կարեւոր է որ բարեկամական յարաբերութիւններ ունենանք, իրարու իրաւունքներուն եւ շահերուն փոխադարձ ճանաչումին վրայ հիմնուած, — կ'ակնարկեմ Ռուսիոյ եւ Ֆրանսայի: . . . Ռուսիոյ եւ Անգլիոյ ձեռքն է Ասիոյ ապագան: Մեր պետական մարդոց դատապարտութիւնը կ'ըլլար եւ քաղաքակրթութեան համար զայթակողութիւն մը, մանաւանդ Զարին առաջարկութեան յետոյ. եթէ չկարենայինք այդ դարաւոր պայքարը, այդ արուեստական թշնամութիւնը մէջտեղէն վերցնել մշտական համաձայնութեամբ մը: Ինչ որ կ'ըսեմ Ռուսիոյ համար, նոյնը կ'ըսեմ Ֆրանսայի համար ալ: Չկան աւելի մեծ թշնամիներ արեւմտեան քաղաքակրթութեան բարձրագոյն շահերուն եւ պարտականութեանց քան անոնք որ Ֆրանսայի եւ մեր միջեւ ար-

ուեստականօրէն հակառակութիւն կը գրգռեն : Ես կը կարծեմ թէ չկայ ո եւ է ճարտարագործական կամ քաղաքական խնդիր որ , քիչ մը ուղղախոհութեամբ , կարելի չըլլայ դիւրաւ կարգադրել »)

Սակայն անկողները կը շարունակեն իրենց մարտագոռ աղաղակները : Բարիզի անգլիական ղեսպանը , ամէն փափկանկատութիւն ոտնակոխ ընելով , Բարիզի մէջ իսկ Ֆրանսացոց խրատ տալ համարձակեցաւ որ Անգլիոյ պահանջմանց գլուխ ծոկն : Անգլիացիք օգուտ կը քաղեն այն խոռվալից ու պառակտեալ կացութենէն որ Ֆրանսայի մէջ կը տիրէ այս վայրկեանիս Տրէյֆիւսի խնդրոյն հետեւանքով : Փաշտայի գործին մէջ Ֆրանսայի զիջումը բերնեմուն համ սուաւ , եւ կ'ուզեն բոլոր առկա խնդիրներու վրայ Ֆրանսայի համակերպումը ձեռք ձգել : Եւ Չէմպրըլէյն որ անկողներուն գլուխն անցած է , կը հակի Գերմանիոյ հետ համաձայնութեան մը , կը փաղաքէ Գերմանիան . իր փափաքն է առաջն առնել գերմանո-ֆրանսական մերձեցման մը , Գերմանիան Անգլիոյ կապել , եւ Ֆրանսան կղզիացնել : Մանչէսթըրի մէջ արտասանած նոր ճառով մը , կրկնեց այդ համաձայնութեան գոյութիւնը իբր կատարուած իրողութիւն մը : Դեռ ոչինչ կը հաստատէ զայդ : Աւստրիացիք զարմանք եւ տարակոյս կը յայտնեն . « Պէտք է սկստակ մնալ , կ'ըսէ Վիեննայի Նայե Բրեսն , մինչեւ որ հաստատ , անտարակուսելի նշաններ ամէն կասկած չփարատեն » : Նայե Թակպրաք կը դիտէ գոհունակութեամբ որ վերջապէս Անգլիոյ պետական մարդիկը կ'ընդունին որ զաշնակցութեանց դրութիւնը մեկուսացումէն լաւագոյն է : Գերմանական թերթերը , թէեւ առանց լանդալտութեան , անկարելի չեն գտներ այդպիսի համաձայնութիւն մը . Թակպրաք , Լոֆարսն-ձայիր , Վոսիշե Չայրուսկ , Նացիոնալ Չայրուսկ , Բոսը համակրութեամբ կ'ընդունին Չէմպրըլէյնի բացատրութիւնը եւ անգլո-գերման համաձայնութիւն մը կարելի եւ օգտակար կը նկատեն , պայմանով որ Ռուսիոյ հակառակ ո եւ է ձգտում չունենայ . եւ ճիշտ անոր համար գոհ են Չէմպրըլէյնի ճառէն , որովհետեւ Ռուսիոյ համար բարեկամական լեզու մը կը գործածէր եւ Մայրագոյն Արեւելքի մէջ անգլո-ռուս համաձայնութեան մը յոյսը կուտար :

Ֆրանսա եւ Գերմանիա . — Փաշտայի զէպըր Ֆրանսացիները շուարման մէջ թողուց . կը կարծէին որ թշնամին Գերմանիան է միայն , եւ հիմա երկու թշնամի ունին . կացութիւնը վրտանգաւոր է . եւ Ֆրանսայի մէջ ընդհանուր փափաք մը կայ երկուքէն մէկուն կողմը հակելու . կան անգլիասէրներ , որոնք կը ցուցնեն թէ պէտք է ամէն ջանք ու գոհողութիւն ընել Անգլիոյ յարելու , որ Ֆրանսայի վաճառակամութեան մեծագոյն յաճախորդն է եւ բարոկան տեսակէտով ալ Ֆրանսայի բնական գաշնակիցը իբր ազատ ու ռամկավարական ժողո-

վուրդ . ուրիշներ , հիմնուելով Ֆրանսացոյն սրտին մէջ արմատացած աւանդութեան վրայ որ Անգլիացին կը կոչէ « ժառանգական թշնամին » , կը քարոզեն թէ անհնար է « նկնգամիտ Ալպիոնին » վստահիլ , եւ թէ լաւագոյն է Գերմանիոյ հետ համաձայնիլ : Սակայն հոտ , Ալգաս-Լորէնի խնդիրը կը ցցուի : Գերմանացիք թիզ մը չեն ուղեր ետ տալ իրենց գրաւած հողերէն : Ֆրանսացիք պիտի հաւանին համակերպիլ վերջնապէս : « Հիմա որ Անգլիոյ հետ համաձայնութիւնը չյաջողեցաւ , կը գրէ Բեռլինի Չայրուսկ , կը սպասենք որ Ֆրանսա , չովինական բացազանչութիւններու տեղ , ունենայ առողջ խորհրդածութիւններ , որոնք ձգտին զէպի Գերմանիոյ հետ մերձեցում մը , գործնական եւ առեւտրական քաղաքականութեան մը ուղղութեամբ : Իր կողմէն , Գերմանիա ոչինչ պիտի ընէ արգելելու համար այդ համաձայնութեան յաջողումը , որովհետեւ եթէ չենք ուղեր Ֆրանսայէն պահանջել իր շահերուն հետ անհաշտ ո եւ է բան , բնական բաղձանքը ունինք մենք ալ որ այդքան կարեւոր գրացի մը հետ ապրինք մինչեւ հիմա գոյութիւն ունեցածէն աւելի բարեկամական յարաբերութիւններով »)

Վիլհելմ կայսեր Միջերկրականէն անցած միջոցին , Լա Վոլոնդէ լրագիրը հրատարակեց , (չեչաելով որ ոչ ոք պիտի հերքէր այդ լուրը ) թէ Վիլհելմ առաջարկած է Ֆրանսայի հաւահանգիստ մը հանգպիլ , եթէ կառավարութիւնը հաւանի զինքն ընդունիլ իբր բարեկամ վեհապետ մը . լուրը չհերքուեցաւ , բայց լուրի ձեւին մէջ մնաց :

Կ'ըսուի թէ Ռուսիա ալ կը փափաքի Ֆրանսա-գերման մերձեցում մը , ընդդէմ Անգլիոյ :

Պ. սը Պիւլով , Գերմանիոյ պետական քարտուղարը , Բայսթակին բացման ճառին մէջ , ամենուն հետ աղէկ երթալու բարեմիտ ձգտումը կը ցուցնէր , « Ոչ Արեւելքի մէջ , ոչ ալ ո եւ է տեղ մը , կ'ըսէր , Ֆրանսայի շահերուն զէմ կլլել չենք ուղեր . միայն թէ չենք ընդունիր որ ո եւ է ուրիշ երկիր գերման հպատակներու պաշտպանութիւնը ստանձնէ » : Կ'ակնարկէ գերման կաթոլիկներուն , որոնք առաջ Ֆրանսայի պաշտպանութեան տակ էին . բայց արդէն 1871ին որոշուած էր որ գերման կառավարութիւնը միայն իրաւունք ունի պաշտպանել իր կաթոլիկ կամ բողոքական օտարաբնակ ազգակիցները . Վիլհելմի ուղեւորութեամբ Ֆրանսա նոր բան մը չի կորսնցներ . Ֆրանսա կը մընայ միշտ պաշտպանը Արեւելքի այն բոլոր քրիստոնեաներուն որոնք ինքնուրոյն կառավարութիւն չունին :

« Անգլիոյ հետ մեր յարաբերութեանց դալով , կ'ըսէ Պ. սը Պիւլով , պիտի բաւականանամ ըսելով թէ շատ մը խնդիրներու վրայ եւ շատ մը մասնաւոր կէտերու մէջ , կրնանք Անգլիոյ հետ համաձայն ընթանալ եւ յօժարակամ համաձայն կ'ընթանանք անոր հետ » առանց վնաս բերելու շատ թանկագին յարաբերութեանց ուրիշ ազգերու հետ զոր լիապէս կը յարգենք »)

Գերմանիա կը յայտնէ թէ անգլո-ուս եւ անգլո-ֆրանսական կրկին պայքարին մէջ , ոչ մէկ կողմ կը հակի . անոնց կը մնայ իրեն զիմել եւ իր աջակցութիւնը խնդրել այս կամ այն փոխարինութեամբ :

Արեւելեան խնդրոյն վրայ , Պ. տը Պիւլով հեղինակն է եւ առժամապէս լաւատես : Արեւելեան խնդիր ըսելով ինքը գրեթէ միայն պալքանեան հարցը կ'ըմբռնէ . ակնարկութիւն իսկ չ'ընել Հայոց խնդրոյն : Տաճկաստանի գոյութիւնը յաւերժապէս ամրացնելու երազէն բացայայտորէն յուսահատ կ'երեւայ եւ կը խոստովանի զայդ , բայց կը ծանուցանէ թէ առ այժմ իրերու կացութիւնը անփոփոխ պիտի մնայ . «Արեւելեան խնդիրը , կ'ըսէ , այս վայրկեանիս իր ամբողջութեան մէջ խաղաղութեան չըջանի մը մէջ կը գտնուի : Ըսել չեմ ուզեր թէ այդ արեւելեան խնդիրը իր վերջնական լուծումը գտած է : Արեւելքի հարցը կերպով մը կը նըմանի ծովու օձին որուն մէկ մասը միւսէն ետքը կ'երեւնայ . մինէ ոչ ոք պիտի տեսնէ այդ խնդրոյն վերջնական լուծումը . պէտք չէ որ մեր զաւկներուն ու թոռներուն ալ ընկող մը ձգենք կտորելու . բայց առ այժմ այդ խնդիրը նուազ վտանգաւոր կը թուի աշխարհիս խաղաղութեանը համար քան ուրիշ առններ . ինք իր մէջ սակայն , խնդիրը թերեւս աւելի կնճոտ դարձած է քան ինչ որ էր քսան տարի առաջ : Անկից ի վեր , անհամաձայնութիւնները , ոչ այնքան քրիստոնեաներու եւ մահմետականներու մէջ որքան Պալքաններու զանազան ժողովուրդներուն միջեւ , չեչտուած են քանի այդ ժողովուրդները ինքնավարութեան բաղձանք ունեցած են եւ իրենց ծաւալման պետքերուն աճին զգան չեն : Պալքանեան թերակղզիին մէջ կան խնդիրներ որ տեսակ մը պարագաներու մէջ զժտութեան պատճառ կըրնան գտնուի : Սակայն այդ թեթեւ անհամաձայնութիւնները բնաւ երբեք վտանգաւոր չեն խաղաղութեան տեսակէտով : Գերմանիա փափաք չունի Արեւելքի մէջ եսական ազդեցութեան մը տիրանալու : Այդ զգուշաւոր ընթացքը ոչ միայն հետեւանքն է մեր նկարագրին , այլ միանգամայն պէտք է գիտնալ թէ անկից կախալ է Ոսկեղջիւրի վրայ մեր դիրքին ամրութիւնը : Թուրքիոյ համակրութիւնները շահած ենք մենք , որովհետեւ այդ երկրին մէջ կը նկատեն թէ Գերմանիան կ'ուզէ ազգաց իրաւունքը յարգուած տեսնել նոյն իսկ Թուրքիոյ հանդէպ , եւ կ'ուզէ Արեւելքի մէջ տիրել տեսնել ոչ թէ առերեւոյթ այլ իրական խաղաղութեան մը : Բանի որ ոչ մէկ ուրիշ ժողովրդի խոչընդոտ չենք մենք , ուրիշ ազգերու նախանձն վախ չունինք :»

Եւ Պ. տը Պիւլով հրճուանքով կը հաստատէ թէ « Կայսեր ուղեւորութիւնը Գերմանիոյ յարաբերութիւնները աւելի սերտ դարձուց Թուրքիոյ հետ , եւ թէ ամէն տեղ յայտնուած տեսան այն յարգանքը զոր մահմետական երկիրներու մէջ կը զգան Գերմանիոյ կայսեր եւ պե-

տութեան համար : » Պ. տը Պիւլով չ'ըսեր թէ այդ մահմետական երկիրներուն քրիստոնեայ հասարակութիւններէն ո՛րքան պաղ ընդունելութիւն մը գտաւ Վիլհէլմ : Գերմանիոյ համար գոյութիւն չունին Արեւելքի քրիստոնեաները . Վիլհէլմ իր համակրութիւնները ուղղեց միմիայն մահմետականներուն . գերման վաճառականութեան համար այդ տարրը լոկ կարեւոր է . պիտի տեսնենք թէ Պ. տը Պիւլով անկե՞ղծ է , եւ թէ Գերմանիա պիտի թողը՞ որ ուրիշ պետութիւններ ալ քրիստոնեայ ժողովուրդներով զբաղին ամենայն ազատութեամբ , ինչ որ թերեւս միշտ չկարենայ համաձայնիլ գերմանո-մահմետական քաղաքականութեան հետ :

Վիլհէլմ , իր ղեկաւ Յի գահաճառին մէջ , ոչինչ կը ճշդէ , բայց կը նկրտի տալ Գերմանիոյ հաշտարարի , խաղաղարարի դեր մը : «Գերմանիոյ յարաբերութիւնները , կ'ըսէ , բոլոր օտար պետութեանց հետ , չեն դադրած բարեկամական ըլլալէ : Իմ քաղաքականութիւնս առաւել քան երբեք իրեն նպատակ ունի աշխարհիս խաղաղութիւնը հետզհետէ ամրացնել : Ասոր համար է որ ջերմ համակրութեամբ ընդունեցայ իմ սիրելի բարեկամիս Ն. Վ. Ռուսիոյ կայսեր մեծանձն առաջարկութիւնը՝ միջազգային համաժողովի մը մասին , որ նպատակ պիտի ունենայ ապահովել խաղաղութեան եւ իրերու արդի կացութեան պահպանումը : » Կը մնայ դիտնալ թէ Ռուսիա , Աւստրիա եւ Անգլիա պիտի ուզե՞ն որ , հակառակ այն վտանգաւոր փտութեան որուն հասած է Տաճկաստան , «իրերու արդի կացութիւնը» անփոփոխ մնայ հին :

Վիլհէլմ , Աւստրիոյ եւ Իտալիոյ , իր երկու դաշնակիցներուն վրայ չէ ծանրացած : Այլ եւս զգումսիք մը չէ որ երբեակ նիզակակցութիւնը խախտած չէնք մըն է այսօր : Աւստրիա , ներքին խնդիրներով տկարացած , վտանգի մէջ է , եւ պալքանեան հարցին մէջ՝ համակարծիք չէ թերեւս Գերմանիոյ : Իտալիա հետզհետէ կը պաղի Գերմանիայէն , եւ Փրանսայի կը մօտենայ . ֆրանքօ-իտալական առեւտրական դաշնադիր մը կնքուեցաւ արդէն , եւ ատիկա նշան մըն է : Եւրոպական հաւասարակշռութիւնը խանգարուելու վրայ է : Նոր խմբումներ պիտի կազմուին . բայց զեռ չենք զիտեր թէ վերջնապէս ի՞նչ ձեւ պիտի առնեն այդ խմբումները եւ ո՞ր տարրերէն պիտի կազմուին :

Ամերիկա .— Միացեալ Նահանգներու Համաժողովին ուղղած նամակին մէջ , Մաք-Քինլի կը պատմէ այն պարագաները որոնք ստիպեցին ամերիկեան կառավարութիւնը պատերազմ հրատարակել Սպանիոյ դէմ : Բուպայի եւ Փիլիպինաց ազատագրումը կը յիշէ , եւ կը բացատրէ թէ հիմա , քաղաքական աշխարհին մէջ Ամերիկա ի՞նչ դեր մը սկսած է խաղալ եւ ի՞նչ պարտքեր ունի կատարելիք այդ դերը շարունակել կարենալու համար : Կը յայտարարէ Ամերիկայի բարեկամական յարաբերութիւնները Անգլիոյ հետ եւ առեւտրական համաձայնութիւնը Փրանսայի հետ : Հաւանութիւն կը յայտնէ մաս-

նակցիլ Չարին Համաժողովին, «քանի որ անիկա բարեգուշակ ջանք մըն է ազգերու բարեացակամ յարաբերութիւնները զարգացնելու համար» Մաք-Քինլիի նամակը բարձր ոգով մը տողորուած է, քաղաքականութեան նպատակ կը դնէ մարդկային ազնիւ իտէալներու իրագործումը :

Դեկտ. 16ին, Աղլանդայի մէջ արտասանուած իր մէկ ճառը այդ ոգին աւելի բացայայտ կերպով կը շեշտէ : « Ամերիկեան դրօշը, կ'ըսէ, երկու կիսագուններուն մէջ ցցուեցաւ : Անի կը մնայ խորհրդանշանը ազատութեան, օրէնքին, խաղաղութեան եւ յառաջդիմութեան : Կը ծածանի՝ կեանք պարգեւելու համար միլիոնաւոր մարդկային էակներու որոնք սպանկական դրօշին ներքեւ կը գտնուէին, եւ որոնք այսօր Ամերիկացիները ազնիւ ազգ մը կ'անուանեն եւ որ վաղը գանոնք օրհնեալ ազգ մը պիտի կոչեն : Հիմա որ մեր գերագոյն պարաքը կատարեցինք եւ քաղաքակիրթ աշխարհը մեր ընթացքը ծափահարեց, պիտի երկչոտաբար խուսափինք այն պարտականութիւններէն զոր մեր վրայ կը դնեն մեր քաջագործութիւնները » Երանի՜ թէ ամերիկեան ազգը իր պարտականութիւնները զգար բոլոր հարստահարուած ազգերուն հանդէպ, եւ լսելի ընէր իր ձայնը, որ հիմա զօրաւոր է, ի նպաստ Հայոց ալ, որոնք բարոյական կապեր ունին ամերիկեան ժողովրդին հետ :

Առ այժմ, ամերիկեան կառավարութիւնը քայլ մը կ'առնէ Հայաստանի մէջ. Էրզրումի մէջ, Ամերիկա հիւպատոս մը պիտի ունենայ այսուհետեւ, ինչպէս եւրոպական բոլոր պետութիւնները :

**Ջրնասան.** — Բայքայումը դահավիժօրէն կը յառաջանայ Չինաստանի մէջ : Պալատի յեղափոխութիւն մը պայթեցաւ, եւ ամբողջ երկիրը ապստամբութիւններով կը զզրդի : Ռուսական ազգեցութիւնը գերակշիռ կ'երեւայ այժմէն իսկ : Անգլիացիք կը համակերպին : Տեղի Բրոնիֆի վիեննայի թղթակիցը կը գրէր վերջերս թէ Չինաստանի մասին անգլո-ռուս համաձայնութեան մը յաջողման յոյսերը մեծապէս աւելցած են մեծ-գուքս Սէրկիի Ռուսաստանը այցելութենէն եւ ռուսական դեսպանին Հաթֆիլտ երթալէն ի վեր ուր երկու օր անցուցած է Սուլզպէրիի հետ : Ռուսիա արդէն տէրն է ամբողջ Մանչուրիոյ, եւ Բէքինի մէջ գերագոր է : Անգլիա հարաւային Չինաստանի մէջ ազդեցութիւն պահած է : Անգլիա պիտի շատանայ պահանջելով որ առեւտրական վտանգանոցները բաց մնան ամէն ազգերու : Նոյն պահանջը պիտի ունենան Ամերիկա, Ֆրանսա եւ Գերմանիա :

**Կեեւ.** — Սուլթանը վերջին փորձ մըն ալ ըրաւ Կրեաէի գործը վիժեցնելու համար, ազաչական հեռագիր մը զրկեց Չարին, յիշեցնելով անոր այն բարեկամական յայտարարութիւնը զոր անկից ընդունած էր թրքո-յուշական պատերազմէն անմիջապէս յետոյ, եւ խնդրելով որ ետ առնուի Եորկիոս իշխանը Կրեաէի

կառավարիչ ընտրելու որոշումը, որ սաստիկ վիրաւորիչ է իր արժանապատուութեանը համար : Չարը պատասխանեց քաղաքավար հեռագրով մը ուր կ'ըսէր թէ Եորկիոս իշխանը Կրեաէ կ'երթայ իբր բարձր յանձնակատար : Սուլթանին գերիշխանութեան տակ : Կրեաէի ինչպէր ուրեմն լուծուեցաւ վերջնապէս, եւ Թուրքին ամենէն տնտեսայ ձեւովը : Դեկտ. 21ին Եորկիոս իշխանը Կրեաէ մտաւ : Կղզիին մահմետականները, խելքերնին գլուխնին եկած, արդէն համակերպած են նոր կացութեանը, եւ համաձայն են քրիստոնեաներուն հետ՝ կանոնաւոր անկախ կառավարութեան մը կազմակերպումին արգելք չըլլալու : Ամենքն ալ կը փութան զէնքերնին յանձնել կազմակերպիչ յանձնաժողովին : Եւրոպական զօրքերը տակաւ կը քաշուին : Բայց այս ամենուն մէջ, բան մը կայ զոր պէտք չէ ուշադրութենէ փախցնել : Կրեաէի միակ կարեւոր կէտը, Սուտայի խորշը, Անգլիացուց ձեռքն է, եւ Անգլիացիք փափաք ունենալ չեն թուիր անկից ելլելու : Միջերկրականի մէջ իրենց համար նոր յենակէտ մըն է ան : Փրանսական թերթերը արդէն կը տագնապին, զգուշացնելով որ Կրեաէն ալ երկրորդ Եգիպտոս մը չըլլայ : Եւ Անգլիացիք ամէն ջանք ընելու վրայ են Կրեաէցուց զգացնելու համար թէ Կրեաէի ազատման պլանոր հեղինակը Անգլիան է : Սուլզպէրի, լորտ-քաղաքապետին հանդէսին արտասանած ճառին մէջ, շեշտեց թէ անգլիական ծովակալ Նօէլը այն անձն է որ, ո եւ է մարդկային արարածէ աւելի, յաջողուց Կրեաէի գործը : Եւ Եորկիոս իշխանը, Կրեաէ մտած օրն իսկ, Վիքթորիա թագուհիէն ընդունեցաւ ինքնապիր նամակ մը շնորհաւորութեան եւ բարի յաջողութեան մաղթանքներու :

Կրեաէի ազատումը Սուլթանը սաստիկ նեղը ձգած է. շուարած է ինչպէս բացատրութիւն տայ իր զայրացած ժողովրդին : Պոլսէն թայլօղի ուղղուած հեռագրի մը համեմատ, Սուլթանը Շէյխ-իւ-իսլամէն խնդրեր է որ նուիրագործէ Կրեաէի լքումը եւ զայն ներկայացնէ իբր մահմետական օրէնքին համաձայն իրողութիւն մը : Շէյխ-իւ-իսլամը յայտներ է որ անկարող է այդ բանը ընելու :

**Տանկասան** եւ **Արեւելեան ինկիլթ.** — Նոյ. 28ին Վիեննայէն Թաւին զրկուած հեռագրի մը համեմատ, Վիեննայի գիւտնագիտական շրջանակներուն մէջ խօսք մը կը պտըտի թէ իրենց վերջին տեսակցութեանը մէջ, կոմս Կոլուրովսքի եւ կոմս Մուրավիէֆ որոշած են պալքանեան թերակղզոյն մէջ իրերու արդի կացութիւնը բարւոքել եւ ապահովել Մակեդոնիոյ վիճակը, որ կը վտտթարանայ օրէ օր քրիստոնէից զէմ մահմետականներու յարձակմանց պատճառով, ուժ տալով այն դիմումներուն զոր Սերպիա եւ Պուլկարիա կ'ընեն Բ. Դրան : Ի հարկին, նոյն իսկ պետութեանց հետ բանակցութեան պիտի մտնեն Մակեդոնիոյ ինքնապարտութիւնը ստանալու համար, որ արդէն Կրեաէի զաշնագրին մէջ պայմանապարտուած է :

— Տասնընկնգ օր բանակցելէ յետոյ , կայսերական իրատէ մը թոյլ տուաւ վերջապէս նոյն յեմբերի վերջերը որ պուլկարական առաջին թնդանօթանաւը , Նասեժճա , Պոտո շինուած , Տարանէլէն անցնի : Պ. Մառքոֆ, Պուլկարիոյ զիւանագիտական գործակալը , Բ. Դրան ծանուցած էր որ եթէ խնդրուած արտօնութիւնը չըտրուի , թնդանօթանաւը պիտի անցնի Տարտանէլէն , առէն պատասխանատուութիւն Բ. Դրան վրայ ձգելով թէ որ Տարտանէլի ամբուսթիւնները զիմադրութիւն փորձեն :

— Նոյ. 29ին Պոլսէն Թանկին ուղղուած հեռագրի մը համեմատ , Փոքր Ասիոյ ներսերը մեծ գրգռութիւն կը տիրէ քրիստոնէից ղէմ , եւ խօսք կայ թէ Վանի մէջ շարք տեղի ունեցած է :

— Սուլթանը Շաքիր փաշան զրկեց Մակեդոնիա , քննութիւն մը բանալու համար իրերու կացութեան վրայ , որպէսզի բարենորոգումներ կատարուին , եթէ հարկ կայ . . . : Միւս կողմէ թրքական զօրադունդերը կը բազմապատկուին մակեդոնական սահմանազխտուն վրայ :

— Դեկտ. 5ին Պոլսէն Թանկին ուղղուած հեռագրի մը համեմատ , Թուրքիա Թեսալիոյ սահմանագլուխը կ'ամրացնէ մեծ եռանդեամբ : Ձանք պիտի տարուի մանաւանդ Բրեվեղայի ամբուսթիւնները զօրացնելու : Լեոներուն մէջ ճամբաներ եւ նոր անցքեր կը գծուին :

— Օտեսայէն Թայլզին ուղղուած հեռագրի մը կ'ըսէ թէ Կովկասի առօտական բանակին վրայ 11000 հոգի պիտի աւելնայ :

— Իտալական նախկին նախարարապետ Բրիտի Թրիպունա լրագրին մէջ հրատարակեց յօդուած մը որ աղմուկ հանեց . ի միջի այլոց , Բրիտի սա կէտը ի վեր կը հանէ թէ Փրանսա , Հայաստանի շարգերուն ատեն , իր Արեւելքի քրիստոնէից պաշտպանի գերը կատարելու բացարձակապէս անհոյժ գտնուած ըլլալով , հիմա Արեւելքի քրիստոնեաները աչքերնին ղէպի Ռուսիա կը դարձնեն , իրենց միակ յոյսը :

— Կրետէի մէջ իրերու նոր կացութեան վրայ խօսելով , Նոյնոյն Վոնտիս սա կարծիքը կը յայտնէ թէ Ռուսիոյ փափաքն ու պիտաւոր գործն է Արեւելքի մէջ խաղաղութեան պահպանման նպատակ : Կ'ըսէ թէ Թուրքիան , իբր ազգ , գործարանաւորութիւն մըն է որ զեռ զիմադրիչ ուժ ունի եւ կրնայ տակաւին ուղղակի հզօր յարձակման մը տակալ , բայց թէ այլ եւս անկարող է զիմադրել եւրոպական համաձայնութեան գնդասեղի հարուածներուն : Ռուս լրագիրը կ'աւելցնէ թէ Ս. Բեդերսպուրկի կառավարութիւնը Թուրքիոյ ջախջախումը չի ցանկար , բայց պիտի չխուսափի , երբ ատենը գայ , քրիստոնեաներուն իրաւունքները պաշտպանել Սուլթանին մօտ , այդ կէտին վրայ գործելով իր յատուկ դատողութեան համեմատ եւ պէտքերուն սահմանադրած չափովը : — Ե՞րբ պիտի գայ այդ «ատեն» , եւ ի՞նչ պիտի ըլլայ այդ «չափ»ը . ու մինչեւ ե՞րբ քրիստոնեաները պիտի տառապին , սպասելով այս յաւիտենական

հարցմանց պատասխանին :

— Գերմանական այցելութենէն անմիջապէս յետոյ , Կ. Պոլիս կ'ընդունի առօտական այցելութիւն մը : Իէպըր ամենամեծ կարեւորութիւն ունի : Դեկտ. 18ի օրը , Պոլիս հասաւ մեծ-դուքս Նիքոլա , իր ուղեւորութիւն իբր նպատակ ունենալով յիշատակարանի մը բացումն ի Կալազարիա , Սան Սթէֆանոյի մօտ , ի պատիւ 1877ին թրքօ-ռուսական պատերազմին մէջ ինկած ռուս զինուորներուն : Այդ յիշատակին հանդիսաւոր վերարժարձումը չափազանց անխորժ ըլլալու է Թուրքերուն : Վիլհէլմի բարեկամական պտոյտին երկրորդ օրն իսկ , Ռուսիա Սուլթանը կը թօթվէ իր երջանիկ թմբուսթենէն իր պարտութեանը յիշատակը ցցելով անոր աչքին : Յիշատակարանը , որուն կառուցումը 1883ին սկսաւ , կը բազկանայ գեանադամբանէ մը ուր կը հանգչին զինուորներուն սակերտաիքը , եկեղեցիէ մը , մատուռէ մը եւ մեծ զանգակատունէ մը որուն կատարը խոշոր խաչակիր գունդ մը կայ : Դեկտ. 19ի օրը եկեղեցոյն նուիրագործուած տեղի ունեցաւ կրօնական արարողութեամբ եւ շրջով մը Ներկայ էին Պոլսոյ առօտական ղեսպանը , Յունաստանի , Սերպիոյ , Մոնղէնէկոյի , Պուլկարիոյ ներկայացուցիչները եւ Սոպրանիէին անդամներէն եօթը հոգի : Բազմաթիւ Պուլկարներ եկած էին հանդիսատես ըլլալ այս առիւն , որ կերպով մը իրենց ազատագրութեան տարեդարձի հանդէսն էր : Բաց ի մեծ-դուքսին հետեւորդ Թուրք սպաներէն , ոչ մէկ Թուրք պաշտօնեայ ներկայ չգտնուեցաւ : Բայց այս հանդէսէն առաջ , մեծ-դուքսը գնաց Երլազ-Քէօզկ Սուլթանին հետ տեսակցելու : Թան կը կարծէ թէ այս այցելութիւնը Սուլթանին հետ Ռուսիոյ բարեկամական յարաբերութիւնները ամրապնդելու նպատակ ունի , եւ , Գերմանիոյ ծաւալական ազդեցութեան առջեւ , Սուլթանին քով առօտական ազդեցութեան կորուստը դարմանելու : Չարմանալի է , այդ պարագային , որ այս խաղաղական նպատակին իբր պատրուակ ընտրուած ըլլայ Սուլթանին համար շատ անխորժ առիթ մը : Եւ ի՞նչ տխուր բան կ'ըլլար եթէ , Կրետէի մէջ Սուլթանին հետ վարուելէ յետոյ միակ գործնական եւ վայելուչ եղանակով , հիմա յանկարծ , ճիշդ այն պահուն ուր Արեւելքի քրիստոնեաներու պաշտպանութիւնը վերստանձնել կը յայտարարէ Ռուսիա , փաղաքշական ու քաղաքավարական միջոցներու զիմէր վերստին : Յամառինք հաւատալ , — առանց ոչ մէկ կանխակալ կարծիք չինելու , ինչ որ անկարելի է արգի զիւանագիտութեան արտակարգ փոփոխականութեան մէջ , — թէ Նիքոլա մեծ-դուքսին այցելութիւնը վերջին ազդարարութիւն մըն է Սուլթանին , որմէ յետոյ , եթէ չանսայ տրուած խորհուրդներուն , պիտի ձեռք առնուին այն միջոցները որոնց առջեւ Սուլթանը սովոր է տեղի տալ :

Զինարարութեան վեհաժողովը . — Ազնիւ հրաւէրը որով Չարը եւրոպական պետութիւններուն առաջարկեց միջոցներ խորհիլ սպառա-

զինման ծայրայեղ զարգացման առաջին անհե-  
լու, եւ որ նախ զարմանք ու տարակուսանք  
պատճառեց՝ պղատոնական հիացման մը հետ,  
կը սկսի իրականանալի գործի մը ձեւն առնել  
եւ կարեւոր աջակցութիւններ վաստկիլ առա-  
ջուց։ Տարակոյս չկայ որ Ռուսիոյ համար զը-  
րապէս շահաւոր է այդ ձեռնարկին յաջողումը։  
Ռուսիա որոշած ըլլալ կը թուի խաղաղական  
միջոցներով իր տիրապետութիւնը յառաջ տա-  
նիլ Չինաստանի եւ թերեւ Տաճկաստանի ալ  
մէջ։ Գերմանիա, յայտարարելով հանդերձ Վիլ-  
հելմի բերնով թէ պէտք է կատարելագործել  
բանակը եւ ընդարձակել նաւային զօրութիւնը,  
Չարին առաջարկին իրագործմանը համար իր օ-  
ժանդակութիւնը կը խոստանայ, պայմանով որ  
իրմէ անհնարին զոհողութիւններ չպահանջուին  
(ակնարկութիւն Ալլաւ-Լոռէնի խնդրոյն)։ Եւ  
իրօք ալ Գերմանիա այլ եւս փափաք չունի  
պատերազմ հրատարակելու. իր ներքին մեծու-  
թիւնը ամբողջապէս իրականացուցած է եւ  
կ'ուզէ հիմա առեւտրական ծաւալումը զարգա-  
ցնել. եւ շահաւոր է իրեն համար որ Եւրոպա  
խաղաղութեան կողմը հակի։ Իտալիա նմանա-  
պէս փափաքող է խաղաղութեան հաստատման.  
սպառազինման ծախքերը իր մեծագոյն վէրքն  
են, եւ անոնցմէ թեթեւեալը փրկութեան ճամ-  
բան է իրեն համար։ Ֆրանսա, որ հակառակ իր  
չովհններուն ազմուկին, յոյսը կտրած է Ալլաւ-  
Լոռէնէն եւ որ ստիպուած է արդէն իր դաշ-  
նակցին հետեւիլ այս կարեւոր ձեռնարկին մէջ,  
սպառնովապէս պիտի չլինայէ իր ճիգերը այդ  
ձեռնարկին յաջողմանը համար, որմէ ինքն ալ  
չահ կրնայ ունենալ։ Պահպանողական ճիւղի  
Անգլիան, որ գրաւելու, տիրելու ախտէն նորէն  
բռնուած է այս վայրկեանիս, հեղնական աչ-  
քով մը նայեցաւ Չարին առաջարկին, բայց  
ազատական Անգլիան սրտանց կը համակրի այդ  
հրաւերին, եւ ամէն ջանք կը խոստանայ ա-  
ջակցելու։ Պ. Սթէտ, Րիլիոս օլ Րիլիոսը հան-  
դէսին տնօրէնը, մեծ միթիւնկ մը գումարեց այս  
օրերս Լոնտոնի մէջ, հրաւիրելով ազատական  
Անգլիացիները Չարին առաջարկին յաջողման  
նպատակելու համար։ Պ. Սթէտ նոյն իսկ կերպով  
մը մաս ունի եղեր Չարին գաղափարին յղաց-  
ման մէջ։ Պ. Սթէտ շատոնց խաղաղութեան  
հաստատման ի նպաստ ջանքեր կը փորձէր։  
Նիքոլա Բ. ի հետ, երկու անգամ առիթ ունեցաւ  
տեսակցելու, եւ իր գաղափարները յայտնեց ա-  
նոր։ Չարը, որ փափուկ սիրտ մը կը միացնէ  
ազատագի դաստիարակութեան մը, արդէն ձգ-  
տումներ ունէր խաղաղարար գործունէութեան  
մը ձեռնարկելու։ Այդ գաղափարին հասունա-  
լուն նպատեց միանգամայն ընդարձակ աշխա-  
տութիւն մը, ղեռ անտիպ, Պիլոք անուն ռուս  
հեղինակի մը, որ մաթեմատիկական հաշիւնե-  
րով սպացուցած է, սպառազինութեանց արդի  
ծայրայեղ կատարելագործութեան հետեւանքով  
մեծ պետութեանց միջեւ պատերազմի մը ան-  
հնարաւորութիւնը, եւ եզրակացուցած է թէ  
այդ պարագային անիմաստ է սպառազինումը

չարունակել եւ նորանոր ծախքերով բեռնաւո-  
րել ժողովուրդները։ Չարը սրտեց իր հրաւերը  
ուղղել պետութեանց։ Պ. Սթէտ, որ մեծ ազ-  
դեցութիւն ունի Անգլիոյ մէջ, եւ որ չափա-  
զանց գործնական մարդ մըն է, խոստացած էր  
Չարին Արեւմտեան Եւրոպայի հանրային կար-  
ծիքը բորբոքել ի նպաստ այդ գաղափարին.  
Իր աջակցութիւնը մեծ արժէք ունի, ինչպէս  
Թան կը յայտարարէ. իր առաջին միթիւնկը, ո-  
րուն համակրական նամակներ զրկած էին Պալ-  
ֆուր, Ճորճ Համիլթոն, Ճոն Մորլի, Էլլի, ահա-  
գին յաջողութիւն ունեցաւ։ Սթէտ մտադիր է  
«խաղաղութեան ուխտագնացութիւն» մը կազ-  
մակերպել. իրեն համակարծիք քանի մը կարե-  
ւոր Անգլիացիներ պիտի գտնէ, պիտի գայ Բա-  
րիլ միթիւնկներ տալ, համախոհներ պիտի ժողովէ,  
Ֆելիքս Ֆոֆին պիտի ներկայանայ եւ հաւանու-  
թիւնն առնէ, յետոյ այդ խումբը պիտի մեկնի  
Վիեննա, Հոմ, Պերլին, եւ, ստուարացած,  
պիտի հասնի Ս. Բեդերսպուրկ, Վեհաժողովին  
տանելու համար Եւրոպայի հանրային ազատ  
կարծիքը ներկայացնող պատգամաւորութիւն մը։  
Յաջողի կամ ոչ, Պ. Սթէտի գաղափարը գեղե-  
ցիկ ու բանաստեղծական է, ինչպէս նոյն իսկ  
Չարին ձեռնարկը, որ ինչ արդիւնք ալ ունե-  
նայ, ժամանակակից պատմութեան ամենէն  
վեհ էջերէն մէկը պիտի կազմէ։ Բայց թերեւս  
պատշաճ ու նոյն իսկ անհրաժեշտ է որ այդ  
խաղաղասէրներու ուխտագնացութեանը մաս-  
նակցէին քանի մը սգաւոր հայ մայրեր...


«ԱՆԱՀԻՏ»Ը ԲԱՐԻՉԵԱՆ ՄԱՄԼՈՅՆ ՄԷՋ

Ռիլի Պրիտէն եւ Մեոֆիառ քը Ֆոսեսէն յե-  
տոյ, Իւմանիքե Նուլիք միջազգային մեծ հան-  
դէսը իր վերջին թուոյն մէջ համակրու-  
թեամբ կը յիշատակէ Անանիսի երեւումը, եւ  
կը հրատարակէ ամփոփում մը Ա. Թիւրին ա-  
ռաջնորդող յօդուածին, ինչպէս նաեւ Տր. Քո-  
լոլեանի ուսումնասիրութեան։ Իւմանիքե Նուլիք  
խնդրած է մեր աշխատակից Օր. Զ. Յովհան-  
նէսեանէն, որ միանգամայն կ'աշխատակցի այդ  
ամսաթերթին, Անանիսի իւրաքանչիւր թուոյն  
պարունակութեանը ամփոփում մը տալ իրեն։

Ռիլի Անանիսիքի իր դեկտ. 24ի թուով  
հրատարակեց, Լատուսի բառարանին սխալակ-  
ներուն մէջ, յօդուածիկ մը Անանիսի մասին,  
եւ Պ. Շահինի ճակատանկարը՝ վերածուած։

Նմանապէս, Էօլիքը s'առ գեղարուեստական  
հանդէսը դր կը վարէ ծանօթ գեղեցիկագէտ Պ.  
Էօթէն Միւնց, այս օրերս կը հրատարակէ մեր  
ճակատանկարը եւ մանրամասն յօդուած մը Ա-  
նանիսին եւ այդ առիթով Բարիլի հայ գաղ-  
թականութեան վրայ։

Le gérant : Georges WALINE



Պատասխանատուութիւնները . . . . .	ԱՐՇԱԿ ԶՊՊԱՆՆԱՆ
«Անահիտ» եւ հայ երիտասարդութիւնը . . . . .	ՄՄԲԱՏ ՇԱՀՍՉԻ ԶԵԱՆՑ
Անճնաստան տղաքներ . . . . .	ԶԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
Ուրուաղիճներ . . . . .	ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ
Մեկնում . . . . .	ՏԵՐՎԻՇ
Խամսին . . . . .	ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՍՎԱՃԵԱՆ
Մտաւորական կեանքէն . . . . .	Ա. Զ.
Օձակոչը . . . . .	ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ
Ազգային քրոնիկ . . . . .	
Քաղաքական կացութիւնը . . . . .	

Ա Չ Դ

Վերջին անգամ ըլլալով կը խնդրենք այն բոլոր անձերէն որ զիս իրենց բաժանորդագիրը չեն վճարած՝ կամ վճարել զայն խնդրել եւ կամ եւ դարձրել *Անահիտի* առաջին երկու քիւերը, որոնց անհրաժեշտ պէտք ունին : Ոմանք միմիայն երկուրդ քիւր դարձուցած են . կը յիշեցնենք որ առաջինն ալ պէտք է դարձրնեն :

Մեզի հաղորդուեցաւ թէ մեր Բարեգի ազգակիցներէն շատեր կը սպասեն եղբւր որ մէկ կը գրենք իրենց՝ բաժնեգիրները գանձելու համար . կը ծանուցանենք որ այդպիսի պատահեալ մը չունինք, եւ կը խնդրենք որ *մանսա-սր-քոսոյ*ով հանին գրել իրենց բաժանորդագիրը :

Շնորհակալ ենք մեր բոլոր այն շնորհակցներուն որոնք կը փափաքին աւելի ընդարձակուած տեսել *Անահիտի* ծաւալը . մեր փափաքն ալ է ափիս . արդի ծաւալով շատ էր թան կրնանք իրականացնել մեր ծրագրէն, եւ շատ մը յօդուածներ տպուած ենք սպասցնել : Նմանապէս պատահուած ենք օգուտ չհաղել այն սիրուն առաջարկութիւններէն որով հայ արուեստագէտներ կը փափաքին աւելաստեղծել մեզի զեղարուեստական բաժինը նոխացնելու համար : Մեր միջոցները առ այժմ չեն ներեւ այդ զեղեցիկ փափաքներուն զոնացում տալու : *Անահիտի* ծաւալին ընդարձակուածք եւ արտաքին փայլին յաւելումը կախում ունինք բաժանորդներու բուռն քաջնապատկաճէն եւ միանգամայն արդէն գոյութիւն ունեցող բաժանորդներուն վճարման կանոնաւորութիւնէն :

Տեղի նաւագութեան պատճառով տպագրուեցանք յաջորդ բուռն բողոք *Վարդ եւ Սոխակ* սպարանութեան եւ Ֆրայէի միպակիւն շարունակութիւնը :

Մեր ընթերցողներն ու նեաւար բարեկամները կարելու ծառայութիւն մը մատուցած կ'ըլլան *Անահիտի*, երբ հանին մեզի գրելով, ազգային *ֆրոնտի*ի բաժնին համար, իրենց տեղական կեանքէն՝ ընդհանուր հայ հասարակութիւնը շահագրգռելու բնութիւն ունեցող նաեւ եւ տեղեկութիւններ :

« ԱՆԱՀԻՏ » Ի ԲՍԺԱՆՈՐԴՍԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*Անահիտ* պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ, եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա), 20 սէնդ (Ամերիկա), 1 ֆր. 25 (օտար երկիրներ) :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 5 րուպլ (Ռուսիա), 2 տոլար (Ամերիկա) . Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 2, 50 րուպլ (Ռուսիա), 1 տոլար (Ամերիկա) :

Բաժանորդագիրը կանխիկ է՝

Ռուսմանիոյ, Պարսկաստանի եւ Պուլկարիոյ համար *Անահիտի* գործակալն է Պ. Գառնիկ Տէօքմէճեան (Ռուսչուք, Պուլկարիա) :

Չեռագիրները եւ չեն դարձուիր : Կ'ընդունուին ամէն տեսակ ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագիրն գրելի առ Ա. Չօպանեան, 6, Place de l'Odéon, Paris.